Ձեռնարկը նախատեսված է ինչպես արդարադատության իրականացման գործընթացում ներգրավված անձանց (մասնավորապես ՀՀ քննչական կոմիտեի քննիչների, ինչպես նաև դատախազների և դատավորների), այնպես էլ այդ թեմայով դասավանդողների համար՝ ՄԻԵԿ և ՄԻԵԴ նոր իրավական դիրքորոշումների, Եվրոպայի խորհրդի անդամ պետությունների լավագույն փորձի վերաբերյալ գիտելիքներ հաղորդելու և դրանց կիրառման հմտությունները կատարելագործելու նպատակով: Այն մշակվել է՝ հաշվի առնելով խոցելի մեղադրյալների, տուժողների և վկաների, մասնավորապես անչափահասների, վատ վերաբերմունքից տուժածների և ընտանեկան կամ սեռական բռնությունից տուժածների իրավունքի պաշտպանության վերաբերյալ ՄԻԵԿ, Եվրոպայի խորհրդի առաջատար պետությունների և ՄԻԵԴ արդի նախադեպային իրավունքը և ներպետական դատական պրակտիկայում դրա կիրառման հիմնահարցերը:

ARM

Եվրոպայի խորհուրդն առաջատարն է մայրցամաքում մարդու իրավունքներով զբաղվող կազմակերպությունների շարքում: Եվրոպայի խորհրդին անդամակցում են 47 պետություններ, որոնցից 28-ը միաժամանակ նաև Եվրոպական միության անդամներ են: Եվրոպայի խորհրդի անդամ բոլոր պետությունները ստորագրել են Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների եվրոպական կոնվենցիան՝ որպես մարդու իրավունքների, ժողովրդավարության և օրենքի գերակայության պաշտպանությանը նպատակաուղղված միջազգային համաձայնագիր: Մարդու իրավունքների եվրոպական դատարանը վերահսկում է անդամ պետությունների կողմից Կոնվենցիայի դրույթների կատարումը:

www.coe.int

Եվրոպական միությունը 28 եվրոպական ժողովրդավարական երկրների տնտեսական և քաղաքական յուրահատուկ գործընկերություն է՝ իր 500 միլիոն քաղաքացիների համար առավել արդար և ապահով աշխարհում խաղաղություն, բարգավաճում և ազատություն ապահովելու նպատակով: Այս ամենն իրագործելու համար ԵՄ երկրները հիմնել են մարմիններ՝ ԵՄ աշխատանքներն իրականացնելու և նրա օրենսդրությունն ընդունելու համար: Նրա հիմնական մարմիններն են Եվրոպական խորհրդարանը (որը ներկայացնում է Եվրոպայի ժողովրդին), Եվրոպական միության խորհուրդը (որը ներկայացնում է ազգային կառավարությունները) և Եվրոպական հանձնաժողովը (որը ներկայացնում է ԵՄ ընդհանուր շահերը):

http://europa.eu

Funded
by the European Union
and the Council of Europe

EUROPEAN UNION

COUNCIL OF EUROPE
CONSEIL DE L'EUROPE

Implemented
by the Council of Europe

Դավիթ Թումասյան
Ուլյն Յորդաշ

Խոցելի տուժողների/վկաների և կասկածյալների մասնակցությամբ իրականացվող քննությունը

http://eap-pcf-eu.coe.int

Programmatic Cooperation Framework for
Armenia, Azerbaijan, Georgia, Republic of Moldova, Ukraine and Belarus

Funded
by the European Union
and the Council of Europe

EUROPEAN UNION

COUNCIL OF EUROPE
CONSEIL DE L'EUROPE

Implemented
by the Council of Europe

Դավիթ Թումասյան
Ուեյն Յորդաշ

Խոցելի տուժողների/վկաների և կասկածյալների մասնակցությամբ իրականացվող քննությունը

ԵՐԵՎԱՆ 2017

Սույն ձեռնարկը պատրաստվել է Եվրոպական միության և Եվրոպայի խորհրդի համատեղ «Աջակցություն Հայաստանում քրեական արդարադատության համակարգի բարեփոխումներին և պայքար վատ վերաբերմունքի և անպատժելիության դեմ» ծրագրի միջոցներով: Սույն ձեռնարկում ներկայացված տեսակետները որևէ ձևով չեն արտահայտում Եվրոպական միության կամ Եվրոպայի խորհրդի պաշտոնական տեսակետները:

© Եվրոպայի խորհուրդ
© Արդարադատության ակադեմիա

Բովանդակություն

Դաս 1. Ներածություն 4
Թեմա 1. Խոցելի անձանց մասնակցությամբ քննության ընթացքում մարդու իրավունքների դերը. ներածություն 4
Թեմա 2. Խոցելի անձանց հետ աշխատանքի անհատականացված և ճկուն մոտեցումների անհրաժեշտությունը 14
Դաս 2. Խոցելի տուժողների/վկաների մասնակցությամբ իրականացվող քննությունը 31
Թեմա 1. Պաշտպանության կարիք ունեցող անձանց խմբերը 31
Թեմա 2. Լրացուցիչ պաշտպանության ենթակա իրավունքները 34
Թեմա 3. Խոցելի տուժողների և վկաների մարդու իրավունքների պաշտպանությունն ապահովող քննչական մեթոդաբանությունը 50
Դաս 3. Խոցելի կասկածյալների մասնակցությամբ իրականացվող քննությունը 83
Թեմա 1. Պաշտպանության կարիք ունեցող անձանց խմբերը 83
Թեմա 2. Լրացուցիչ պաշտպանության ենթակա իրավունքները 85
Թեմա 3. Խոցելի կասկածյալների մարդու իրավունքների պաշտպանությունն ապահովող քննչական մեթոդաբանությունը 92
Օգտագործված գրականության ցանկ 117
Հավելված. Նախադեպային որոշումների ցանկ 123

ԴԱՍ 1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

ԹԵՄԱ 1. ԽՈՑԵԼԻ ԱՆՁԱՆՑ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՄԲ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԴԵՐԸ. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Իրավական պետության կարևորագույն սկզբունքներից է պետության և քաղաքացու փոխադարձ պատասխանատվությունը: Քրեական դատավարության ոլորտում այս սկզբունքի դրսևորման եղանակ է դատավարությանը մասնակցող անձանց նկատմամբ պետական պաշտպանության միջոցների ձեռնարկումը[1]: Բայց անձանց որոշակի շրջանակ հատուկ պաշտպանության կարիք ունի՝ ելնելով տարիքից, սեռից, իրավական կամ սոցիալական կարգավիճակից կամ այլ հանգամանքներից:

Խոցելի վիճակում գտնվող անձանց, մասնավորապես դատավարական կարգավիճակ ունեցող անձանց (տուժող, վկա, կասկածյալ, մեղադրյալ) կարիքների ճիշտ գնահատումը և հետևաբար նրանց իրավունքների արդյունավետ պաշտպանությունը ցանկացած զարգացած պետության և քաղաքացիական հասարակության կարևորագույն խնդիր են:

Տարբերակված մոտեցումը հիմնավորվում է ոչ միայն այն փաստով, որ անձն առնչվում է օրենքի հետ (կա՛մ խախտելով այն, կա՛մ նրա իրավունքների խախտման արդյունքում, կա՛մ խախտմանն ականատես լինելով), այլ նաև այն պատճառով, որ նա ի սկզբանե հատուկ հոգածության, օգնության կամ օժանդակության կարիք ունի: Հատուկ հոգածության, օգնության կամ օժանդակության կարիքը պայմանավորված է տարբեր հանգամանքներով, մասնավորապես տարիքով, առողջական վիճակով, հաշմանդամությամբ, հոգեվիճակով, սեռով, ազգությամբ, կրոնով, իրավական կարգավիճակով և այլ հանգամանքներով:

Ի սկզբանե պետք է նշել, որ **բացարձակ խոցելիություն գոյություն չունի,** և այն պայմանավորված է արտաքին և ներքին տարբեր գործոնների ազդեցությամբ, սակայն որոշ հանգամանքների խոցելի լինե-

[1] Արդարադատության մատչելիության հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում (գիտագործնական վերլուծություն), Խմբագիր՝ Դ. Ավետիսյան, Վ. Ենգիբարյան, Երևան, 2013, էջ 150:

լու հավանականությունն անհամեմատ մեծ է: Օրինակ՝ երեխան միշտ համարվում է խոցելի և պահանջում հատուկ վերաբերմունք՝ անկախ նրանից նա ունի տուժողի, վկայի, կասկածյալի, թե մեղադրյալի կարգավիճակ, իսկ միգրանտը պարտադիր չէ, որ միշտ լինի խոցելի: Իհարկե, բոլոր դեպքերում անգամ այս կատեգորիայի անձանց նկատմամբ պետք է ցուցաբերվի զգայուն մոտեցում:

Պետությունը մի շարք դեպքերում պարտավորեցնում է անձին մասնակցել քրեական դատավարությանը: Օրինակ՝ հանցագործության ականատեսը քրեական պատասխանատվության ենթարկվելու սպառնալիքի ներքո պարտավոր է ցուցմունքներ տալ, նույնիսկ այն դեպքում, երբ դա կարող է վտանգավոր լինել ականատեսի և նրա մերձավորների համար: Նման դեպքում պետությունը միաժամանակ պետք է ստանձնի դատավարական պարտականությունները կատարած անձի անվտանգության ապահովման պարտականությունը[2]:

Քրեական դատավարության մասնակիցների պաշտպանությունը ոչ միայն ուղղված է մասնակիցների իրավունքների պաշտպանությանը, այլ նաև գործի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննությունն արդարադատության գրավականներից մեկն է: Խոցելի խմբերի ներկայացուցիչների պարագայում դա առավել ցայտուն է: Ըստ Վ. Գոնչարովի և Վ. Կոժևնիկովի՝ «**եթե պետությունը չի կարող ապահովել դատավարությանը մասնակցող անձանց անվտանգությունը**, **ապա վարույթն իրականացնող մարմնի պահանջը՝ կատարել քրեադատավարական պարտականություններ** (**օրինակ՝ ցուցմունք տալ**), **համարվում է ոչ իրավաչափ**»[3]:

Եթե վարույթ իրականացնող մարմինները կամ ոստիկանությունը, տեղեկացված լինելով կոնկրետ անձի կյանքի նկատմամբ ոտնձգության փորձի հնարավորության մասին, չեն (չի) ձեռնարկում նրա անվտանգության ապահովման արդյունավետ միջոցներ, որի հետևանքով

---

[2] Երեմյան Ա., Ղամբարյան Ա., Հայաստանի Հանրապետության քրեական դատավարությանը մասնակցող անձանց պետական պաշտպանությունը, Երևան, 2006, էջ 14; ՀՀ քրեական դատավարություն, Մաս 1, Գիտական խմբագիր՝ Ա. Ղամբարյան, Երևան, 2016, էջ 315:

[3] Гончаров В. Б., Кожевников В. В., Проблемы безопасности участников уголовного процесса, Государство и право, 2000, № 2, էջ 54–55:

տվյալ անձը սպանվում է, ապա կարելի է վիճարկել պետության կողմից Մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի[4] 2–րդ հոդվածի (կյանքի իրավունք) խախտում: Մարդու իրավունքների եվրոպական դատարանը[5] նշված հարցին անդրադարձել է Օսմանն ընդդեմ Մեծ Բրիտանիայի 28.10.1998 թ. գործով վճռում: Այդ գործով ՄԻԵԴ–ը նշել է, որ մարդու կյանքի իրավունքի պահպանության ապահովման պարտականությունը ներառում է ոչ միայն քրեական օրենսդրության ստեղծումը և դրա արդյունավետ կիրառումը, այլև կյանքի պաշտպանության նախականխիչ միջոցների հիմնումը: Անձի կամ անձանց պաշտպանությանն ուղղված նախականխիչ միջոցառումների ձեռնարկման պետության պոզիտիվ պարտականությունը ծագում է այն դեպքում, երբ իշխանությունները գիտեին կամ պարտավոր էին իմանալ մարդու կյանքի իրական և անմիջական ռիսկի գոյության մասին, որը կապված է երրորդ անձանց հանցավոր գործողությունների հետ: Նման հանգամանքներում, եթե իշխանությունն իր իրավասությունների շրջանակներում չի ձեռնարկում միջոցառումներ, որոնք կարող էին օգնել խուսափել ռիսկից, ապա դա կդիտվի կյանքի իրավունքի խախտում: ՄԻԵԴ–ը նշել է, որ այս դեպքում դիմողը պետք է միայն ապացուցի, որ պետությունը չի ձեռնարկել ողջամտորեն ակնկալվող այն միջոցառումները, որոնք նպատակ ունեին խուսափել իրական և անմիջական ռիսկից[6]:

ՄԻԵԿ–ով պաշտպանության տակ են առնվում հետևյալ իրավունքները.

1. **Կյանքի իրավունք** (2–**րդ հոդված**),
2. **Խոշտանգումների արգելում** (3–**րդ հոդված**),
3. **Ստրկության և հարկադիր աշխատանքի արգելում** (4–**րդ հոդված**),
4. **Ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունք** (5–**րդ հոդված**),

---

[4] Այսուհետ՝ ՄԻԵԿ:

[5] Այսուհետ՝ ՄԻԵԴ:

[6] Бессарабов В. Г., Быуова Е. В., Курочкина Л. А., Европейские стандарты обеспечения прав и свобод человека и гражданина в российском уголовном процессе, М., 2005, էջ 54–55; Стандарты Европейского суда по правам человека и российская правоприменительная практика, Сб. аналитических статей, Под ред. М. Р. Воскобитовой, М., 2005, էջ 71:

5. **Արդար դատաքննության իրավունք** (6–**րդ հոդված**),
6. **Պատիժ՝ բացառապես օրենքի հիման վրա** (7–**րդ հոդված**),
7. **Անձնական և ընտանեկան կյանքը հարգելու իրավունք** (8–**րդ հոդված**),
8. **Մտքի**, **խղճի և կրոնի ազատություն** (9–**րդ հոդված**),
9. **Արտահայտվելու ազատություն** (10–**րդ հոդված**),
10. **Հավաքների և միավորման ազատություն** (11–**րդ հոդված**),
11. **Ամուսնության իրավունք** (12–**րդ հոդված**),
12. **Իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունք** (13–**րդ հոդված**),
13. **Խտրականության արգելում** (14–**րդ հոդված**):

ՄԻԵԿ–ը պահանջում է բոլոր իրավունքների անխտիր կիրառումը, բացառությամբ դրանց **այն սահմանափակումների**, **որոնք նախատեսված են ՄԻԵԿ–ով**, **այլ կոնվենցիաներով կամ, եթե դա վերապահված է ՄԻԵԿ–ով, ազգային օրենսդրությամբ**[7]:

Քրեական դատավարությունում «պաշտպանություն» եզրույթն ընկալվում է ոչ միայն ընդլայնված, այլ նաև նեղ իմաստով՝ որպես մեղադրանքի կողմի գործառույթին հակադիր գործունեություն: Այլ կերպ ասած՝ պաշտպանությունը պաշտպանության կողմի՝ մեղադրյալ, կասկածյալ,

[7] ՄԻԵԿ–ը թույլատրում է վերը նշված իրավունքների պաշտպանության ոլորտում շեղում միայն արտակարգ իրավիճակներում: Մասնավորապես պատերազմի կամ ազգի կյանքին սպառնացող այլ արտակարգ դրության ժամանակ ցանկացած պետություն կարող է ձեռնարկել միջոցառումներ՝ ի շեղում ՄԻԵԿ–ով ամրագրված իր պարտավորությունների՝ բացառապես այնքանով, որքանով դա պահանջում է դրության լրջությունը՝ պայմանով, որ նման միջոցառումներն անհամատեղելի չեն միջազգային իրավունքով ստանձնած նրա մյուս պարտավորությունների հետ: Բոլոր դեպքերում անվերապահորեն պահպանվում են՝
– կյանքի իրավունքը, բացառությամբ պատերազմական օրինական գործողությունների հետևանքով մարդկային զոհերի կապակցությամբ,
– խոշտանգումների արգելքը,
– ստրկության և հարկադիր աշխատանքի արգելքը,
– պատիժ սահմանելը բացառապես օրենքի հիման վրա:
Սակայն եթե պետությունն օգտագործում է շեղվելու այս իրավունքը, այն ԵԽ Գլխավոր քարտուղարին ամբողջությամբ պետք է ներկայացնի իր կիրառած միջոցառումների և դրանք կիրառելու դրդապատճառների մասին: Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղարը ծանուցվում է նաև այդ միջոցառումների գործողությունը դադարեցնելու և Կոնվենցիայի դրույթների լիակատար իրագործումը վերսկսելու մասին:

պաշտպանական գործունեությունն է: ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի[8] 6–րդ հոդվածի 28–րդ կետում «պաշտպանություն» եզրույթը նույնպես օգտագործվում է նեղ իմաստով, այն է՝ դատավարական գործունեություն, որն իրականացնում է պաշտպանության կողմը՝ նպատակ ունենալով հերքելու մեղադրանքը կամ մեղմացնելու պատասխանատվությունը, պաշտպանելու այն անձանց իրավունքները և շահերը, ում վերագրվում է քրեական օրենսգրքով չթույլատրված արարքի կատարումը, ինչպես նաև նպաստելու ապօրինի քրեական հետապնդման ենթարկված անձանց իրավունքների վերականգնմանը[9]:

Եզրույթների խառնաշփոթից խուսափելու նպատակով սույն ձեռնարկում կօգտագործվի նաև «հատուկ պաշտպանության միջոց» հասկացությունը:

Սույն ձեռնարկում ներկայացվող ընթացակարգերն ու առանձնահատկությունները քննարկվելու են խմբավորված՝ որպես տուժող կամ վկա, ինչպես նաև կասկածյալ կամ մեղադրյալ հանդիսացող անձանց իրավունքների պաշտպանություն:

«Հանցագործության զոհերի պաշտպանության, աջակցության և իրավունքների նվազագույն չափանիշների հաստատման մասին և ԵՄ թիվ 2001/220/JHA շրջանակային որոշման փոխարինման մասին» Եվրախորհրդարանի և Եվրոպական միության[10] խորհրդի թիվ 2012/29/ԵՄ հրահանգի[11] 25–րդ հոդվածի համաձայն՝ բոլոր այն պաշտոնատար անձինք, ովքեր կարող են անձամբ շփվել հանցագործության զոհերի հետ, պետք է պետության կողմից անցնեն ընդհանուր և մասնագիտական վերապատրաստում՝ հասցնելով պատրաստվածության այն մակարդակի, որը թույլ կտա նրանց պատկերացում կազմել հանցագործության զոհերի կարիքների մասին, ցուցաբերել անկանխակալ, հարգալից և մասնագիտական վերաբերմունք:

Ենթադրյալ հանցագործների պարագայում, բացի հարգալից վերաբերմունքից, առաջնահերթ կարևորվում է նաև անմեղության կան-

---

[8] Այսուհետ՝ քր. դատ. օր.:

[9] ՀՀ քրեական դատավարություն, Մաս 1, Գիտական խմբագիր՝ Ա. Ղամբարյան, Երևան, 2016, էջ 316–317:

[10] Այսուհետ՝ ԵՄ:

[11] Այսուհետ՝ Հրահանգ:

խավարկածի ապահովումը, հետևաբար այն պաշտոնատար անձինք, ովքեր կարող են անձամբ շփվել կասկածյալների կամ մեղադրյալների հետ, նույնպես պետք է անցնեն ընդհանուր և մասնագիտական վերապատրաստում՝ ցուցաբերելով անկանխակալ, հարգալից և մասնագիտական վերաբերմունք:

Վարույթ իրականացնող մարմնի առջև դրված է լրջագույն խնդիրներից մեկը՝ ապահովել մարդու իրավունքների հավասարակշռված պաշտպանություն՝ անկախ որևէ հանգամանքից, առավել ևս դատավարական կարգավիճակից: Հաշվի առնելով տուժողի և կասկածյալի կամ մեղադրյալի «հակադրումը»՝ կախված տրված ցուցմունքի բովանդակությունից՝ վկաների այս կամ այն կողմին «աջակցելը» և այլ նմանատիպ իրավիճակները՝ քննիչը պետք է զերծ պահի տուժողին «երկրորդային զոհացումից» և միևնույն ժամանակ ապահովի կասկածյալի/մեղադրյալի պաշտպանության իրավունքը: Այս երկու արժեքների հավասարակշռված պաշտպանությունը պետք է հանդիսանա կոնկրետ քրեական գործի քննության և առանձին քննչական գործողությունների պլանավորման անկյունաքար:

Ամբողջ աշխարհում կարևորվում են համագործակցությունն ու փոխօգնությունը, բացառություն չէ նաև իրավական համակարգը, հետևաբար խոցելի խմբերի ներկայացուցիչների իրավունքների պաշտպանության համար անհրաժեշտ են՝

ա) լավագույն փորձի փոխանակում,

բ) անհատական դեպքերով խորհրդատվություն,

գ) տուժողների/վկաների[12] իրավունքների պաշտպանություն ու նրանց աջակցում,

դ) անմեղության կանխավարկածի պաշտպանություն,

ե) սոցիալական ծառայությունների և հոգեբանների ներգրավում խոցելի խմբերի ներկայացուցիչ տուժողների, վկաների, կասկածյալների կամ մեղադրյալների հետ աշխատանքները կազմակերպելիս:

[12] Միջազգային փորձը միտված է նրան, որ վկաներին, մասնավորապես ծանր և առանձնապես ծանր հանցագործության վկաներին պետք է վերաբերվել այնպես, ինչպես տուժողներին: Նույնը կիրառվում է ընտանեկան կամ սեռական բռնության ականատեսների նկատմամբ:

ՀՀ քր. դատ. օր. հայեցակարգի 1.17–րդ կետի համաձայն՝ ՀՀ քրեադատավարական օրենսդրության զարգացման հայեցակարգային հիմնական ուղղություններից է քրեական գործերի քննության ընթացքում (հատկապես մինչդատական վարույթում) անձի իրավունքների և ազատությունների պաշտպանության երաշխիքների ամրապնդում, մասնավորապես պաշտպանության կողմի իրավունքների ընդլայնում և դատական վերահսկողության ինստիտուտի ուժեղացում ու հստակեցում: Դրանով է պայմանավորված, որ նոր քրեական դատավարության օրենսգրքի նախագիծն ավելի է ընդլայնել պաշտպանության միջոցները, ինչպես նաև հաշվի է առել որոշ խոցելի խմբերի իրավունքների պաշտպանության առաջնահերթությունն ու առանձնահատկությունները:

Սույն ձեռնարկի նպատակն է քննիչների մեջ ձևավորել այն նվազագույն գիտելիքները, որոնք անհրաժեշտ են՝

1. խոցելի խմբերի ներկայացուցիչների իրավունքների պաշտպանության և կարիքների ճիշտ գնահատման համար,

2. խոցելի խմբերի ներկայացուցիչ վկաների, **տուժողների**, **կասկածյալների կամ մեղադրյալների մասնակցությամբ քննության առանձնահատկություններն ընկալելու և քննությունը կազմակերպելու համար**,

3. խոցելի խմբերի ներկայացուցիչներից պաշտպանության կարիք ունեցող անձանց բացահայտելու և պաշտպանելու համար,

4. հատուկ պաշտպանության կարիք ունեցող անձանց իրավունքներն ընկալելու և կիրառելու համար,

5. խոցելի խմբերի ներկայացուցիչ վկաների, **տուժողների**, **կասկածյալների կամ մեղադրյալների մասնակցությամբ քննչական գործողությունները՝ վերջիններիս առանձնահատկությունները հաշվի առնելով անցկացնելու համար**:

Վերը նշված նպատակների արդյունավետ իրականացումը ոչ միայն քրեական գործի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության գրավականն է, այլև դրանց միջոցով կապահովեն քրեական դատավարության մասնակիցների մարդու իրավունքները, և կիրականացվի միջազգային լավագույն փորձի ներդրումը ՀՀ–ում:

Սույն ձեռնարկում ներկայացվող տեղեկությունները կհանգեցնեն քննիչների մոտ խոցելի խմբերի ներկայացուցիչների հետ կազմակերպվող աշխատանքներում ավելի «զգայուն» մոտեցում դրսևորելուն՝ հիմնվելով այդ անձանց ժամանակին և ճիշտ նույնացնելու ու նրանց կարիքները գնահատելու վրա:

Կարևոր է անձին վերաբերվել որպես խոցելի խմբի ներկայացուցիչ այնքան ժամանակ, մինչև չի հաստատվել հակառակը, եթե այդ անձի հետ առաջին շփման ժամանակ քննիչի մոտ առկա են կասկածներ այդ անձի խոցելիության վերաբերյալ:

Խոցելի խմբերի ներկայացուցիչների համար հավելյալ երաշխիքներ նախատեսված են հետևյալ միջազգային գործիքներում, որոնցով ապահովում են հասարակության մեջ խոցելի անձանց հիմնարար իրավունքների պաշտպանությունը: Դրանք են՝

- Երեխայի իրավունքների մասին ՄԱԿ–ի կոնվենցիան,
- Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին ՄԱԿ–ի հռչակագիրը,
- Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին ՄԱԿ–ի կոնվենցիան և այլն:

Տարածաշրջանային/եվրոպական մակարդակով խոցելի խմբերի իրավունքների պաշտպանությունը կարևորվում է բազմաթիվ ակտերով, սակայն, ինչպես արդեն նշվել է, առանձնանում են ՄԻԵԿ–ը և դրա հիման վրա ձևավորված ՄԻԵԴ–ի նախադեպերը: Մասնավորապես, մարդու տարբեր իրավունքներին ՄԻԵԴ–ն անդրադարձել է հետևյալ նախադեպերով՝ խոշտանգման ենթարկելու վերաբերյալ (Այդինն ընդդեմ Թուրքիայի 1997 թ. սեպտեմբերի 25–ի վճռի, պարբ. 83), անչափահասների վերաբերյալ (Օկալին ընդդեմ Թուրքիայի 2006 թ. հոկտեմբերի 17–ի վճռի, պարբ. 70), սեռով պայմանավորված տարբերակված վերաբերմունքի վերաբերյալ (Օփուզն ընդդեմ Թուրքիայի 2009 թ. հունիսի 9–ի վճռի, պարբ. 160), սեռական կողմնորոշմամբ պայմանավորված խտրականության վերաբերյալ (Շալքն ու Կոպֆն ընդդեմ

Ավստրիայի 2010 թ. հունիսի 24–ի վճռի, պարբ. 97), բանտարկյալների վերաբերյալ (Շամանն ու այլք ընդդեմ Վրաստանի և Ռուսաստանի 2005 թ. ապրիլի 12–ի վճռի, պարբ. 375 և Բերքթայն ընդդեմ Թուրքիայի 2001 թ. մարտի 1–ի վճռի, պարբ. 167), հոգեկան խանգարում ունեցողների վերաբերյալ (Քեենան ընդդեմ Միացյալ Թագավորության 2001 թ. ապրիլի 3–ի վճռի, պարբ. 111) կամ հաշմանդամների վերաբերյալ (Գլորն ընդդեմ Շվեդիայի 2009 թ. ապրիլի 30–ի վճռի, պարբ. 84) և հիվանդության վերաբերյալ (Կիյուտինն ընդդեմ Ռուսաստանի 2011 թ. մարտի 10–ի վճռի, պարբ. 64):

Հատկանշական է, որ ՄԻԵԴ–ն ամրագրում է, որ «եթե հիմնարար իրավունքների սահմանափակումը կիրառվում է հատկապես խոցելի խմբի ներկայացուցչի նկատմամբ, ով արդեն իսկ անցյալում զգալի խտրական վերաբերմունքի է ենթարկվել, ապա պետական հայեցողության սահմանները պետք է զգալիորեն նեղացվեն, և պետք է լինեն ծանրակշիռ պատճառներ այդ անձին վերաբերող հարցերում սահմանափակումներ կիրառելիս» (Կիուտինն ընդդեմ Ռուսաստանի 2011 թ. մարտի 10–ի վճռի, պարբ. 63): Խոցելիությունը գնահատելիս ՄԻԵԴ–ը հանգել է նրան, որ պետությունները պարտավոր են պաշտպանել խոցելի խմբերի հանդեպ ունեցած պոզիտիվ պարտավորությունները (օրինակ՝ Օփուզն ընդդեմ Թուրքիայի 2009 թ. հունիսի 9–ի վճռի): Ընդհանրապես ՄԻԵԴ–ը պետությունից և պետական իշխանություններից պահանջում է առավել ուշադիր լինել խոցելի խմբերի ներկայացուցիչների հետ առնչվելիս:

Հետևելով դրա տրամաբանությանը՝ քննիչները պետք է լրացուցիչ երաշխավորեն, որ խոցելի խմբերի ներկայացուցիչների մարդու իրավունքները լավագույնս կպահպանվեն և կպաշտպանվեն, ինչը կհանգեցնի նրան, որ խոցելի խմբերի ներկայացուցիչները կարող են «դիմանալ» վարույթին: Մինչ անձին վարույթին ներգրավելը քննիչը պետք է համոզված լինի, որ անձի ներգրավումն անվտանգ է վերջինիս համար: Տրամաբանական է, որ դա պահանջում է մի շարք լրացուցիչ ջանքեր և երաշխիքներ, որպեսզի խոցելի խմբերի ներկայացուցիչների իրավունքները լավագույնս պաշտպանվեն:

Խոցելիությունը պայմանավորված է մի շարք օբյեկտիվ և սուբյեկտիվ հատկանիշներով, որոնք նախաքննության ընթացքում կարող են խոչընդոտել կամ անդրադառնալ մարդու իրավունքների վրա, այդ թվում՝ պայմանավորված տարիքով, անձնական կամ սոցիալական առանձնահատկություններով, ֆիզիկական կամ հոգեկան հաշմանդամություններով: Նման անձանց հետ կապված վարույթը պետք է լինի հարմարեցված[13]:

Խոցելի խմբի ներկայացուցիչների մասնակցությամբ վարույթը պետք է լինի հարմարեցված:

Սույն ձեռնարկով կազմակերպվող վերապատրաստման արդյունքում քննիչը՝

– կկարողանա անձին նույնացնել որպես խոցելի խմբի ներկայացուցիչ,

– կձևավորի հմտություններ՝ քննությունն իրականացնելու՝ պաշտպանելով հատուկ կարիքներով դատավարության մասնակիցների իրավունքները,

– կտարանջատի տուժող/վկա և կասկածյալ/մեղադրյալ խոցելի անձանց նկատմամբ վերաբերմունքի առանձնահատկությունները,

– կկարողանա կիրառել ՄԻԵԴ–ի նախադեպային իրավունքը խոցելի խմբերի ներկայացուցիչների մասնակցությամբ քրեական գործերի քննության ընթացքում:

[13] UNDOC & UNICEF, Handbook for Professionals and Policymakers on Justice Matters involving Child Victims and Witnesses of Crime, Criminal Justice Handbook Series (2009, United Nations: Vienna), էջ 1:

ԹԵՄԱ 2. ԽՈՑԵԼԻ ԱՆՁԱՆՑ ՀԵՏ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՆՀԱՏԱԿԱՆԱՑՎԱԾ ԵՎ ՃԿՈՒՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԻ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ

Պաշտպանության կարիք ունեն քրեական դատավարության բոլոր մասնակիցները, մասնավորապես, եթե նրանք առաջին անգամ են առնչվում քրեական դատավարության հետ, քանի որ նրանց համար ամեն ինչ սթրեսային է և խորթ: Սակայն քրեական դատավարության ոչ բոլոր մասնակիցներն են, որ առավելապես լրացուցիչ/հատուկ պաշտպանության կարիք ունեն: Հնարավոր են իրավիճակներ, երբ դատավարության մասնակիցն առհասարակ որևէ պաշտպանության կարիք չունենա և, ընդհակառակը, իրավիճակից ելնելով՝ ունենա հավելյալ պաշտպանության կարիք:

ՀՀ Սահմանադրության 64–րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք (ներառյալ՝ դատավարության մասնակիցների — *Դ. Թ.*) ունի իրավաբանական օգնություն ստանալու իրավունք: Օրենքով սահմանված դեպքերում իրավաբանական օգնությունը ցույց է տրվում պետական միջոցների հաշվին: Իրավաբանական օգնություն ապահովելու նպատակով երաշխավորվում է անկախության, ինքնակառավարման և փաստաբանների իրավահավասարության վրա հիմնված փաստաբանության գործունեությունը:

ՀՀ քր. դատ. օր. 68–րդ հոդվածի համաձայն՝ քրեական գործով վարույթի ընթացքում կասկածյալի կամ մեղադրյալի օրինական շահերը ներկայացնում է պաշտպանը, ով նրանց ցույց է տալիս իրավաբանական օգնություն՝ օրենքով չարգելված բոլոր միջոցներով: ՀՀ քր. դատ. օր. 59–րդ հոդվածի համաձայն՝ տուժողն իրավունք ունի ունենալու ներկայացուցիչ, իսկ որպես այդպիսին՝ ՀՀ քր. դատ. օր. 78–րդ հոդվածի համաձայն՝ կարող են մասնակցել փաստաբանները և դատավարությանը համապատասխան մասնակցի կողմից տրված լիազորագիր ունեցող այլ անձինք (տուժող ֆիզիկական անձի պարագայում միայն փաստաբանը — *Դ. Թ.*): ՀՀ քր. դատ. օր. 86–րդ հոդվածի համաձայն՝ վկան իրավունք ունի քրեական վարույթն իրականացնող մարմին ներկայանալու փաստաբանի հետ:

Վերը նշված երաշխիքներն արդեն իսկ որոշակի պաշտպանություն են ստեղծում իրավական համակարգի հետ առնչություն ունենալու դեպքում:

ՔՆՆԱՐԿՈՒՄ

Յուրաքանչյուր մասնակից ներկայացնում է մեկական քրեական գործ, որն իր կարծիքով վերաբերում է խոցելի խմբի ներկայացուցչի՝ հիմնավորելով իր ենթադրությունը կարիքի գնահատմամբ և նախնական նույնացման ցուցիչներով: Մասնավորապես կարող է ներկայացվել և քննարկվել երեխաների, կանանց, ծերերի, թմրամոլությամբ կամ ալկոհոլամոլությամբ, հոգեկան հիվանդությամբ տառապող, մտավոր թերզարգացած, ֆիզիկական հաշմանդամություն ունեցող անձանց մասնակցությամբ գործերի քննությունը:

Այս ընդհանուր իրավական պաշտպանությունից բացի՝ ՀՀ քր. դատ. օր. 98–րդ հոդվածը նախատեսում է, որ քրեական դատավարությանը մասնակցող յուրաքանչյուր անձ, ով կարող է հաղորդել տվյալներ, որոնք նշանակություն ունեն հանցագործությունը բացահայտելու և դրա կատարողին հայտնաբերելու համար, ինչի հետևանքով կարող են վտանգվել նրա, նրա ընտանիքի անդամի, մերձավոր ազգականի կամ մերձավորի[14] կյանքը, առողջությունը, գույքը, իրավունքներն ու օրինական շահերը:

Այսինքն՝ պաշտպանության միջոցներ կիրառելու համար անհրաժեշտ է վտանգի առկայություն նրա, նրա ընտանիքի անդամի, մերձավոր ազգականի կամ մերձավորի կյանքի, առողջության, գույքի, իրավունքների ու օրինական շահերի դեմ:

Վերը նշված անձանց պաշտպանությունն իրականացնում է քրեական վարույթն իրականացնող մարմինը, որը, հայտնաբերելով, որ անձը պաշտպանության կարիք ունի, այդ անձի գրավոր դիմումի հիման վրա կամ իր նախաձեռնությամբ որոշում է կայացնում պաշտպանության

[14] «Մերձավոր» է համարվում այն անձը, ում պաշտպանության նպատակով քրեական դատավարությանը մասնակցող անձը գրավոր դիմում է ներկայացրել քրեական վարույթն իրականացնող մարմին:

միջոց ձեռնարկելու մասին, որը ենթակա է անհապաղ կատարման: Պաշտպանության միջոց ձեռնարկելու մասին պաշտպանվող անձի դիմումը քրեական վարույթն իրականացնող մարմնի կողմից քննարկվում է անհապաղ, բայց ոչ ուշ, քան դա ստանալու պահից 24 ժամվա ընթացքում: Կայացված որոշման մասին անմիջապես հայտնվում է դիմողին, և նրան է ուղարկվում համապատասխան որոշման պատճենը:

Եթե պաշտպանվող անձի դիմումի վերաբերյալ քրեական վարույթն իրականացնող մարմինը որոշում է կայացրել պաշտպանության միջոցներ ձեռնարկելու դիմումը մերժելու մասին, ապա դիմում ներկայացրած անձն իրավունք ունի որոշման պատճենը ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում, այն բողոքարկելու սույն օրենսգրքով սահմանված կարգով:

Միջազգային պրակտիկայում նման դիմումների մերժման հարցը լուծվում է «ի շահ» դիմողի սկզբունքով: Քանի որ ի սկզբանե հաստատապես պարզ չէ, արդյոք այդ անձը պաշտպանության կարիք ունի, թե ոչ, ապա գործողությունները կատարվում են «ի շահ» դիմողի՝ տրամադրելով անհրաժեշտ պաշտպանության միջոցը, իսկ հետագայում, եթե պարզվի, որ պաշտպանության կարիք գոյություն չունի, կամ այն հիմնված էր անհիրատեսական կամ կեղծ հանգամանքների վրա, կայացվում է պաշտպանության միջոցի կիրառման մերժման որոշում: Պաշտպանության միջոցի կիրառումն ի սկզբանե մերժվում է ծայրահեղ դեպքերում, երբ պաշտպանության կարիքի բացակայությունն ակնհայտ է:

Պաշտպանության միջոցներ ձեռնարկելու դիմումի մերժումը արգելք չէ պաշտպանվող անձի կողմից այդպիսի միջոցներ ձեռնարկելու մասին նոր դիմում ներկայացնելու համար, եթե նա ենթարկվել է սպառնալիքի կամ հարձակման, կամ ի հայտ են եկել նախորդ դիմումում չնշված այլ հանգամանքներ:

Ձերբակալվածներին պահելու վայրի, կալանավորվածներին պահելու վայրի կամ ուղղիչ հիմնարկի վարչակազմի ղեկավարը համապատասխանաբար ձերբակալված, կալանավորված կամ ազատազրկման ձևով պատիժը կրող անձի պաշտպանության համար կարող է դիմել քրեական վարույթն իրականացնող մարմին՝ իր նախաձեռնությամբ կամ այդ անձի դիմումի հիման վրա:

ՔՆՆԱՐԿՈՒՄ

Քննարկվում են հետևյալ երկու իրավիճակները և համառոտ բացատրվում են անհատական կարիքների հիման վրա ձևավորված ու կասկածյալներին տրամադրվող օժանդակությունն ու պաշտպանությունը:

• Կասկածյալ 1–ը, ով ձերբակալվել է գողության համար, հաշմանդամ է, և խիստ սահմանափակ են նրա կարդալու և ընկալելու կարողությունները:

• Կասկածյալ 2–ը չի կարողանում ինքնուրույն քայլել և տեղաշարժվում է սայլակով: Նա ունի ֆիզիկական արատ, սակայն նրա հաշմանդամությունը նրան չի խոչընդոտում ընկալել և վերարտադրել իրականությունը: Նա ձերբակալվել է և գիշերը պահվել է ՁՊՎ–ում: Նա անկարող է ինքն իրեն սպասարկել, վեր կենալ անկողնուց կամ օգտվել կենցաղային այլ հարմարություններից, նա մշտական օգնության և խնամքի կարիք ունի:

Ինչպես իրավացիորեն նշվել է մասնագիտական գրականության մեջ, պետական պաշտպանության հատուկ միջոցների կիրառման սահմանները կարող են չհամընկնել քրեական դատավարության սահմանների հետ հետևյալ հիմնավորմամբ.

1. Քրեադատավարական հարաբերությունների առանձնահատկություններից է նրա դիսկրետությունը: Այս հատկանիշը նշանակում է, որ քրեադատավարական հարաբերությունների դադարից հետո հնարավոր է, որ այդ հարաբերությունները կրկին ծագեն: Այսպես՝ քրեադատավարական հարաբերությունները ծագում են նոր ի հայտ եկած հանգամանքի հիմքով գործը վերսկսելիս կամ դատավճիռը կատարելիս: Այս առումով, եթե քրեադատավարական գործունեության ավարտից հետո ծագում է պետական պաշտպանության միջոցներ ձեռնարկելու անհրաժեշտություն, ապա կրկին ծագում են քրեադատավարական հարաբերությունները, կայացվում են դատավարական որոշումներ, այդ որոշումների նկատմամբ իրականացվում են հսկողություն և վերահսկողություն:

2. Պետական պաշտպանության մի շարք միջոցներ, որոնք կիրառվել են մինչև դատավճռի կայացումը, օբյեկտիվորեն շարունակում են

գործել նաև քրեական դատավարության ավարտից հետո, իսկ առանձին դեպքերում դրանք գործում են անժամկետ, օրինակ՝ բնակության վայրը կամ արտաքինը փոխելու դեպքում[15]:

Ավելին՝ պետք է հաշվի առնել, որ քրեական դատավարության մասնակցի պաշտպանությունն իրականացվում է՝ հաշվի առնելով ոչ միայն կոնկրետ հանցագործությունը, այլ նաև այդ անձի անհատական տվյալները՝ մասնավորապես բազմակողմանիորեն գնահատելով խոցելիությունը: Դա կապահովի անհատական և ճկուն մոտեցում:

Դատավարության մասնակիցների նկատմամբ քննիչի մոտեցումը պետք է լինի անհատականացված և ճկուն, բայց ոչ խտրական:

Այս հարցի բազմակողմանի ներկայացման օրինակ է Հանցագործության զոհ կամ վկա երեխաների մասնակցությամբ արդարադատության հարցերում ՄԱԿ–ի տնտեսական և սոցիալական խորհրդի ուղեցույցը[16], որի համաձայն՝ պետական մարմինները տուժող կամ վկա երեխաների կարիքները գնահատելիս պետք է հաշվի առնեն **երեխայի տարիքը**, **ցանկությունները**, **հասկացված լինելու հանգամանքը**, **սեռը**, **էթնիկական**, **մշակութային**, **կրոնական**, **լեզվական և սոցիալական ծագումը**, **սոցիալական դիրքը**, **սոցիալ–տնտեսական վիճակը**, **ներգաղթյալի կամ փախստականի կարգավիճակը**, **ինչպես նաև երեխայի հատուկ կարիքները**, **այդ թվում՝ առողջությունը**, **կարողություններն ու ունակությունները**[17]:

Քննիչի առաջին քայլը պետք է լինի խոցելի խմբերի ներկայացուցիչների վաղ և ճիշտ նույնացումը:

Այսպես՝ ի լրումն դատավարական առկա երաշխիքների՝ անհրա-

[15] Брусницын Л. В., Правовое обеспечение безопасности лиц, содействующих уголовному правосудию. М., 1999, էջ 28:
[16] Այսուհետ՝ ECOSOC ուղեցույց:
[17] The UN Economic and Social Council Guidelines on Justice in Matters involving Child Victims and Witnesses of Crime, պարբերություն 16:

ժեշտ է լրացուցիչ պաշտպանել երեխաներին, ինչի համար քննիչը պետք է տեղեկացված լինի վերջինիս հատուկ կարիքների, սեռով պայմանավորված առանձնահատկությունների և երեխաների դեմ ուղղված տարբեր բնույթի հանցագործությունների բնույթի ու առանձնահատկությունների մասին, ինչպես, օրինակ՝ երեխաների դեմ ուղղված սեռական հանցագործությունների դեպքում[18]:

ՔՆՆԱՐԿՈՒՄ

Քննիչները քննարկում են մասնակիցներից մեկի վարույթում քննված՝ սեռական հանցագործության ենթարկված երեխայի կարիքների գնահատման մի օրինակ՝ առանց անհատական տվյալների հրապարակման:

Խոցելի խմբերի ներկայացուցիչ տուժողների և վկաների իրավունքները պետք է համարժեքորեն պաշտպանված լինեն քրեական դատավարության ողջ ընթացքում՝ վաղ հայտնաբերելով իրենց կարիքներն ու դրանով որոշելով պոտենցիալ խոցելիությունը:

Թմրամիջոցների և հանցավորության ՄԱԿ–ի վարչությունը խրախուսում է «վերապատրաստված իրավապահ մարմինների պաշտոնատար անձանց կողմից ինտեգրացված ու ամբողջական մոտեցման կիրառումը՝ սկսած խոցելիության վաղ նույնացումից և տուժողների ու վկաների ահաբեկումից պաշտպանելուց»[19]:

Նման մոտեցումները հնարավորություն կընձեռեն քննիչին՝

1. **ճիշտ գնահատելու իրավիճակը**,
2. **ճիշտ կազմակերպելու տուժողների/վկաների պաշտպանությունը**,
3. **իրականացնելու նպատակաուղղված գործողություններ՝ չխախտելով քննության նպատակն ու մասնակիցների իրավունքները**:

[18] Նույն տեղում, պարբերություն 17:

[19] UNDOC, Victim Assistance and Witness Protection (2016). Available at: https://www.unodc.org/unodc/en/organized–crime/witness–protection.html [դիտվել է 21 մարտ, 2016].

Հաշվի առնելով, որ մինչև հատուկ կարիքներով պայմանավորված պաշտպանության իրականացումը քննիչը պետք է քննարկի պաշտպանական ընդհանուր միջոցների կիրառման հնարավորությունը, ապա տրամաբանական է այն միջազգային փաստաթղթերի ուսումնասիրությունը, որոնք կարգավորում են նշված իրավահարաբերությունները:

ՔՆՆԱՐԿՈՒՄ

Քննիչները ներկայացնում են այն միջազգային փաստաթղթերը, որոնցում ամրագրված է կամ կարող է ամրագրված լինել քրեական դատավարության մասնակիցների, ներառյալ խոցելի խմբերի ներկայացուցիչների, իրավունքների պաշտպանությունը:

Գոյություն ունի միջազգային փաստաթղթերի ծավալուն շրջանակ, որոնցում հատուկ ուշադրություն է դարձվում դատավարության մասնակիցների հատուկ պաշտպանությանը:

Այսպես՝ ՄԱԿ Անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ պայքարի կոնվենցիայի 24–րդ և 25–րդ հոդվածներում ամրագրված են վկաների և տուժողների պաշտպանության մասին դրույթներ: Մասնավորապես, Կոնվենցիայի 24–րդ հոդվածի 1–ին և 2–րդ մասերի համաձայն՝ յուրաքանչյուր մասնակից պետություն իր հնարավորությունների սահմաններում պատշաճ միջոցներ է ձեռնարկում՝ ուղղված քրեական վարույթին մասնակցող այն վկաների վերաբերյալ հավանական վրեժից կամ վախեցնելուց արդյունավետ պաշտպանության ապահովմանը, որոնք ցուցմունք են տալիս սույն Կոնվենցիայով ընդգրկվող հանցագործությունների կապակցությամբ և պատշաճ դեպքերում՝ նրանց հարազատների և նրանց մերձավոր այլ անձանց վերաբերյալ: Պաշտպանության միջոցները, առանց մեղադրյալի իրավունքներին վնասելու, այդ թվում՝ պատշաճ քննության իրավունքին, կարող են մասնավորապես ներառել.

ա) այդպիսի անձանց ֆիզիկական պաշտպանության համար ընթացակարգերի սահմանում, օրինակ՝ այն չափով, որքանով դա անհրաժեշտ է և գործնականորեն իրականանալի, նրանց այլ տեղ վերաբնակեցնելու համար, և այնպիսի դրույթների ընդունումը, ինչպիսիք պատ-

շաճ դեպքերում, թույլ են տալիս չհրապարակել այդպիսի անձանց՝ անձին և գտնվելու վայրին վերաբերող տեղեկությունը կամ սահմանափակումներ են դնում այդպիսի տեղեկության հրապարակման համար.

բ) ապացուցման այնպիսի կանոնների ընդունումը, որոնք թույլ են տալիս վկաներին ցուցմունքներ տալ այնպես, որը կապահովի վկայի անվտանգությունը, օրինակ՝ կապի միջոցների օգնությամբ վկայի՝ ցուցմունքներ տալու թույլտվությունը, ինչպիսիք են տեսակապը կամ այլ պատշաճ միջոցները:

Նմանատիպ դրույթներ նախատեսված են նաև Կոռուպցիայի դեմ ՄԱԿ–ի կոնվենցիայի 32–րդ հոդվածով:

ՄԱԿ–ի Գլխավոր ասամբլեայի 29.11.1985 թ. «Հանցագործության և իշխանության չարաշահման զոհերի համար արդարադատության հիմնական սկզբունքների» հռչակագրում տրվում է «զոհ» հասկացության բնորոշումը, ինչպես նաև արտացոլված են հանցագործության զոհերի արդարադատության այնպիսի սկզբունքներ, ինչպիսին են հանցագործության զոհերի նկատմամբ արդարացի վերաբերմունքը, հանցագործության զոհերին իրավական և վարչական պաշտպանության կառուցակարգերի մատչելիության ապահովումը, անհրաժեշտ տեղեկատվության տրամադրման ապահովումը, ոչ պաշտոնական կառուցակարգերի օգտագործումը, ռեստիտուցիայի, փոխհատուցման և սոցիալական օգնության ապահովումը:

Միլանում 1985 թ. անցկացված ՄԱԿ–ի 7–րդ կոնգրեսում ընդունվել է «Հանցագործությունների նախազգուշացումը և քրեական արդարադատության ղեկավար սկզբունքները նոր միջազգային տնտեսական կարգի զարգացման համատեքստում» հանձնարարականը, որտեղ հանցագործության զոհերին նվիրված է առանձին բաժին: Այդ բաժնում պետություններին առաջարկվում է հանցագործության զոհերի արդյունավետ իրավական պաշտպանության միջոցներով, ներառյալ հանցագործության հետևանքով նրանց պատճառված վնասների հատուցումն ապահովելու նպատակով ձեռնարկել անհրաժեշտ բոլոր օրենսդրական և այլ միջոցառումներ:

ՄԱԿ–ի 8–րդ կոնգրեսում ընդունվել է «Միջազգային ահաբեկչության դեմ պայքարի միջոցառումների» մասին ակտ, որի երեք բաժիններից երկուսը վերաբերում են տուժողների և վկաների պաշտպանությանը:

ԵԽ–ի շրջանակներում 24.11.1983 թ. ընդունվել է «Բռնությամբ կատարված հանցագործության զոհերին հասցված վնասների փոխհատուցման մասին» Եվրոպական կոնվենցիան, որն անդրադառնում է բռնությամբ կատարված դիտավորյալ հանցագործությունների զոհերի և նրանց պատճառված վնասների հատուցմանը: Կոնվենցիայում նորմատիվ ամրագրում ստացած սկզբունքի համաձայն՝ պետությունն ապահովում է հանցագործության զոհերի վնասների փոխհատուցման իրավունքը, եթե այդ վնասների փոխհատուցումը չի կարող ապահովվել այլ աղբյուրներից (հոդված 2):

ԵԽ–ի նախարարների կոմիտեն 10.09.1997 թ. ընդունել է «Վկաներին ահաբեկելու և պաշտպանության իրավունքի ապահովման» մասին N R (97) 13 հանձնարարականը, որտեղ տրվում են քննարկվող ոլորտում էական նշանակություն ունեցող մի շարք հասկացությունների բնորոշումներ, օրինակ՝ «ահաբեկել» հասկացությունը մեկնաբանվում է ցանկացած վկային հասցեագրված ուղղակի և անուղղակի կամ հնարավոր սպառնալիք, որը խոչընդոտում է վկային կատարելու իր քաղաքացիական պարտքը: «Ահաբեկել» հասկացությունը ներառում է՝ 1) բռնի հանցագործություններ կատարող կազմակերպության համբավ ունեցող այնպիսի հանցավոր խմբի գոյության փաստը, որն ի զորու է ցանկացածից վրեժխնդիր լինել, 2) խոցելի սոցիալական խմբին վկայի պատկանելության փաստը»:

ԵԽ–ի նախարարների կոմիտեն 20.02.2005 թ. ընդունել է «Վկաների և արդարադատությանն աջակցող անձանց պաշտպանության մասին» N R(2005)9 հանձնարարականը: Նշված հանձնարարականներում հատուկ ուշադրություն է դարձվում վկաների ինքնությունը հաստատող տվյալների գաղտնագրման և մեղադրյալի պաշտպանության իրավունքի հավասարակշռման հարցերին:

ԱՊՀ անդամ պետությունների միջխորհրդարանական Վեհաժողովն 06.12.1997 թ. ընդունել է «Տուժողների, վկաների և քրեական դատավա-

ությանն աջակցող այլ անձանց պետական պաշտպանության» մասին նմուշ–օրենքը, որի 5–րդ հոդվածի համաձայն՝ պաշտպանվող անձանց նկատմամբ կիրառվող անվտանգության միջոցներն են պաշտպանվող անձի մասին տեղեկություններ չհրապարակելը, դռնփակ դատական նիստում գործերի քննությունը, պաշտպանվող անձի անձնական պաշտպանությունը, բնակարանի և գույքի պահպանությունը, պաշտպանվող անձի հեռախոսային խոսակցությունների լսումը, պաշտպանվող անձին զենք, անհատական պաշտպանության հատուկ միջոցներ, կապի և վտանգի մասին ազդարարող հատուկ միջոցներ տրամադրելը, տեղեկատվական–տեղեկատու շտեմարաններից պաշտպանվող անձի մասին տեղեկությունների տրման ժամանակավոր արգելքը, պաշտպանվող անձի վերաբնակեցումը բնակության այլ վայր, փաստաթղթերի փոխարինումը, պաշտպանվող անձի արտաքինի փոփոխումը, պաշտպանվող անձի աշխատանքի (ծառայության) կամ ուսման վայրի փոփոխումը, պաշտպանվող անձի ժամանակավոր տեղավորումը անվտանգ վայրում[20]:

Հատուկ կարևորվում է ԵՄ հրահանգը, որի վերաբերյալ արդեն նշվել է ներածությունում:

Ազգային օրենսդրությամբ նախատեսված պաշտպանության միջոցներն առհասարակ կարելի է դասակարգել տարբեր հիմքերով: Ըստ պաշտպանվող անձի կարգավիճակի՝ պաշտպանության միջոցները լինում են՝

– ընդհանուր պաշտպանության միջոցներ, որոնք կարող են ձեռնարկվել բոլոր պաշտպանվող անձանց նկատմամբ,

– հատուկ պաշտպանության միջոցներ, որոնք կարող են ձեռնարկվել զինծառայողների կամ կալանավորված անձանց նկատմամբ:

Ըստ բնույթի՝ հատուկ պաշտպանության միջոցները լինում են կազմակերպահիրավական և դատահիրավական:

---

[20] Պաշտպանության միջոցների միջազգային իրավական հիմքերի մասին մանրամասն տե՛ս Брусницын Л. В., Обеспечение безопасности лиц, содействующих уголовному правосудию: мировой опыт и развитие российского законодательства (процессуальное исследование), Монография, М., Юрлитинформ, 2010, էջ 57–89; ՀՀ քրեական դատավարություն, Մաս 1, Գիտական խմբագիր՝ Ա. Ղամբարյան, Երևան, 2016, էջ 319–323:

ՀՀ–ում պաշտպանության միջոցները տասներկուսն են: Դրանք են՝

1) անձին պաշտոնապես նախազգուշացնելը, ումից սպասվում է պաշտպանվող անձի նկատմամբ բռնության վտանգ կամ այլ հանցանքի կատարում[21],

2) պաշտպանվող անձի ինքնությունը հաստատող տվյալները պաշտպանելը[22],

3) պաշտպանվող անձի անձնական անվտանգությունն ապահովելը, բնակարանը և այլ գույք պահպանելը[23],

---

[21] Պաշտպանվող անձի կյանքին կամ առողջությանը սպառնացող վտանգի մասին վկայող փաստերի առկայության դեպքում, որոնք բավարար չեն այն անձի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու համար (օրինակ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 137–րդ հոդվածով), որից սպասվում է բռնության կամ այլ հանցանքի կատարման վտանգ, քրեական վարույթն իրականացնող մարմինը նրան պաշտոնապես նախազգուշացնում է քրեական պատասխանատվության ենթարկելու հավանականության մասին: Նախազգուշացումը կատարվում է անձից ստորագրություն վերցնելով:

[22] Պաշտպանվող անձի ինքնությունը հաստատող տվյալների պաշտպանությունն իրականացվում է երկու եղանակով.

1) քրեական գործի նյութերում և այլ փաստաթղթերում կամ տեղեկություններ պարունակող կրիչներում, ինչպես նաև քննչական գործողությունների կամ դատական նիստերի արձանագրություններում անձի մասին տեղեկությունների սահմանափակումով՝ քրեական վարույթն իրականացնող մարմնի որոշմամբ քրեական գործում առկա արձանագրային տվյալներում պաշտպանվող անձի ազգանունը, անունը, հայրանունը կեղծանուններով փոխարինելու միջոցով: Տեղեկությունները սահմանափակելու մասին քրեական վարույթն իրականացնող մարմնի որոշումը և դրան առնչվող նյութերն առանձնացվում են քրեական գործի մյուս նյութերից և պահվում վարույթն իրականացնող մարմնի մոտ: Հիմնական վարույթից առանձնացված որոշմանը և դրան առնչվող նյութերին ծանոթանալը մատչելի է միայն դատարանին և քրեական հետապնդումն իրականացնող մարմնին, իսկ դատավարության մյուս մասնակիցները դրան կարող են ծանոթանալ միայն քրեական վարույթն իրականացնող մարմնի թույլտվությամբ, եթե դա անհրաժեշտ է կասկածյալի կամ մեղադրյալի պաշտպանությունն իրականացնելու կամ քրեական գործի քննության համար էական նշանակություն ունեցող որևէ հանգամանք պարզելու համար.

2) պաշտպանվող անձի մասին տեղեկություններ տրամադրելու վրա ժամանակավոր արգելք դնելով:

[23] Քրեական վարույթն իրականացնող մարմինը, համագործակցելով այլ իրավասու մարմինների հետ, իրականացնում է պաշտպանվող անձի անձնական պահպանությունը, նրա բնակարանի կամ այլ գույքի պահպանությունը: Պաշտպանվող անձի բնակարանը կամ այլ գույք սարքավորվում են հակահրդեհային կամ ազդանշանային տեխնիկական միջոցներով, փոխվում են նրա բնակարանի կամ անձնական այլ հեռախոսահամարներ կամ նրան պատկանող տրանսպորտային միջոցի (միջոցների) պետական համարանիշեր:

4) պաշտպանվող անձին անհատական պաշտպանության միջոցներ տրամադրելը և վտանգի մասին հայտնելը[24],

5) վերահսկողության տեխնիկական միջոցներ օգտագործելը և հեռախոսային ու այլ հաղորդումներ գաղտնալսելը[25],

6) պաշտպանվող անձի՝ քրեական վարույթն իրականացնող մարմին ներկայանալու անվտանգությունն ապահովելը[26],

7) կասկածյալի կամ մեղադրյալի նկատմամբ այնպիսի խափանման միջոց ընտրելը, որը կբացառի նրանց կողմից պաշտպանվող անձի հանդեպ բռնության կամ այլ հանցանքի կատարման հնարավորությունը[27],

8) պաշտպանվող անձին բնակության այլ վայր փոխադրելը[28],

9) պաշտպանվող անձի ինքնությունը հաստատող փաստաթղթերը փոխարինելը կամ արտաքինը փոխելը[29],

---

[24] Պաշտպանվող անձի անձնական անվտանգության ապահովման համար օրենսդրությամբ սահմանված կարգով նրան տրամադրվում են անհատական պաշտպանության միջոցներ, ինչպես նաև նրան հայտնվում է սպասվող վտանգի մասին:

[25] Քրեական վարույթն իրականացնող մարմինը պաշտպանվող անձի գրավոր դիմումի հիման վրա կամ նրա գրավոր համաձայնությամբ և սույն օրենսգրքով սահմանված կարգով իրականացնում է նրա հեռախոսային կամ այլ խոսակցությունների գաղտնալսում: Խոսակցությունների գաղտնալսման ընթացքում կարող է կիրառվել ձայնագրառում:

[26] Քրեական վարույթն իրականացնող մարմնի կանչով ներկայանալու համար անհրաժեշտության դեպքում պաշտպանվող անձի փոխադրման անվտանգությունն ապահովում է քրեական վարույթն իրականացնող մարմինը:

[27] Քրեական վարույթն իրականացնող մարմինը օրենքով սահմանված կարգով կասկածյալի կամ մեղադրյալի նկատմամբ ընտրում է խափանման այնպիսի միջոց, որը կբացառի բռնության կամ այլ հանցանքի կատարման հնարավորությունը, ինչի մասին կայացվում է պատճառաբանված որոշում: Որոշման մասին տեղեկացվում է նաև պաշտպանվող անձը:

[28] Պաշտպանվող անձը ժամանակավոր կամ մշտապես փոխադրվում է բնակության այլ վայր: Բնակության այլ վայր փոխադրելն իրականացվում է պաշտպանվող անձի գրավոր համաձայնությամբ, եթե առկա է այնպիսի իրադրություն, երբ պաշտպանվող անձի անձնական անվտանգությունը չի կարող ապահովվել այլ միջոցներով:

[29] Անհրաժեշտության դեպքում կարող են փոխարինվել պաշտպանվող անձի ինքնությունը հաստատող փաստաթղթերը, ինչպես նաև կարող է փոխվել նրա արտաքինը: Փաստաթղթերի փոխարինումը, արտաքինը փոխելը, այդ թվում՝ պլաստիկ վիրահատությունը, իրականացվում են պաշտպանվող անձի գրավոր համաձայնությամբ, եթե առկա է այնպիսի իրադրություն, երբ պաշտպանվող անձի անձնական անվտանգությունը չի կարող ապահովվել այլ միջոցներով:

10) պաշտպանվող անձի աշխատանքի, ծառայության կամ ուսման վայրը փոփոխելը[30],

11) դատական նիստերի դահլիճից առանձին անձանց հեռացնելը կամ դռնփակ դատական քննություն անցկացնելը[31],

12) դատարանում պաշտպանվող անձին հարցաքննելը՝ առանց նրա ինքնության մասին տեղեկությունների հրապարակման[32]:

Անհրաժեշտության դեպքում կարող են իրականացվել մեկից ավելի հատուկ պաշտպանության միջոցներ:

---

[30] Եթե պաշտպանվող անձին ուղղված վտանգի վերացման համար պահանջվում է, որ նա թողնի նախկին աշխատանքի, ծառայության կամ ուսման վայրը, ապա քրեական վարույթ իրականացնող մարմինն այդ անձի միջնորդությամբ կամ համաձայնությամբ օգնում է տեղավորվելու նոր աշխատանքի կամ ուսման վայր: Պաշտպանվող անձի հարկադիր պարապուրդի ժամկետը հաշվակցվում է որպես աշխատանքային ստաժ, և այդ ժամկետի համար վճարվում է փոխհատուցում, որը չի կարող նախկին աշխատանքի կամ ծառայության համար տրված աշխատավարձից ցածր լինել: Նոր աշխատանքի կամ ծառայության վայրում ցածր աշխատավարձի դեպքում աշխատավարձերի տարբերությունը փոխհատուցվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

[31] Պաշտպանվող անձի անվտանգության շահերից ելնելով՝ դատական նիստի նախագահողն իրավասու է առանձին անձանց հեռացնելու դատական նիստերի դահլիճից: Պաշտպանվող անձի անվտանգությունն ապահովելու համար դատական նիստի նախագահողն անցկացնում է դռնփակ դատական քննություն, ինչի մասին կայացվում է պատճառաբանված որոշում:

[32] Դատարանի կողմից պաշտպանվող անձի հարցաքննությունը, առանց նրա ինքնության մասին տվյալների հրապարակման, կարող է կատարվել կեղծանվան օգտագործմամբ: Պաշտպանվող անձի հարցաքննությունը կարող է կատարվել դատական նիստերի դահլիճից ամբաստանյալի և պաշտպանության կողմի ներկայացուցչին հեռացնելուց հետո: Անհրաժեշտության դեպքում պաշտպանվող անձի հարցաքննությունը կարող է կատարվել այնպիսի պայմաններում, որոնք բացառում են անձի ինքնության ճանաչումը: Այդ նպատակով կարող են օգտագործվել դիմակ, շպար, պաշտպանվող անձի ձայնը փոփոխող սարք և օրենքին չհակասող պաշտպանության այլ միջոցներ: Պաշտպանվող անձի հարցաքննությունը, առանց դատավարության մյուս մասնակիցների ակներև տեսանելիության, կարող է կատարվել տեսաձայնային և տեխնիկական այլ միջոցների (շղարշ, պաշտպանիչ էկրան, թաղանթ) օգնությամբ՝ դատավարության սահմանափակ շրջանակով մասնակիցների մասնակցությամբ՝ գաղտնիության պահպանման մասին նախազգուշացումով: Բացառիկ դեպքերում դատարանը կարող է պաշտպանվող անձին ազատել դատական նիստին մասնակցելու պարտականությունից՝ նրա կողմից նախկինում տրված ցուցմունքի գրավոր հաստատման առկայության դեպքում: Անհրաժեշտության դեպքում դատական նիստի նախագահողը կարող է դատաքննության ընթացքում արգելել տեսաձայնային և այլ միջոցներով հարցաքննության տեսաձայնագրառումը:

Այս հատուկ պաշտպանական միջոցներն ընդանրական են և վերաբերելի են բոլոր դեպքերին, երբ առկա է որևէ վտանգ: Եթե դատավարության մասնակիցը խոցելի խմբի ներկայացուցիչ է, բացի վերը նշված պաշտպանության միջոցներից՝ վարույթ իրականացնող մարմինը պետք է նաև հատուկ վերաբերմունք դրսևորի անձի նկատմամբ՝ փոփոխելով ինչպես քննչական գործողությունների մարտավարությունը, այնպես էլ կիրառելով հատուկ տեխնիկական հնարքներ:

Խոցելի խմբերի ներկայացուցիչները, ինչպես և ցանկացած անձ, օժտված են մարդու իրավունքների ամբողջականությամբ, հետևաբար պետք է ապահովել ՄԻԵԿ–ով նախատեսված նրանց բոլոր իրավունքների պաշտպանությունը: Ավելին՝ այդ իրավունքների պաշտպանությունը պետք է իրականացվի առաջնահերթ:

Խոցելի խմբերի պաշտպանության համատեքստում հետաքրքրություն են ներկայացնում և կարևորվում են հետևյալ պաշտպանական միջոցները, որոնք մանրամասն կներկայացվեն հաջորդ դասերի ընթացքում: Դրանք են՝

1) պաշտպանվող անձին անհատական պաշտպանության միջոցներ տրամադրելը և վտանգի մասին հայտնելը,

2) վերահսկողության տեխնիկական միջոցներ օգտագործելը և հեռախոսային ու այլ հաղորդումներ գաղտնալսելը,

3) պաշտպանվող անձի՝ քրեական վարույթն իրականացնող մարմին ներկայանալու անվտանգությունն ապահովելը,

4) կասկածյալի կամ մեղադրյալի նկատմամբ այնպիսի խափանման միջոց ընտրելը, որը կբացառի նրանց կողմից պաշտպանվող անձի հանդեպ բռնության կամ այլ հանցանքի կատարման հնարավորությունը.

5) դատական նիստերի դահլիճից առանձին անձանց հեռացնելը կամ դռնփակ դատական քննություն անցկացնելը,

6) դատարանում պաշտպանվող անձին հարցաքննելը՝ առանց նրա ինքնության մասին տեղեկությունների հրապարակման:

Խոցելի խմբերի ներկայացուցիչների պաշտպանության հիմնախնդիրներին անդրադառնալուց առաջ պետք է իրականացնել այդպիսի անձանց շրջանակի հստակեցում, քանի որ ոչ միջազգային, ոչ էլ ազ-

գային օրենսդրությամբ նման սահմաններ ուրվագծված չեն: Միջազգային պրակտիկայում ընդունված է հատուկ պաշտպանության կարիք ունեցող անձանց բաժանել երկու խմբի՝

1. **ովքեր մշտապես ունեն հատուկ պաշտպանության կարիք՝ երեխաներ**, **փախստականներ**, **մարդու թրաֆիքինգի կամ շահագործման զոհեր**, **սեռական հանցագործության զոհեր**, **ընտանեկան բռնության զոհեր**,

2. **ովքեր հատուկ պաշտպանության կարիք ունեն՝ ելնելով որոշակի հանգամանքներից՝ կանայք**, **ազգային և սեռական փոքրամասնություններ**, **օտարերկրյա քաղաքացիներ կամ քաղաքացիություն չունեցող անձինք**, **հաշմանդամներ**, **տարբեր իրավիճակներով պայմանավորված իրենց իրավունքներն ու շահերն ինքնուրույն պաշտպանելու հնարավորությունից զրկված անձինք**:

Եթե առանձին խոցելի խմբերի պարագայում ՀՀ օրենսդրությամբ առկա է որոշակի կարգավորում, ապա նույնը հնարավոր չէ ասել ընդհանրական համատեքստում՝ առհասարակ խոցելի լինելու հիմքով պայմանավորված առանձնահատկությունների մասին: Մասնավորապես, բավարար կարգավորված է երեխաների, մարդու թրաֆիքինգի կամ շահագործման ենթարկված անձանց, սեռական հանցագործության ենթարկված անձանց առնչվող իրավահարաբերությունները, ինչը բացակայում է այլ կատեգորիայի խոցելի անձանց պարագայում: Օրինակ՝ վերը նշված ԵՄ հրահանգի կիրառման ընթացքում առաջնահերթությունը պետք է տրվի երեխաների շահերին՝ Երեխայի հիմնարար իրավունքների մասին ԵՄ խարտիայի և Երեխայի իրավունքների մասին ՄԱԿ–ի կոնվենցիայի համաձայն: Երեխաները պետք է կարողանան իրականացնել իրենց իրավունքները՝ հաշվի առնելով նրանց՝ սեփական կարծիքը ձևավորելու կարողությունը: Հրահանգը կիրառելիս պետք է ապահովվի, որ հանցագործության զոհ հաշմանդամները Հրահանգով սահմանված իրավունքներն իրականացնեն լիարժեք և այլ անձանց հետ հավասար հիմքերով, մասնավորապես պետք է ապահովել այդպիսի անձանց մուտքն այն տարածք, որտեղ իրականացվում է քրեական գործով վարույթը, ինչպես նաև պետք է ապահովել տեղեկատվության մատչելիությունը:

Քրեական դատավարության ընթացքում հաշմանդամություն ունեցող անձը չպետք է իրեն զգա «ոչ լիարժեք մարդ»:

Նույն Հրահանգը հատուկ կարգավորում է, որ մարդու սեռով, գենդերային ինքնությամբ կամ գենդերային արտահայտումով պայմանավորված բռնության դրսևորումները կամ որոշակի սեռի անձանց նկատմամբ ուղղված անհամաչափ բռնությունը համարվում են գենդերային բռնություն: Այն կարող է արտահայտվել՝ զոհին ֆիզիկական, սեռական, հուզական կամ հոգեբանական, ինչպես նաև գույքային վնաս պատճառելով: Գենդերային բռնությունը համարվում է խտրականություն, ինչպես նաև զոհի հիմնարար ազատությունների խախտման դրսևորման ձև և իր մեջ ներառում է ընտանեկան բռնությունը, սեռական բռնությունը (բռնաբարություն, սեքսուալ բնույթի բռնի այլ գործողություններ և այլ ոտնձգություններ), մարդու թրաֆիքինգը, ստրկությունը և անբարո վարքագծի տարբեր ձևեր, ինչպիսիք են հարկադիր ամուսնությունները, կանանց սեռական օրգանների խեղումները և այսպես կոչված «պատվի դեմ հանցագործությունները»: Գենդերային բռնության զոհ դարձած կանայք և նրանց երեխաները հաճախ հատուկ աջակցության և պաշտպանության կարիք ունեն, քանի որ բարձր է երկրորդային և կրկնակի զոհացման վտանգը, ինչպես նաև հաշվի առնելով սպառնալիքների և նման բռնության կատարմամբ պայմանավորված վրեժի դրսևորման վտանգները:

Ըստ Հրահանգի՝ ընտանեկան բռնության մասին խոսելիս պետք է առանձնացնել, որ այդ բռնությունը կատարվում է այնպիսի անձի կողմից, ով զոհի ներկա կամ նախկին ամուսինն է կամ զուգընկերը, կամ ընտանիքի այլ անդամ է՝ անկախ հանցագործի կողմից զոհի հետ համատեղ տնտեսություն վարելու կամ վարած լինելու հանգամանքից: Նման բռնությունը կարող է լինել ֆիզիկական, սեռական, հոգեբանական կամ գույքային և կարող է առաջացնել ֆիզիկական, սեռական, հոգեբանական կամ գույքային վնասներ: Ընտանեկան բռնությունը լուրջ և հաճախ թաքնված սոցիալական խնդիր է, որը կարող է հանգեցնել ծանր հետևանքների՝ պարբերաբար հոգեբանական և ֆիզիկական

վնասվածքներ հասցնելով, քանի որ նման դեպքերում հանցագործն այն անձն է, ում վստահում է զոհը: Այս առումով, ընտանեկան բռնության զոհերի համար անհրաժեշտ են պաշտպանության հատուկ միջոցներ: Նման բռնության զոհ կանանց վրա ազդեցությունն ավելի ուժգին է, քան տղամարդկանց, և իրավիճակը կարող է սրվել, եթե կինն ունի հանցագործից կախվածություն՝ պայմանավորված տնտեսական, սոցիալական պայմաններով կամ պետությունում կացության բացակայությամբ:

Յուրաքանչյուր քննիչ, բացի ընդհանուր պաշտպանական միջոցների կիրառումից, պետք է որոշի դատավարության մասնակիցների (ներառյալ կասկածյալի կամ մեղադրյալի) հատուկ պաշտպանության անհրաժեշտությունը և դրա վերաբերյալ կայացնի կշռադատված և պատճառաբանված որոշում:

Հաջորդ երկու դասերի ընթացքում մանրամասն կներկայացվեն խոցելի խմբերի ներկայացուցիչ վկաների և/կամ տուժողների, կասկածյալների կամ մեղադրյալների մասնակցությամբ քննության առանձնահատկությունները ՀՀ քրեական դատավարությունում:

ԴԱՍ 2.
ԽՈՑԵԼԻ ՏՈՒԺՈՂՆԵՐԻ/ՎԿԱՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ

ԹԵՄԱ 1. ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ԽՄԲԵՐԸ

Եթե անձը ենթարկվել է որևէ հանցագործության կամ դարձել է դրա ականատեսը, ապա նա ինքնին հայտնվել է սթրեսային վիճակում: Առավել ցայտուն դա զգացվում է, եթե դեպքը տեղի է ունեցել առաջին անգամ:

ԵՄ հրահանգի ներածության 9–րդ կետի համաձայն՝ հանցագործությունը համարվում է հասարակության դեմ ուղղված հակահիրավական գործունեություն, ինչպես նաև հանցագործության զոհերի անձնական իրավունքների խախտում[33]: Ելնելով դրանից՝ հանցագործության տուժողների նկատմամբ վերաբերմունքը և մոտեցումները պետք է լինեն **հարգալից, համաչափ և մասնագիտական՝ բացառելով խտրականությունը՝ անկախ ռասայից, մաշկի գույնից, ազգային կամ սոցիալական ծագումից, գենետիկական հատկանիշներից, լեզվից, կրոնից կամ դավանանքից, քաղաքական կամ այլ հայացքներից, ազգային փոքրամասնությանը պատկանելությունից, գույքային վիճակից, ծնունդից, հաշմանդամությունից, տարիքից, սեռից, գենդերային արտահայտումից, գենդերային ինքնությունից, սեռական կողմնորոշումից, կացության կարգավիճակից կամ առողջական վիճակից**: Հանցագործության զոհերի հետ քրեական դատավարության շրջանակներում իրականացվող ցանկացած շփման դեպքում, ինչպես նաև զոհերին աջակցելիս և վերականգնողական արդարադատություն իրականացնելիս լիազոր մարմինները պետք է հաշվի առնեն հանցագործության զոհի անձնական կարգավիճակը և անմիջական կարիքները, նրանց տարիքը, սեռը, հնարավոր հաշմանդամությունը և հասունու-

[33] ՀՀ քրեական օրենսգրքի 18–րդ հոդվածի 1–ին մասի համաձայն՝ հանցագործություն է համարվում մեղավորությամբ կատարված հանրության համար վտանգավոր այն արարքը, որը նախատեսված է ՀՀ քրեական օրենսգրքով:

թյան աստիճանը՝ լիովին հարգելով նրանց ֆիզիկական, մտավոր և բարոյական անձեռնմխելիությունը: Հանցագործության զոհերը պետք է պաշտպանված լինեն երկրորդային և կրկնակի զոհացումից, սպառնալիքներից ու վրեժից, իսկ վերականգնման նպատակով պետք է ստանան համապատասխան աջակցություն: Արդարությունը պետք է լինի հասանելի:

ԵՄ հրահանգի համաձայն՝ «զոհ» եզրույթը նշանակում է՝

1. ֆիզիկական անձ, ում հանցագործության կատարմամբ անմիջականորեն պատճառվել է վնաս, այդ թվում՝ ֆիզիկական, հոգեբանական, հուզական կամ գույքային,

2. այն անձի ընտանիքի անդամներ, ում հանցագործության կատարմամբ անմիջականորեն պատճառվել է մահ, և ովքեր վնաս են կրել այդ անձի մահվան հետևանքով:

ՀՀ քր. դատ. օր. 58–րդ հոդվածի 1–ին մասի համաձայն՝ տուժող է ճանաչվում այն անձը, ում քրեական օրենսգրքով[34] չթույլատրված արարքով անմիջականորեն պատճառվել է բարոյական, ֆիզիկական կամ գույքային վնաս: Տուժող է ճանաչվում նաև այն անձը, ում կարող էր անմիջականորեն պատճառվել բարոյական, ֆիզիկական կամ գույքային վնաս, եթե ավարտվեր քրեական օրենսգրքով չթույլատրված արարք կատարելը:

Երկրորդային զոհացումը վերաբերում է այն տուժողներին, ում ուղղակի վնաս է պատճառվել ոչ թե հանցագործության հետևանքով, այլ տուժողի հետ շփվող պատկան հաստատությունների և անհատների վարքագծով:

Տուժողների կամ վկաների ընդհանուր պաշտպանությունը հատուկ պաշտպանության նախապայմաններից մեկն է: Տուժողը կամ վկան պետք է իրեն հարմարավետ զգա, որպեսզի կարողանա ներկայացնել կատարվածը:

[34] Այսուհետ՝ քր. օր.:

Տուժողների կամ վկաների շփումը իրավապահ մարմինների հետ (մասնավորապես առաջին անգամ) կարող է լինել սթրեսային:

Տուժողների խոցելիության որոշման չափանիշներ նախատեսված են Հանցագործությունից և իշխանության չարաշահումից տուժած անձանց համար արդարադատության հիմնական սկզբունքների հռչակագրի 17–րդ կետում, որի համաձայն՝ զոհերին ծառայություններ ու աջակցություն տրամադրելիս պետք է հաշվի առնվեն մարդկանց հատուկ կարիքները, որոնք պայմանավորված են պատճառված վնասի բնույթով կամ հետևյալ հանգամանքներով կամ գործոններով՝ ռասա, մաշկի գույն, սեռ, տարիք, լեզու, կրոն, ազգություն, քաղաքական կամ այլ հայացքներ, մշակութային հայացքներ կամ ապրելակերպ, գույքային վիճակ, ծնունդ կամ ընտանեկան կարգավիճակ, էթնիկական կամ սոցիալական ծագում և հաշմանդամություն:

Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի հանցագործության զոհերին օժանդակություն ցուցաբերելու թիվ (2006) 8 առաջարկների 3.4–րդ կետով՝ պետությունները պետք է ապահովեն, որ զոհերը, հատկապես անձնական հատկանիշներով կամ հանցագործության բնույթով խոցելի զոհերը, կարողանան օգտվել իրենց իրավիճակին համապատասխանող պաշտպանական լավագույն հատուկ միջոցներով:

Միջազգային չափանիշների լույսի ներքո՝ խոցելի խմբերի ներկայացուցիչ տուժողները և վկաները պայմանականորեն կարող են բաժանվել երկու խմբի.

1) **Ում խոցելիությունը պայմանավորված է որոշակի օբյեկտիվ հատկանիշներով** (երեխաներ, հաշմանդամներ, հոգեկան խանգարումներ ունեցողներ, տկարամիտներ): Այս կատեգորիայի տուժողները կամ վկաները կարող են արդյունավետ մասնակցել վարույթին և ընկալել քրեական հետապնդումն ու դրա առանձնահատկությունները (երբեմն համապատասխան փորձագիտական գնահատականից հետո), և նրանց նկատմամբ պետք է կիրառվեն այնպիսի միջոցներ, որոնք ուղղված կլինեն այդ անձանց երկրորդային և կրկնակի զոհացումից խուսափելուն,

2) **Ում խոցելիությունը պայմանավորված է հանցագործության բնույթով և հանգամանքներով**, մասնավորապես այդ անձինք խոցելի են մարգինալության կամ երկրորդային զոհացման արդյունքում (սեռական կամ ընտանեկան բռնության իգական սեռի զոհերը և վկաները, ատելության շարժառիթով կատարված հանցագործությունների կամ խտրականության զոհերը, խոշտանգումների կամ դաժան վերաբերմունքի զոհերը և այլն): Այս անձինք լրացուցիչ պաշտպանության և անհատական տվյալների գաղտնիության ապահովման կարիք ունեն, ինչպես նաև կարիք կա միջոցներ ձեռնարկելու, որպեսզի նրանք նախաքննության ընթացքում հնարավորինս չառերեսվեն ենթադրյալ հանցագործի հետ՝ անմիջականորեն հանդիպելով նրան, իսկ նշանակված բժշկական և այլ փորձաքննություններ չվնասեն վերջիններիս: Քննիչները նաև միջազգային պոզիտիվ պարտականություն ունեն պաշտպանելու խոցելի խմբերի ներկայացուցիչ այն անձանց, ովքեր ենթարկվել են սեռական կամ ընտանեկան բռնության, խոշտանգումների կամ վատ վերաբերմունքի կամ ռասայական ատելության զոհ են:

Այս դասակարգումը հնարավորություն է ընձեռում խոցելի խմբերի տարբեր կատեգորիաների տուժողների կամ վկաների նկատմամբ դրսևորելու լրացուցիչ պաշտպանության տարբերակված մոտեցում՝ միջազգային չափանիշներին համապատասխան: Սակայն պետք է հիշել, որ խոցելի խմբերի վերը նշված շրջանակը սպառիչ չէ, ինչպես նաև խոցելիության որոշումը բոլոր դեպքերում կրում է անհատական բնույթ:

Քննիչը պետք է տարբերակի խոցելիությունը, որպեսզի կարողանա ճիշտ պլանավորել իր աշխատանքը:

Թեմա 2. Լրացուցիչ պաշտպանության ենթակա իրավունքները

ԵՄ հրահանգի համաձայն՝ յուրաքանչյուր զոհ կամ վկա ունի իրավունքների նվազագույն շրջանակ, որոնց թվին են պատկանում՝

1. հասկանալու և հասկացված լինելու իրավունքը (հոդված 3)[35],

[35] Պետք է ձեռնարկվեն համապատասխան միջոցներ, որոնք հնարավորություն կընձեռեն

2. լիազոր/պետական մարմնի հետ հաղորդակցման առաջին պահից տեղեկատվություն ստանալու իրավունքը (հոդված 4)[36],

3. հաղորդում տալու զոհի իրավունքը (հոդված 5)[37],

4. իրենց գործի վերաբերյալ տեղեկատվություն ստանալու իրավունքը (հոդված 6)[38],

5. բանավոր և գրավոր թարգմանության իրավունքը (հոդված 7)[39],

հանցագործության զոհերի հետ առաջին իսկ շփման պահից, իսկ անհրաժեշտության դեպքում՝ նաև քրեական դատավարության ողջ ընթացքում, զոհերին ընկալելու տեղեկատվությունն ու ապահովելու լիազոր մարմինների կողմից նրանց խոսքի ընկալումը՝ ներառելով վերը նշված մարմիններին տեղեկատվություն տրամադրելիս: Հանցագործության զոհերի հետ հաղորդակցումը պետք է իրականացվի բանավոր կամ գրավոր եղանակով, պարզ ու հասկանալի լեզվով: Հաղորդակցման ձևը պետք է ընտրվի՝ հաշվի առնելով զոհի անձնական հատկանիշները, այդ թվում՝ ցանկացած տեսակի հաշմանդամությունը, որը կարող է ազդել զոհի՝ հասկանալու և հասկացված լինելու կարողության վրա: Պետական մարմնի հետ առաջին հանդիպմանը զոհը կարող է ներկայանալ իր ընտրած անձի ուղեկցությամբ, եթե հանցագործության հետևանքով զոհը՝ հասկանալու և հասկացված լինելու համար աջակցության կարիք ունի, բացառությամբ, երբ դա հակասում է զոհի շահերին կամ խախտում է քրեական դատավարության ընթացքը:

[36] Հանցագործության զոհերն առանց անհարկի հապաղման պետական մարմնի հետ հաղորդակցման առաջին պահից օժտված են սահմանված իրավունքների հասանելիությամբ՝ հստակեցնելով աջակցության տեսակների, հանցագործության վերաբերյալ դիմումների տրամադրման ընթացակարգերի, պաշտպանության, այդ թվում՝ պաշտպանության միջոցների, իրավաբանական խորհրդատվության և օգնության, ցանկացած այլ խորհրդատվության, փոխհատուցման, գրավոր և բանավոր թարգմանության իրավունքի, քրեական դատավարության ընթացքում գործող լիազոր մարմինների կողմից իր իրավունքները չապահովելու դեպքում բողոքարկման առկա ընթացակարգերի, վերականգնողական արդարադատության, կատարված դատավարական ծախսերի մասին և այլ բնույթի տեղեկատվություն:

[37] Զոհը գրավոր պետք է ծանուցվի լիազոր մարմնի կողմից՝ նրանից հանցագործության կատարման մասին դիմում ստանալու վերաբերյալ՝ ծանուցագրում նշելով հանցագործության հիմնական բնութագրերը: Պետությունները պետք է երաշխավորեն, որ հանցագործության մասին դիմում ներկայացնելու ցանկություն ունեցող, բայց գործավարության լեզվին չտիրապետող զոհերին հնարավորություն կընձեռվի բողոքը շարադրել իրենց համար հասկանալի լեզվով, կամ նրանց կտրամադրվի թարգմանիչ:

[38] Հանցագործության զոհերին առանց անհարկի հապաղման պետք է բացատրվի՝ հանցագործության կատարման մասին նրանց բողոքի հիման վրա հարուցված քրեական գործի վերաբերյալ հետևյալ տեղեկությունները ստանալու իրավունքը, եթե այդ տեղեկությունները տրամադրելու մասին խնդրել է զոհը.

ա) ցանկացած որոշում, որով մերժվում է քրեական վարույթ հարուցելը, կամ դադարեցվում են քննչական գործողությունները, կամ մերժվում է հանցագործի նկատմամբ վարույթի իրականացումը.

բ) դատավարության ժամանակը և տեղը, ինչպես նաև հանցագործին ներկայացված մեղադրանքների բնույթը:

[39] Պետությունները պետք է ապահովեն, որ քրեական դատավարության լեզվին չտիրա-

6. հանցագործության զոհերի աջակցության ծառայությունների մատչելիության իրավունքը (հոդված 8)[40],

7. լսված լինելու իրավունքը (հոդված 10)[41],

8. քրեական գործի հարուցումը մերժելու որոշում կայացնելու իրավունքները (հոդված 11)[42],

9. վերականգնողական արդարադատության ընթացքում պաշտպանության միջոցների իրավունքը (հոդված 12)[43],

---

պետող հանցագործության զոհերին հնարավորություն կընձեռվի ստանալու անվճար բանավոր թարգմանություն: Չսահմանափակելով պաշտպանության իրավունքի կիրառումը՝ թույլատրվում է օգտագործել տեղեկատվական տեխնոլոգիաներ, ինչպիսիք են տեսահամաժողովները, հեռախոսակապը կամ համացանցը, բացառությամբ, երբ թարգմանչի ֆիզիկական ներկայությունն անհրաժեշտ է զոհի իրավունքները պատշաճ իրականացնելու կամ դատավարության ընթացքում կատարվածը հասկանալու համար:

[40] Հանցագործության զոհերը պետք է կարողանան անվճար և գաղտնի դիմել աջակցման ծառայություններին, որոնք ծառայություն կտրամադրեն քրեական դատավարությունից առաջ, դրա ողջ ընթացքում և դատավարությունից հետո: Անհրաժեշտության դեպքում աջակցություն պետք է ստանան նաև զոհի ընտանիքի անդամները: Աջակցման ծառայությունները հնարավորինս պետք է լինեն մասնագիտացված, անվճար և գաղտնի:

[41] Հանցագործության զոհերը պետք է լսված լինեն և կարողանան ներկայացնել ապացույցներ: Եթե ցուցմունք է տալիս հանցագործության զոհ երեխան, ապա պետք է պատշաճ կերպով հաշվի առնել նրա տարիքն ու հասունության աստիճանը:

[42] Հանցագործության զոհերը պետք է ունենան քրեական գործի հարուցումը մերժելու որոշման վերանայման իրավունք: Եթե ազգային օրենսդրությամբ սահմանված կարգով հանցագործության զոհերի դերակատարումը քրեական արդարադատության համակարգում որոշվում է միայն քրեական գործ հարուցելուց հետո, պետություններն առնվազն ծանր հանցագործությունների զոհերին պետք է իրավունք ընձեռեն վերանայելու քրեական գործի հարուցումը մերժելու որոշումները:

[43] Վերականգնողական արդարադատության իրականացման ընթացքում պետք է նախատեսվեն հանցագործության զոհերին երկրորդային և կրկնակի զոհացումից, սպառնալիքներից և վրեժից պաշտպանության միջոցներ: Այդ միջոցները պետք է ապահովեն, որ վերականգնողական արդարադատությանը մասնակցելու համաձայնություն հայտնած զոհերը պետք է հնարավորություն ունենան օգտվելու տրամադրվող և անվտանգության պահանջներին համապատասխանող վերականգնողական արդարադատության ծառայություններից՝ առնվազն հետևյալ պայմանների ապահովման դեպքում՝

ա) վերականգնողական արդարադատության ծառայությունները կիրառվում են միայն այն ժամանակ, երբ դա պայմանավորված է զոհի շահերով և բխում է անվտանգության նկատառումներից, զոհի գիտակցված համաձայնության առկայության դեպքում, որը կարող է վերացվել ցանկացած պահի.

բ) նախքան վերականգնողական արդարադատությանը մասնակցելու համաձայնություն հայտնելը՝ հանցագործության զոհը ստանում է լիարժեք և օբյեկտիվ տեղեկություններ այդ ընթացակարգի և հնարավոր հետևանքների մասին, ինչպես նաև տեղեկություններ՝ ցանկացած հաշտության իրականացման ընթացքի նկատմամբ վերահսկողության

10. իրավական օգնություն ստանալու իրավունքը (հոդված 13)[44],

11. ծախսերի հատուցման իրավունքը (հոդված 14)[45],

12. գույքի վերադարձման իրավունքը (հոդված 15)[46],

13. քրեական դատավարությունում հանցագործից փոխհատուցում ստանալու իրավունքը (հոդված 16)[47],

14. պաշտպանության իրավունքը (հոդված 18)[48],

15. տուժողի և հանցագործի միջև շփումը կանխելու իրավունքը (հոդված 19)[49],

16. քրեական գործի քննության ընթացքում հանցագործության զոհերի պաշտպանության իրավունքը (հոդված 20)[50],

---

մասին.

գ) հանցագործն ընդունել է գործի հիմնական հանգամանքները.

դ) ցանկացած համաձայնություն ձեռք է բերվում կամավոր հիմունքներով և կարող է հաշվի առնվել հետագա քրեական դատավարությունում.

ե) վերականգնողական արդարադատության այն բանակցությունները, որոնք հրապարակավ չեն անցկացվել և ունեն գաղտնի բնույթ, հետագայում բացահայտման ենթակա չեն, բացառությամբ կողմերի համաձայնության առկայության դեպքերի կամ գերակա հանրային շահերի առկայության դեպքում՝ ազգային օրենսդրության համաձայն:

[44] Հանցագործության զոհերը հնարավորություն ունեն ստանալու իրավաբանական օգնություն:

[45] Հանցագործության զոհերը պետք է ստանան այն ծախսերի հատուցումը, որոնք առաջացել են քրեական դատավարությունում ակտիվ մասնակցելու հետևանքով:

[46] Հանցագործության զոհի առգրավված գույքը լիազոր մարմնի որոշմամբ հնարավորինս կարճ ժամկետում պետք է վերադարձվի զոհին, բացառությամբ այն դեպքերի, երբ գույքն անհրաժեշտ է քրեական դատավարության նպատակների համար:

[47] Պետությունները պետք է երաշխավորեն (ձեռնարկելով համապատասխան միջոցներ) քրեական դատավարության ընթացքում ողջամիտ ժամկետում հանցագործից փոխհատուցում ստանալու զոհերի իրավունքը, բացառությամբ այն դեպքերի, երբ ազգային օրենսդրությամբ նախատեսված է նման որոշում կայացնելու այլ կարգ:

[48] Չխախտելով պաշտպանության իրավունքը՝ պետությունները պետք է ապահովեն հանցագործության զոհերի և նրանց ընտանիքի անդամների համար պաշտպանության միջոցների հասանելիությունը՝ պաշտպանելով երկրորդային և կրկնակի զոհացումից, սպառնալիքից ու վրեժից, այդ թվում՝ հուզական և հոգեբանական վնասի վտանգից:

[49] Պետությունները պետք է ձեռնարկեն դատավարական գործողությունների իրականացման սենյակներում հանցագործության զոհերի և նրանց ընտանիքի անդամների ու հանցագործի միջև շփումները կանխելուն ուղղված համապատասխան միջոցներ՝ բացառությամբ գործի հանգամանքներով պայմանավորված դեպքերի:

[50] Պետություններն ապահովում են, որ քրեական գործի քննության ընթացքում՝

ա) հանցագործության զոհերի հարցաքննություններն իրականացվեն առանց անհարկի հապաղման՝ լիազոր մարմնին հանցագործության կատարման մասին դիմում ներկայացնելուց անմիջապես հետո.

բ) հանցագործության զոհերի հարցաքննությունների թիվը հասնի նվազագույնի, և

17. մասնավոր կյանքի պաշտպանության իրավունքը (հոդված 21)[51],

18. հանցագործության զոհերի հատուկ կարիքների բացահայտմանն ուղղված անհատական գնահատման իրավունքը (հոդված 22)[52],

19. քրեական դատավարությունում պաշտպանության հատուկ կարիք ունեցող հանցագործության զոհերի պաշտպանության իրավունքը (հոդված 23),

20. քրեական դատավարությունում հանցագործության զոհ երեխաների պաշտպանության իրավունքը (հոդված 24):

Հատուկ պաշտպանության կարիք ունեցող անձինք հատուկ կարիքների առանձնահատկություններով տարբերվում են դատավարության մյուս մասնակիցներից, ինչի հետևանքով վարույթ իրականացնող մարմինն առաջնահերթ պետք է պարզի այդ կարիքների առկայությունը:

Հատուկ ուշադրություն պետք է դարձվի հանցագործության զոհերի նկատմամբ հարգալից վերաբերմունքի և վարույթին մասնակցելու վերաբերյալ հիմնավորված որոշում կայացնելու աջակցմանը: Այս առումով, հատկապես կարևոր տեղեկություններ են համարվում վարույթի ընթացքի մասին հստակ պատկերացում ստանալու հնարավորություն

հարցաքննությունն անցկացվում է քրեական դատավարության նպատակներից ելնելով՝ խիստ անհրաժեշտության դեպքում.

գ) զոհերն ունենան օրինական ներկայացուցչի կամ զոհի կողմից ընտրած անձի ուղեկցության իրավունք, բացառությամբ, երբ պատճառաբանված որոշում է կայացվել հակառակի մասին.

դ) բժշկական զննությունները հասցվեն նվազագույնի և անցկացվեն քրեական դատավարության նպատակներից ելնելով՝ խիստ անհրաժեշտության դեպքում:

[51] Պետությունները պետք է ապահովեն, որ քրեական դատավարության ընթացքում լիազոր մարմինների կողմից որոշում կայացվի անձի մասնավոր կյանքը պաշտպանող անհրաժեշտ միջոցների կիրառման մասին, այդ թվում՝ պետք է պաշտպանվեն Հրահանգի 22–րդ հոդվածով սահմանված անհատական տվյալները, ներառյալ՝ զոհի և նրա ընտանիքի անդամների նկարները: Բացի այդ՝ պետությունները պետք է ապահովեն, որ մարմինները կիրառեն բոլոր միջոցները՝ ուղղված հանցագործության զոհ երեխային բացահայտող ցանկացած տեղեկատվության տարածման կանխմանը: Ապահովելով մասնավոր կյանքի, անձնական անձեռնմխելիության և զոհի անձնական տվյալների պաշտպանությունը՝ պետությունները պետք է ապահովեն նաև խոսքի և տեղեկատվության ազատության, զանգվածային լրատվամիջոցների ազատության և բազմակարծության սկզբունքները, խրախուսեն լրատվամիջոցներին ընդունելու ինքնակարգավորման միջոցներ:

[52] Քանի որ Հրահանգի 22–րդ, 23–րդ և 24–րդ հոդվածները վերաբերելի են զոհերի հատուկ պաշտպանությանը, դրանք մանրամասն կքննարկվեն սույն ձեռնարկի հաջորդ դասում:

ընձեռող տեղեկությունների տրամադրումը: Դա վերաբերում է նաև այն տեղեկատվությանը, որով թույլատրվում է զոհին բողոքարկելու քրեական գործ հարուցելու մերժման մասին որոշումը: Եթե այլ բան նախատեսված չէ, զոհին տեղեկությունը պետք է տրամադրվի բանավոր կամ գրավոր, այդ թվում՝ էլեկտրոնային միջոցներով:

Տուժողը կամ վկան պետք է գիտակցի իր մասնակցությունը և դրա կարևորությունը:

ԵՄ հրահանգի 22–րդ հոդվածի համաձայն՝ պետությունները պետք է ապահովեն, որ ազգային ընթացակարգերին համապատասխան հանցագործության զոհերը ժամանակին անցնեն **անհատական գնահատում՝ երկրորդային և կրկնակի զոհացման**, **սպառնալիքի կամ վրեժի հանդեպ նախատրամադրվածության տեսանկյունից՝** Հրահանգի 23–րդ և 24–րդ հոդվածներով նախատեսված պաշտպանության հատուկ կարիքների բացահայտման և հատուկ միջոցների կիրառման արդյունավետության աստիճանը որոշելու նպատակով: Անհատական գնահատումն իրականացնելիս պետք է մասնավորապես հաշվի առնել՝

ա) զոհի անհատական բնութագիրը,

բ) հանցագործության տեսակն ու բնույթը,

գ) հանցագործության կատարման հանգամանքները:

Այդ գնահատման անցկացման դեպքում հատուկ ուշադրություն պետք է դարձնել այն զոհերին, ում ծանր հանցագործությամբ պատճառվել է էական վնաս, կամ հանցագործությունը կատարվել է ատելության շարժառիթով կամ խտրականությունից ելնելով, ինչը հնարավոր է պայմանավորված լինի անձնական հատկանիշներով: Հետևաբար անհրաժեշտ է պատշաճ կերպով ուսումնասիրել ահաբեկչության, կազմակերպված հանցավորության, մարդու թրաֆիքինգի կամ շահագործման, սեռով պայմանավորված բռնության, ընտանեկան բռնության, սեռական բռնության, ատելության շարժառիթով կատարված հանցագործությունների զոհերի, ինչպես նաև սահմանափակ կարողություններով զոհերի վերաբերյալ դեպքերը:

Տուժողի կարիքների գնահատմանը քննիչը կարող է ներգրավել մասնագետ (հոգեբան, սոցիալական ծառայող, մանկավարժ և այլն):

Հանցագործության զոհ երեխաներն ունեն պաշտպանության հատուկ կարիք՝ ելնելով երկրորդային և կրկնակի զոհացման, սպառնալիքի և վրեժի հանդեպ նախատրամադրվածությունից: Երեխաները նույնպես անցնում են նախատեսված անհատական գնահատում, սակայն անհատական գնահատման սահմանները կարող են տարբերվել՝ կախված հանցագործության ծանրության աստիճանից և զոհին պատճառված ուղղակի վնասից:

ԵՄ հրահանգի 23–րդ հոդվածի համաձայն՝ պետություններն ապահովում են, որ անհատական գնահատմամբ պաշտպանության հատուկ կարիք ունեցող հանցագործության զոհերը նախաքննության ընթացքում[53] կարող են օգտվել հետևյալ հնարավորություններից.

1) հանցագործության զոհերի հարցաքննությունների անցկացումն այդ նպատակի համար նախատեսված կամ հարմարեցված սենյակներում.

2) հանցագործության զոհերի հարցաքննությունների անցկացումը հատուկ վերապատրաստված մասնագետների կողմից կամ նրանց մասնակցությամբ.

3) հանցագործության զոհերի բոլոր հարցաքննությունների անցկացումը նույն անձի կողմից, եթե դա չի հակասում արդարադատության պատշաճ իրականացմանը.

4) սեռական, սեռով պայմանավորված և ընտանեկան բռնության զոհերի բոլոր հարցաքննությունները, բացառությամբ դատախազի կամ դատավորի կողմից անցկացվող հարցաքննությունների, զոհի ցանկու-

[53] Դատաքննության ընթացքում հանցագործության զոհերը կարող են օգտվել զոհի և հանցագործի անմիջական շփումը բացառող միջոցներ, այդ թվում օգտագործել ապացույցներ ներկայացնելու ընթացքում կիրառելով համապատասխան եղանակներ, ներառյալ՝ հեռահաղորդակցման տեխնոլոգիաների կիրառմամբ. դատարանի դահլիճից զոհի բացակայության պայմաններում նրա ձայնը լսելու հնարավորության ապահովում, մասնավորապես համապատասխան հեռահաղորդակցման տեխնոլոգիաների կիրառմամբ. հարցաքննության ընթացքում հանցագործության հետ որևէ առնչություն չունեցող հանցագործության զոհի մասնավոր կյանքի մանրամասների մասին ավելորդ հարցադրումներից խուսափելու հնարավորություն ընձեռող միջոցներ և դռնփակ դատական լսումներ անցկացնելու հնարավորություն:

թյամբ կարող են իրականացվել զոհի հետ նույն սեռի ներկայացուցչի կողմից, այն պայմանով, որ դա չի հակասում արդարադատության պատշաճ իրականացմանը:

Անհատական գնահատման արդյունքում նախատեսված հատուկ միջոցները չպետք է կիրառվեն, եթե կազմակերպչական կամ գործնական սահմանափակումները դրանց կիրառումը դարձնում են անհնարին, ինչպես նաև այն դեպքերում, երբ առկա է զոհին հարցաքննելու հրատապ անհրաժեշտություն, և եթե նման գործողության չիրականացումը կարող է հանգեցնել հանցագործության զոհին կամ որևէ երրորդ անձին վնաս պատճառելուն կամ կարող է բացասաբար ազդել դատավարության արդյունքների վրա:

Ի լրումն ԵՄ հրահանգի 23–րդ հոդվածում նախատեսված միջոցների՝ Հրահանգի 24–րդ հոդվածի համաձայն՝ հանցագործության զոհ երեխայի[54] դեպքում պետությունները պետք է ապահովեն, որ՝

1) քրեական գործի քննության ընթացքում հանցագործության զոհ երեխայի մասնակցությամբ բոլոր հարցաքննությունները տեսաձայնագրվեն, և նման տեսաձայնագրությունները քրեական դատավարությունում օգտագործվեն որպես ապացույց.

2) լիազոր մարմինները հանցագործության զոհ երեխայի համար նշանակեն հատուկ ներկայացուցիչ, եթե ազգային օրենսդրությամբ սահմանված կարգով ծնողական պարտականություններ իրականացնող անձանց արգելվում է ներկայացնել երեխայի շահերը՝ այնպիսի անձանց և հանցագործության զոհ երեխայի միջև շահերի բախման հետևանքով, կամ եթե հանցագործության զոհ երեխան չունի ուղեկցող անձ կամ բաժանվել է ընտանիքից.

3) այն դեպքում, երբ հանցագործության զոհ երեխան ունի փաստաբանական ծառայություններ ստանալու իրավունք, և եթե առկա է կամ կարող է լինել շահերի բախում հանցագործության զոհ երեխայի և ծնողական պարտականություններ իրականացնող անձանց միջև, երեխան

[54] Հարկ է նշել, որ սույն ձեռնարկում «երեխա» և «անչափահաս» եզրույթներն օգտագործվում են որպես հոմանիշներ: Որպես *երեխա (անչափահաս) հանդիսանում է տասնութ տարին չլրացած ցանկացած անձ:*

ունի նաև իրավաբանական օգնություն ստանալու և փաստաբանի կողմից իր անունից դատավարությունում շահերի ներկայացման իրավունք:

Հատուկ պաշտպանության կարիք ունեցող խմբերից առաջնայինը երեխաներն են: Անձին պետք է վերաբերվել որպես երեխա, եթե նրա տարիքն անհայտ է, և հիմքեր կան ենթադրելու, որ նրա 18 տարեկանը դեռ չի լրացել:

Տուժող կամ վկա անչափահասները

Տուժող կամ վկա անչափահասների պարագայում պետք է հարգվեն փոխկապակցված հետևյալ սկզբունքները.

ա) ***արժանապատվություն***. յուրաքանչյուր երեխա յուրօրինակ և բարձրարժեք մարդկային էակ է, և որպես այդպիսին՝ նրա անհատական արժանապատվությունը, հատուկ կարիքները, հետաքրքրությունները և անձնական կյանքը պետք է հարգվեն և պաշտպանվեն.

բ) ***խտրականության բացառում***. յուրաքանչյուր երեխա արդարացի և հավասար վերաբերմունքի իրավունք ունի՝ անկախ իր, իր ծնողի կամ օրինական ներկայացուցչի ռասայից, ծագումից, մաշկի գույնից, սեռից, լեզվից, կրոնից, քաղաքական կամ այլ հայացքներից, ազգային, էթնիկ կամ սոցիալական ծագումից, գույքային դրությունից, հաշմանդամությունից, ծննդյան կամ այլ կարգավիճակից.

գ) ***երեխայի լավագույն շահ***. յուրաքանչյուր երեխա իրավունք ունի պահանջելու, որպեսզի իր լավագույն շահերին առաջնային ուշադրություն դարձվի: Դա ներառում է պաշտպանության և ներդաշնակ զարգացման հնարավորությունների իրավունքը:

Տուժող կամ վկա անչափահասն առնվազն ունի հետևյալ իրավունքները.

1. արժանապատիվ ու կարեկցող վերաբերմունքի արժանանալու իրավունք,

2. խտրականությունից պաշտպանված լինելու իրավունք,

3. տեղեկացված լինելու իրավունք,

4. լսված լինելու և տեսակետներ ու մտահոգություններ արտահայտելու իրավունք (իր տարիքին և զարգացվածությանը համապատասխան),

5. արդյունավետ օժանդակություն ստանալու իրավունք,

6. մասնավոր կյանքի գաղտնիության իրավունք,

7. արդարադատության գործընթացում զրկանքներից պաշտպանված լինելու իրավունք,

8. անվտանգության իրավունք,

9. պատճառված վնասի հարթման իրավունք,

10. հատուկ կանխարգելիչ միջոցների իրավունք[55]:

ՔՆՆԱՐԿՈՒՄ

15 տարեկան տղա երեխան հայտնում է, որ ինքը ենթարկվել է ավազակային հարձակման: Երեխան եղել է մենակ, նա 20:00–ին տնից դուրս է եկել խանութ գնալու նպատակով, և նրանից հափշտակել են իր մոտ առկա ամբողջ գումարը՝ 10000 ՀՀ դրամ:

Ինչպե՞ս կարտահայտվի երեխայի նկատմամբ հարգալից և արդարացի վերաբերմունքը:

Նախաքննությունն իրականացնելիս քննիչները պարտավոր են դրսևորել երեխաների նկատմամբ զգայուն մոտեցում, այսինքն՝ դրսևորել երեխայի նկատմամբ այնպիսի մոտեցում, որի դեպքում առաջնային ուշադրություն է դարձվում երեխայի պաշտպանության իրավունքին և հաշվի են առնվում երեխայի անհատական կարիքներն ու տեսակետները՝ նախապատվություն տալով երեխայի լավագույն շահին:

Երեխայի հետ վարվի՛ր այնպես, ինչպես կցանկանայիր, որ վարվեին քո երեխայի հետ, այսինքն՝ հարգալից և արդարացի:

Երեխայի լավագույն շահի հասկացությունն ազգային օրենսդրությամբ նախատեսված չէ, սակայն այն որոշվում է հստակ չափանիշներով, որոնց ամրագրմանն ուղղված աշխատանքներ տարվում են[56]: ՀՀ վճռա-

[55] Մանրամասն տե՛ս Թումասյան Դ., Գրավեսոն Ք., Օրենքի հետ առնչվող երեխաների նկատմամբ վերաբերմունքի ընդհանուր կանոններն ու առանձնահատկությունները (ձեռնարկ քննիչների համար), Երևան, 2016, էջ 11:

[56] Մասնավորապես՝ ՀՀ ընտանեկան օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ

բեկ դատարանը չնայած չի ամրագրել «երեխայի լավագույն շահ» հասկացությունը, սակայն իր 2012 թ. մարտի 23–ին թիվ ԵԱՔԴ/0474/02/11 քաղաքացիական գործով կայացրել է նախադեպային որոշում, որում մասնավորաբար նշել է՝ «...դատարանները երեխայի իրավունքները շոշափող ցանկացած գործ քննելիս առաջնայնությունը պետք է տան **երեխայի շահերի առավել ապահովմանը**: .... Ընդ որում՝ դատարանը հաշվի է առնում երեխայի կապվածությունը ծնողներից յուրաքանչյուրի, քույրերի ու եղբայրների հետ, երեխայի տարիքը, ծնողների բարոյական և անձնական այլ հատկանիշներ, ծնողներից յուրաքանչյուրի և երեխայի միջև գոյություն ունեցող հարաբերությունները, երեխայի դաստիարակության ու զարգացման համար պայմաններ ստեղծելու հնարավորությունը (ծնողների գործունեության (աշխատանքի) բնույթը, նրանց գույքային ու ընտանեկան դրությունը և այլն)»[57]: Այս նախադեպային որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանը փաստացի տարբերակում է օրինականությունն ու երեխայի շահերի ապահովումը և հորդորում է ստորադաս դատարաններին առավել արդյունավետ ապահովելու երեխայի շահերը:

կատարելու մասին ՀՀ օրենքի նախագծի 1–ին հոդվածի համաձայն՝ նախատեսվում է ՀՀ ընտանեկան օրենսգրքի 1–ին հոդվածի 1–ին մասում լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ չորրորդ և հինգերորդ պարբերություններ.

«Երեխայի նկատմամբ իրականացվող ցանկացած գործողություն պետք է բխի նրա լավագույն շահերից: Երեխայի լավագույն շահերի ապահովումն ուղղված է երեխայի իրավունքների արդյունավետ և ամբողջական իրականացմանը, ինչպես նաև երեխայի զարգացմանը՝ հաշվի առնելով երեխայի մտավոր և ֆիզիկական կարիքները, այդ կարիքների բավարարման համար համապատասխան խնամքի առկայությունը, երեխայի զարգացման համար ծնողի և ընտանիքի այլ անդամների հետ շփվելու կարևորությունը, ինչպես նաև երեխայի մշակութային, լեզվական, հոգևոր կամ կրոնական կապերը կամ դաստիարակությունն ու նշանակությունն ընտանեկան միջավայրում և այլ կարիքներ և պահանջներ (այսուհետ՝ Երեխայի լավագույն շահեր):

Եթե որևէ նորմ կարող է տարաբնույթ մեկնաբանվել, ապա այն մեկնաբանվում է՝ ի օգուտ երեխայի: Երեխայի իրավունքներն ունեն նախապատվություն ծնողների իրավունքների նկատմամբ»:

[57] Քաղաքացիական գործ թիվ **ԵԱՔԴ/0474/02/11**՝ Գուրգեն Խալաթյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 14.12.2011 թ. որոշման դեմ՝ ըստ հայցի Անի Մարտիրոսյանի ընդդեմ Գուրգեն Խալաթյանի՝ երեխայի խնամքն ու դաստիարակությունը մորը հանձնելու և երեխայի բնակության վայրն ըստ մոր բնակության վայրի որոշելու պահանջների մասին և ըստ Գուրգեն Խալաթյանի հակընդդեմ հայցի՝ Անի Մարտիրոսյանին ծնողական իրավունքներից զրկելու, երեխայի խնամքն ու դաստիարակությունը հորը հանձնելու պահանջների մասին:

Երեխայի լավագույն շահի պաշտպանությանը ՀՀ վճռաբեկ դատարանն անդրադարձել է նաև ծնողական իրավունքների սահմանափակման վերաբերյալ գործերով, մասնավորապես թիվ **ԵԱԴԴ/1513/02/08**[58] և **ԵԱՔԴ/1095/02/08**[59] քաղաքացիական գործերով:

Հանցագործության տուժող կամ վկա երեխաների լավագույն շահի պաշտպանությունն առաջնահերթ է:

Բոլորս ունենք երեխային, մասնավորապես տուժող կամ վկա երեխային պաշտպանելու պարտականություն:

Խոցելի չափահասները

Քննիչները պետք է հստակ գիտակցեն, որ խոցելի կարող են լինել նաև չափահաս անձինք, ովքեր նույնպես կարող են երկրորդային կամ կրկնակի զոհացման ենթարկվել և ունեն պաշտպանության լրացուցիչ կարիք նախաքննության ողջ ընթացքում:

ՔՆՆԱՐԿՈՒՄ

Յուրաքանչյուր քննիչ ներկայացնում է չափահաս մեկական տուժողի, ով կարող է համարվել խոցելի՝ հիմնավորելով խոցելության հատկանիշները:

---

[58] Քաղաքացիական գործ թիվ **ԵԱԴԴ/1513/02/08՝** Մարգարիտ Հովհաննիսյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 10.11.2010 թ. որոշման դեմ՝ ըստ հայցի Մարգարիտ Հովհաննիսյանի ընդդեմ Արթուր Թորոսյանի, երրորդ անձ Երևանի Դավթաշեն վարչական շրջանի խնամակալության և հոգաբարձության մարմնի՝ երեխայի հետ տեսակցության կարգ սահմանելու պահանջի մասին և Արթուր Թորոսյանի հակընդդեմ հայցի՝ ծնողական իրավունքները սահմանափակելու պահանջի մասին:

[59] Քաղաքացիական գործ թիվ **ԵԱՔԴ/1095/02/08՝** Ռազմիկ Հարությունյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 27.05.2009 թ. որոշման դեմ՝ ըստ Սոֆյա Ավետիսյանի, Մերուժան Ավետիսյանի, Մանե Ավետիսյանի հայցի ընդդեմ Ռազմիկ Հարությունյանի, Ամալյա Ստեփանյանի՝ երեխայի հետ շփման, խնամքին ու դաստիարակությանը մասնակցելու կարգ սահմանելու պահանջների մասին, և ըստ Սոֆյա Ավետիսյանի, Մերուժան Ավետիսյանի հայցի ընդդեմ Ռազմիկ Հարությունյանի՝ երեխայի նկատմամբ Ռազմիկ Հարությունյանի ծնողական իրավունքը սահմանափակելու և երեխայի խնամքն ու դաստիարակությունը Սոֆյա Ավետիսյանին և Մերուժան Ավետիսյանին հանձնելու պահանջների մասին:

Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին ՄԱԿ–ի Կոնվենցիայի 1–ին հոդվածի համաձայն՝ սույն Կոնվենցիայի նպատակն է աջակցել, պաշտպանել և ապահովել հաշմանդամություն ունեցող անձանց՝ լիարժեքորեն և հավասարապես օգտվել մարդու իրավունքներից և հիմնարար ազատություններից, ինչպես նաև ապահովել հարգանքը նրանց արժանապատվության նկատմամբ: Հաշմանդամություն ունեցող անձ են համարվում նրանք, ովքեր երկար ժամանակ տառապում են ֆիզիկական, հոգեկան, մտավոր և նյարդային հիվանդություններով, ում տարբեր արգելքների հետ փոխազդեցության արդյունքում կարող են խոչընդոտել, որ նրանք լիակատար և արդյունավետ մասնակցեն հասարակական կյանքին մյուսների հետ հավասար հիմունքներով:

Նույն Կոնվենցիայի 13–րդ հոդվածի համաձայն՝ մասնակից պետությունները հաշմանդամություն ունեցող անձանց մյուսների հետ հավասար հիմունքներով ապահովում են արդարադատության մատչելիությամբ՝ տրամադրելով նաև ընթացակարգային ու տարիքին համապատասխան այնպիսի հնարավորություններ, որոնք հնարավորություն կտան ապահովելու նրանց արդյունավետ մասնակցությունը՝ որպես ուղղակի կամ անուղղակի մասնակիցներ, ինչպես նաև՝ որպես վկաներ, դատական բոլոր ընթացակարգերին, նաև՝ քննչական և այլ նախնական փուլերում[60]:

Քննիչները պետք է տարբերեն, որ որոշ չափահաս տուժողներ և վկաներ կարող են լինել խոցելի անձնական հատկանիշներով: Խոցելի չափահասներից են նրանք, ովքեր ունեն հոգեկան հիվանդություն, տկարամտություն կամ ֆիզիկական հաշմանդամություն, որն ազդում է նրանց գիտակցելու և ընկալելու ունակության վրա[61]: Միջազգային պրակտիկայում հաշմանդամություն ունեցող անձ ասելով պետք է հասկանալ՝

[60] Որպեսզի աջակցեն հաշմանդամություն ունեցող անձանց համար արդարադատության մատչելիության ապահովմանը, պետությունները պետք է կազմակերպեն համապատասխան ուսուցողական դասընթացներ արդարադատության վարչական համակարգի աշխատակիցների, ինչպես նաև ոստիկանության և կալանավայրերի անձնակազմերի համար:

[61] The United Kingdom Ministry of Justice, Achieving Best Evidence in Criminal Proceedings: Guidance on interviewing victims and witnesses, and guidance on using special measures, (2011) Crown Prosecution Service.

• **Ֆիզիկական և հոգեբանական խանգարումներ ունեցող անձանց**,

• **մտավոր հաշմանդամություն**, **աուտիզմ**, **հոգեկան հիվանդություններ ունեցող անձանց**,

• **թմրամոլների և ալկոհոլամոլների**,

• **բուժման հետևանքով թաքնված հաշմանդամություն ունեցող անձանց** (**տառապում են էպիլեպսիայով**, **ռևմատիզմով**, **շաքարախտով և այլ քրոնիկ հիվանդություններով**),

• **տերմինալ հիվանդություններ**, **այդ թվում՝ ծերունական թուլամտություն**, **ՁԻԱՀ և այլն**, **ունեցող անձանց** [62]:

«Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 2–րդ հոդվածի համաձայն՝ հաշմանդամ է համարվում այն անձը, ով, առողջության խաթարմամբ պայմանավորված, կենսագործունեության սահմանափակումների հետևանքով ունի սոցիալական պաշտպանության անհրաժեշտություն: Անձը հաշմանդամ ճանաչվում է բժշկասոցիալական փորձաքննության եզրակացության հիման վրա:

Տուժողի կամ վկայի խոցելիությունը որոշվում է ոչ թե փորձաքննության արդյունքում հաշմանդամ ճանաչելու դեպքում, այլ այն դեպքում, երբ միջազգայնորեն ճանաչված չափանիշների հիման վրա անձն ունի հատուկ վերաբերմունքի ու պաշտպանության կարիք:

Խոցելի չափահաս տուժողների և վկաների բացահայտման գնահատումն իրականացվում է անձնական բնութագրերի հիման վրա՝ որոշելով նրանց ունակությունը գիտակցելու քրեական վարույթը և մասնակցել դրան՝ հաշվի առնելով հետևյալ հանգամանքները.

– **հոգեկան խանգարումներով անձանց հայտնաբերումը կարող է բարդացված լինել հիվանդության փուլային ընթացքով, և խանգարումը հնարավոր լինի բացահայտել միայն սրացման պահին**,

– **կարճ հարցազրույցը կամ կոնտակտը բավարար չէ հոգեկան խանգարումը բացահայտելու համար**, **սակայն եթե ախտո-**

[62] H. Brown, Safeguarding adults and children with disabilities against abuse, (2003, Council of Europe Publishing), էջ 21: Available at: http://www.coe.int/t/e/social_cohesion/soc–sp/Abuse%20_E%20in%20color.pdf [դիտվել է 21 մարտ, 2016].

որոշումն արդեն առկա լինի, այն պետք է ընդունվի որպես փաստ,

– ալկոհոլի կամ թմրամիջոցի կիրառումը, ինչպես նաև դրանցից հրաժարվելը կարող է վատթարացնել անձի հոգեկան վիճակը,

– հաշմանդամության պարզումը ոչ թե կոնկրետ արատի ուսումնասիրությունն է, այլ տարաբնույթ գործոնների համակցության հստակեցում, որոնք կարող են ազդել անձի ընկալման կամ սոցիալական վարքի վրա,

– հաշմանդամության ունիվերսալ սահմանում չկա, այն որոշվում է անձի ինտելեկտուալ և սոցիալական թերությունների կամ խանգարումները հաշվի առնելով,

– երբեմն հաշմանդամություն ունեցող անձն արտաքնապես կարող է չնույնացվել որպես այդպիսին՝ ելնելով նրա խոսելու ու շփվելու ունակությունից, բայց դա չի նշանակում, որ անձը գիտակցում է իրականությունն ու քրեական վարույթի նպատակն ու իմաստը,

– ֆիզիկական հաշմանդամության բացահայտումն առավել դյուրին է, քան հոգեկանը,

– ֆիզիկական հաշմանդամության դեպքում պետք է պարզել դրա ազդեցությունը ցուցմունք տալու ընթացքի և դրանց բովանդակության վրա[63]:

Բացի օբյեկտիվ հանգամանքներով պայմանավորված խոցելիությունից, ինչպես արդեն նշվել է, առկա է նաև հանցագործության բնույթով և հանգամանքներով պայմանավորված խոցելիություն: Նման խոցելիությունն իր տարածվածությամբ ավելին է, քան առաջինը:

ՀՀ քր. դատ. օր. 86–րդ հոդվածի 2–րդ մասի 1–ին կետի համաձայն՝ որպես վկա չեն կարող կանչվել և հարցաքննվել անձինք, որոնք ֆիզիկական կամ հոգեկան պակասությունների հետևանքով ունակ չեն ճիշտ ընկալելու և վերարտադրելու քրեական գործով պարզելու ենթակա հանգամանքները: Խոցելի այլ խմբերի մասին որևէ տեղեկություն չկա, սակայն միջազգային միտումների համատեքստում դա առավել կարևոր է:

[63] The United Kingdom Ministry of Justice, Achieving Best Evidence in Criminal Proceedings: Guidance on interviewing victims and witnesses, and guidance on using special measures, (2011) Crown Prosecution Service, էջ 29–30:

Հանցագործության բնույթով և հանգամանքներով պայմանավորված խոցելիությունը որոշելիս հաշվի են առնում՝

– **հանցագործության բնույթը**,

– **հանցագործության ծանրացնող հանգամանքները**,

– **հանցագործության ուղղակի և անուղղակի հետևանքները** (**իրական և հնարավոր**),

– **հանցագործության շարժառիթներն ու նպատակները**,

– **հանցագործի և տուժողի փոխհարաբերությունները**:

Այս հանգամանքներով պայմանավորված խոցելիությունը հանգեցնում է նրան, որ տուժողը քննության ընթացքում ավելի զգայուն է սպառնալիքների նկատմամբ, և առկա է կրկնազոհացման իրական վտանգ, ինչը պայմանավորված է վերջինիս անհատական առանձնահատկություններով:

Հանցագործության բնույթով և հանգամանքներով պայմանավորված խոցելիությունը պետք է գնահատվի բազմակողմանի:

Իհարկե, հանցագործության հանգամանքները կրում են անհատական բնույթ և քննիչների կողմից տարբերակված են ուսումնասիրվում, սակայն վերը նշված հատկանիշով պայմանավորված խոցելի անձանց լայն շրջանակի առկայությունը չի կարող անտեսվել: Հետազոտությունները ցույց են տալիս, որ տուժողների և վկաների նկատմամբ սպառնալիքներն առավել տարածված են սեռական և ընտանեկան հանցագործությունների դեպքում, այն դեպքերում, երբ հանցագործն ու տուժողը/վկան ծանոթ են, կրկնազոհացման դեպքում, ռասայական շարժառիթներով կատարված հանցագործությունների դեպքում: Երբեմն վկաները վախենում են արդյունավետ ապացույց չներկայացնելու մտքից, ինչից ելնելով՝ առաջանում է լրացուցիչ աջակցության և օգնության կարիք[64]:

Որոշ երկրներում, մասնավորապես Մեծ Բրիտանիայում սեռական

[64] The United Kingdom Ministry of Justice, Achieving Best Evidence in Criminal Proceedings: Guidance on interviewing victims and witnesses, and guidance on using special measures, (2011) Crown Prosecution Service, էջ 6:

և ընտանեկան բռնության զոհերը, ռասայական, կրոնական, սեռական կողմորոշման շարժառիթներով կատարված հանցագործությունների, բանդիտիզմի զոհերը, կրկնակի զոհ դարձած անձինք, ինչպես նաև տարեց և թույլ/հիվանդ մարդիկ համարվում են խոցելի խմբերի ներկայացուցիչներ[65]:

Ստորև կքննարկվեն հանցագործության բնույթով և հանգամանքներով պայմանավորված խոցելի խմբերի ներկայացուցիչների իրավունքների պաշտպանությունը՝ առանձնացնելով կանանց որպես հատուկ խումբ:

ԹԵՄԱ 3. ԽՈՑԵԼԻ ՏՈՒԺՈՂՆԵՐԻ ԵՎ ՎԿԱՆԵՐԻ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆՆ ԱՊԱՀՈՎՈՂ ՔՆՆՉԱԿԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Դատավարության մասնակցի՝ խոցելի խմբի ներկայացուցիչ հանդիսանալու հանգամանքը պարզելուց հետո վարույթն իրականացնող մարմինը պետք է իրականացնի դատավարության կոնկրետ մասնակցի իրավունքների պաշտպանությունը:

Վկաների և տուժողների իրավունքների պաշտպանության ուսումնասիրության համատեղությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ միջազգային պրակտիկան տուժողների և վկաների (մասնավորապես ծանր և առանձնապես ծանր հանցագործության վկաների) նկատմամբ դրսևորում է նույն մոտեցումը՝ խրախուսելով պետություններին վկաներին դիտել նաև որպես հավանական տուժողներ: Առավելապես, երբ խոսվում է ծանր հանցագործության ականատեսների մասին, օրինակ՝ երեխան, ով ականատես է ընտանեկան բռնության: Տվյալ դեպքում նա նույնպես ենթարկվել է հոգեբանական բռնության:

ՄԻԵԿ–ի համատեքստում «վկա» հասկացության տակ ընկալվում են՝

[65] The United Kingdom Ministry of Justice, Achieving Best Evidence in Criminal Proceedings: Guidance on interviewing victims and witnesses, and guidance on using special measures, (2011) Crown Prosecution Service, para. 1.11. Available at: https://www.cps.gov.uk/publications/docs/best_evidence_in_criminal_proceedings.pdf, (դիտվել է 17 դեկտեմբեր, 2015).

- միևնույն գործով այլ մեղադրյալ (Տրոֆիմովն ընդդեմ Ռուսաստանի, վճիռ՝ 4 դեկտեմբերի, 2008 թ.),
- տուժողը (Ռոմանովն ընդդեմ Ռուսաստանի, վճիռ՝ 24 հուլիսի, 2008 թ.),
- փորձագետը (Դուրսն ընդդեմ Նիդերլանդների, վճիռ՝ 26 մարտի, 1996 թ.)[66]:

Հանցագործության տուժողը կամ վկան չպետք է վախենա իր կյանքի, առողջության, ազատության, անձեռնմխելիության համար: Այդ արժեքները չպետք է վտանգված լինեն բողոք ներկայացնելու կամ ցուցմունք տալու իր իրավունքն իրականացնելու արդյունքում և/ կամ դրա հետևանքով:

Խոցելի խմբի ներկայացուցիչ տուժողի կամ վկայի իրավունքները պաշտպանելիս քննիչը մասնավորապես կարող է կիրառել հետևյալ պաշտպանական միջոցները՝

1. *Անձնական անվտանգությունն ապահովելը, բնակարանը և այլ գույք պահպանելը:* ՀՀ քր. դատ. օր. 98.4–րդ հոդվածի համաձայն՝ քրեական վարույթն իրականացնող մարմինը, համագործակցելով այլ իրավասու մարմինների հետ, իրականացնում է պաշտպանվող անձի անձնական պահպանությունը, նրա բնակարանի կամ այլ գույքի պահպանությունը: Պաշտպանվող անձի բնակարանը կամ այլ գույք սարքավորվում է հակահրդեհային կամ ազդանշանային տեխնիկական միջոցներով, փոխվում են նրա բնակարանի կամ անձնական այլ հեռախոսահամարներ կամ նրան պատկանող տրանսպորտային միջոցի (միջոցների) պետական համարանիշեր:

ՀՀ–ում բացակայում է քրեական դատավարության ոլորտում պաշտպանվող անձի, անվտանգության ապահովման, նրա բնակարանի կամ գույքի պահպանության, դրանց նկատմամբ հսկողության իրականացման հարաբերությունները կարգավորող օրենսդրական ակտ: Մինչև օրենսդրական և ինստիտուցիոնալ կառուցակարգերի ձևավո-

[66] Մելքոնյան Դ., Հարությունյան Ս., ՄԻԵԴ նախադեպային իրավունքի հիմնահարցերը քրեական գործերով, Երևան, 2015, էջ 89:

րումը պաշտպանվող անձի անվտանգության պահպանությունը նրա բնակարանի կամ գույքի պահպանությունը կարող է իրականացվել ՀՀ ոստիկանության համապատասխան ստորաբաժանումների կողմից: Անհրաժեշտության դեպքում պետությունը կարող է նշված գործառույթը պատվիրել «Մասնավոր պահնորդական գործունեության մասին» ՀՀ օրենքի հիման վրա գործող թիկնապահական և պահնորդական ծառայություններ մատուցող կազմակերպություններին: «Մասնավոր պահնորդական գործունեության մասին» ՀՀ օրենքի 23–րդ հոդվածի համաձայն՝ իրավապահ մարմինների հետ համագործակցության ընթացքում թիկնապահական և պահնորդական գործունեություն իրականացնող կազմակերպությունների աշխատանքներն իրականացվում են հետևյալ հիմնական ուղղություններով՝ իրավակարգի պահպանում, քաղաքացիների իրավունքների և օրինական շահերի պաշտպանության ապահովում և այլն: Իրավապահ մարմինների հետ համագործակցությունն իրականացվում է համաձայնագրերի հիման վրա՝ տեղեկատվության փոխանակման, օրենսդրությամբ նախատեսված համատեղ կամ համաձայնեցված միջոցառումների անցկացման միջոցով: Նշված օրենքի 7–րդ հոդվածի 2–րդ մասի համաձայն՝ թիկնապահական և պահնորդական գործունեությունն իրականացնելիս կարող են մատուցվել հետևյալ ծառայությունները.

1) ֆիզիկական անձի կյանքի և առողջության պաշտպանությունն հակահիրավական ոտնձգություններից (այդ թվում՝ զենքի օգտագործմամբ).

2) սեփականության կամ օրինական տիրապետման ներքո գտնվող օբյեկտների, անշարժ և շարժական գույքի, տարածքի պահպանությունը.

3) պահպանվող օբյեկտներում անցագրային և ներօբյեկտային պայմանակարգերի ապահովումը.

4) հատուկ կապի և տրանսպորտային միջոցների տրամադրումը:

Պաշտպանվող անձի անվտանգությունը կարող է ապահովվել, օրինակ՝ թիկնապահ տրամադրելու եղանակներով: «Մասնավոր պահնորդական գործունեության մասին» ՀՀ օրենքի 2–րդ հոդվածի 1–ին մասի համաձայն՝ թիկնապահը պաշտպանվող անձի կյանքի և առողջության պաշտպանություն իրականացնելու համար օրենքով նախատեսված

որակավորում ունեցող, թիկնապահական և պահնորդական գործունեություն իրականացնող կազմակերպությունում պայմանագրային հիմունքներով աշխատող և կանոնադրական խնդիրներ իրականացնող ֆիզիկական անձ է: Պաշտպանվող անձի նկատմամբ հսկողություն կարող է սահմանվել նաև երրորդ անձանց համար անտեսանելի պայմաններում: Պաշտպանվող անձի անվտանգության ապահովումը չի ենթադրում պաշտպանվող անձի մեկուսացում իր միջավայրից, օրինակ՝ անթույլատրելի է պաշտպանվող անձին արգելել հանդիպել իր ազգականներին, մտերիմներին, դուրս գալ բնակարանից, կատարել հեռախոսազանգեր և այլն:

Պաշտպանվող անձի անվտանգության ապահովման, նրա բնակարանի կամ գույքի պահպանության ուղղությամբ միջոցներ ձեռնարկելիս ցանկալի է ձեռք բերել պաշտպանվող անձի գրավոր համաձայնությունը: Բանն այն է, որ սույն պաշտպանության միջոցի ձեռնարկման դեպքում կարող են սահմանափակվել անձի ազատությունը, մասնավոր կյանքը, սեփականության իրավունքի օգտագործման, տնօրինման և տիրապետման իրավազորությունները:

Պաշտպանվող անձանց անվտանգության ապահովման եղանակներից է պաշտպանվող անձի բնակարանի հրդեհային անվտանգությունը: «Հրդեհային անվտանգության մասին» ՀՀ օրենքի 27–րդ հոդվածի համաձայն՝ բնակավայրերը և օբյեկտները պետք է ապահովված լինեն հրդեհային պահպանությամբ, ինչպես նաև հակահրդեհային ջրամատակարարմամբ, շենքերին և շինություններին հարող մշտական գործող ճանապարհներով, կապի միջոցներով՝ համաձայն հակահրդեհային նորմատիվ փաստաթղթերի: Հրդեհային պահպանությունը՝ հրդեհների կանխարգելման, հրդեհաշիջման, ինչպես նաև դրանց հետ կապված վթարային–փրկարարական աշխատանքներ անցկացնելու նպատակով սահմանված կարգով ստեղծված պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների ուժերի և միջոցների, այդ թվում՝ հակահրդեհային միջոցների ամբողջություն է, իսկ հրդեհային անվտանգության ապահովման համակարգը՝ հրդեհների դեմ պայքարի համար նախատեսված ուժերի և միջոցների,

ինչպես նաև իրավական, կազմակերպական, տնտեսական, սոցիալական և գիտատեխնիկական միջոցառումների ամբողջություն է («Հրդեհային անվտանգության մասին» ՀՀ օրենքի 3–րդ հոդված):

2. Անհատական պաշտպանության միջոցներ տրամադրելը և վտանգի մասին հայտնելը: ՀՀ քր. դատ. օր. 98.5–րդ հոդվածի համաձայն՝ պաշտպանվող անձի անձնական անվտանգության ապահովման համար օրենսդրությամբ սահմանված կարգով նրան տրամադրվում են անհատական պաշտպանության միջոցներ, ինչպես նաև նրան հայտնվում է սպասվող վտանգի մասին: «Անհատական պաշտպանության միջոցների տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 11.11.2004 թ. թիվ 1631–Ն որոշման 4–րդ կետի համաձայն՝ անհատական պաշտպանության միջոց են համարվում ցանկացած սարք կամ հարմարանք և մի քանի սարքերից կամ հարմարանքներից բաղկացած միավորը, որը նախատեսված է մեկ կամ մի քանի վնասակար կամ վտանգավոր գործոններից՝ հնարավոր վտանգից մարդու և մարդու մարմնի կամ նրա առանձին մասերի պաշտպանության համար: Կանոնակարգով սահմանվում են անհատական պաշտպանության միջոցները, այն է՝ պաշտպանական հագուստ, ոտքերի, ձեռքերի, աչքի, լսողական օրգանների, գլխի և դեմքի, շնչառական օրգանների պաշտպանության միջոցներ, ջրում օգտագործման համար նախատեսված և խորտակվելուց պաշտպանվելու միջոցներ: Զենքի տրամադրման կարգը սահմանվում է «Զենքի մասին» ՀՀ օրենքով:

3. *Պաշտպանվող անձի՝ քրեական վարույթն իրականացնող մարմին ներկայանալու անվտանգությունն ապահովելը:* ՀՀ քր. դատ. օր. 98.7–րդ հոդվածի համաձայն՝ քրեական վարույթն իրականացնող մարմնի կանչով ներկայանալու համար անհրաժեշտության դեպքում պաշտպանվող անձի փոխադրման անվտանգությունն ապահովում է քրեական վարույթն իրականացնող մարմինը: Նշված պաշտպանության միջոցը կիրառվում է միայն պաշտպանվող անձի տեղաշարժման, այդ թվում՝ քննչական գործողություններին կամ դատական նիստին մասնակցելու նպատակով վարույթն իրականացնող մարմին ներկայանալու ժամանակ: Եթե անհրաժեշտություն կա պաշտպանվող անձի անվտանգու-

թյունն ապահովել ոչ միայն տեղաշարժման ընթացքում, այլև բնակարանում գտնվելու ժամանակահատվածում, ապա, որպես պաշտպանության միջոց, պետք է կիրառել պաշտպանվող անձի անվտանգության ապահովումը, քանի որ այդ պաշտպանության միջոցը ներառում է անվտանգության միջոցի կիրառում ոչ միայն պաշտպանվող անձի տեղաշարժի, այլ նաև բնակարանում, ուսումնական հաստատության կամ աշխատավայրում գտնվելու ընթացքում:

4. *Բնակության այլ վայր փոխադրելը:* ՀՀ քր. դատ. օր. 98.9–րդ հոդվածի համաձայն՝ պաշտպանվող անձը ժամանակավոր կամ մշտապես փոխադրվում է բնակության այլ վայր: Բնակության այլ վայր փոխադրելն իրականացվում է պաշտպանվող անձի գրավոր համաձայնությամբ, եթե առկա է այնպիսի իրադրություն, երբ պաշտպանվող անձի անձնական անվտանգությունը չի կարող ապահովվել այլ միջոցներով: Սույն պաշտպանության միջոցը կարող է կիրառվել, եթե՝

1. առկա է պաշտպանվող անձի գրավոր համաձայնությունը,

2. բացառվում են անձի անվտանգության ապահովումը պաշտպանության այլ միջոցներով:

Որպես բնակության վայր՝ կարող են համարվել հյուրանոցները, հանգստյան տները և այլն, որտեղ ապահովված կլինի պաշտպանվող անձի անվտանգությունը: Միևնույն ժամանակ, կարծում ենք, սույն պաշտպանության միջոցը չի ենթադրում առանց պաշտպանվող անձի համաձայնության, անվտանգության նպատակով նրան ազատազրկման վայրերում (մեկուսարաններում, քրեակատարողական հիմնարկներում) պահելը:

5. *Ինքնությունը հաստատող փաստաթղթերը փոխարինելը կամ պաշտպանվող անձի արտաքինը փոխելը:* ՀՀ քր. դատ. օր. 98.10–րդ հոդվածի համաձայն՝ անհրաժեշտության դեպքում կարող են փոխարինվել պաշտպանվող անձի ինքնությունը հաստատող փաստաթղթերը, ինչպես նաև կարող է փոխվել նրա արտաքինը: Փաստաթղթերի փոխարինումը, արտաքինը փոխելը, այդ թվում՝ պլաստիկ վիրահատությունը, իրականացվում են պաշտպանվող անձի գրավոր համաձայնությամբ, եթե առկա է այնպիսի իրադրություն, երբ պաշտպանվող անձի անձնական անվտանգությունը չի կարող ապահովվել այլ միջոց-

ներով: ՀՀ կառավարության «Անձը հաստատող փաստաթղթի մասին» 22.12.1999 թ. թիվ 767–Ն որոշման համաձայն՝ ՀՀ անձը հաստատող փաստաթղթերն են՝

ա) ՀՀ քաղաքացիների համար անձնագիրը, զինվորական գրքույկը, ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանության կողմից ժամանակավորապես տրվող՝ անձը (ինքնությունը) հաստատող փաստաթուղթը, մինչև 16 տարեկան երեխաների համար՝ նաև ծննդյան վկայականը,

բ) ապաստան հայցողների համար՝ ապաստան հայցողի անձը հաստատող վկայականը, փախստականների համար՝ կոնվենցիոն ճամփորդական փաստաթուղթը,

գ) օտարերկրյա քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց համար՝ օտարերկրյա պետության անձնագիրը, անձը (ինքնությունը) հաստատող միջազգայնորեն ճանաչված փաստաթղթերը, ՀՀ հատուկ անձնագիրը, կացության քարտը:

«Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագրի մասին» ՀՀ օրենքի 3–րդ հոդվածի համաձայն՝ անձնագիրը ՀՀ քաղաքացու ինքնությունը և ՀՀ քաղաքացիությունը հավաստող փաստաթուղթ է, որը նախատեսված է ՀՀ–ից դուրս գալու և ՀՀ վերադառնալու, ինչպես նաև ՀՀ տարածքում օգտագործելու համար:

ՀՀ կառավարության 25.12.1998 թ. թիվ 821 որոշմամբ հաստատվել է «Հայաստանի Հանրապետությունում անձնագրային համակարգի կանոնադրությունը», որի 1–ին կետի համաձայն՝ ՀՀ քաղաքացու անձնագիրը ՀՀ–ում և օտարերկրյա պետություններում նրա անձը հաստատող հիմնական փաստաթուղթն է: Կանոնադրության 5–րդ կետի համաձայն՝ ՀՀ քաղաքացու անձնագրում քաղաքացու անձի մասին գրառվում են հետևյալ տեղեկությունները՝ ա) ազգանունը, անունը, հայերեն էջում՝ նաև հայրանունը, բ) ծննդյան վայրը, օրը, ամիսը և տարեթիվը, գ) սեռը, դ) քաղաքացիությունը, ե) անձնական համարը: ՀՀ քաղաքացու անձնագրում կարող են նշվել ՀՀ–ում նրա բնակության վայրը, օտարերկրյա պետություններում մշտապես կամ ժամանակավորապես բնակվելու մասին, օտարերկրյա պետություններ մեկնելու և վերադառնալու մասին: «Փախստականների և ապաստանի մասին» ՀՀ օրենքը

29–րդ հոդվածի 3–րդ մասի համաձայն՝ ապաստան հայցողների անձը հաստատող վկայականը հաստատում է ապաստան հայցողի օրինական բնակության փաստը և գործում է ՀՀ ողջ տարածքում, իսկ նույն օրենքի 30–րդ հոդվածի 1–ին մասի համաձայն՝ կոնվենցիոն ճամփորդական փաստաթուղթը փախստականի անձը և ՀՀ–ում օրինական բնակությունը հաստատող և ՀՀ–ից դուրս գալու համար նախատեսված վավեր փաստաթուղթն է:

«Օտարերկրացիների մասին» ՀՀ օրենքի 3–րդ հոդվածի համաձայն՝ անձնագիրը կամ ճամփորդական փաստաթուղթը միջազգայնորեն ճանաչված՝ անձը հաստատող ճամփորդական փաստաթուղթ է, որը տրված է օտարերկրյա պետության կամ միջազգային կազմակերպության կողմից և իրավունք է տալիս հատելու պետական սահմանը: Նույն օրենքի 14–րդ հոդվածի 2–րդ մասի համաձայն՝ ՀՀ ժամանակավոր, մշտական և հատուկ կացության կարգավիճակները հաստատող փաստաթղթերն են համապատասխանաբար ժամանակավոր կացության քարտը, մշտական կացության քարտը և հատուկ անձնագիրը: Փախստականներին և քաղաքական ապաստանի իրավունք ստացած անձանց տրվող ճամփորդական փաստաթղթի նկարագիրը և փաստաթուղթը տալու կարգը սահմանվում են ՀՀ կառավարության 03.12.2009 թ. «Փախստականին, ինչպես նաև քաղաքական ապաստանի իրավունք ստացած անձին տրվող կոնվենցիոն ճամփորդական փաստաթղթի նկարագիրը և փաստաթուղթը տալու կարգը հաստատելու մասին» թիվ 1417–Ն որոշմամբ:

Արտաքինը փոխելու եղանակ է պլաստիկ վիրահատությունը: Սույն պաշտպանության միջոցը պահանջում է մեծ ֆինանսական ծախսեր և կարող է կիրառվել բացառիկ դեպքերում, երբ հնարավոր չէ այլ եղանակներով ապահովել անձի անվտանգությունը: Սույն պաշտպանության միջոցի ձեռնարկումը պաշտպանվող անձի համար կարող է առաջացնել հոգեբանական, սոցիալական, բարոյական հետևանքներ: Իրավապահ մարմինները սույն պաշտպանության միջոցի իրականացման նպատակով պետք է համագործակցեն այն առողջապահական հիմնարկների հետ, որտեղ իրականացվում է պլաստիկ վիրահատություն: Պլաստիկ

վիրահատության եղանակով անձի արտաքինը փոխելն առավել արդյունավետ կհամարվի, եթե այն զուգակցվի անձը հաստատող փաստաթղթերի փոխարինմամբ: Ըստ ՀՀ քր. դատ. օր.՝ թույլատրելի է երկու և ավելի պաշտպանության միջոցի կիրառումը:

6. *Աշխատանքի, ծառայության կամ ուսման վայրը փոփոխելը:* ՀՀ քր. դատ. օր. 98.11–րդ հոդվածի համաձայն՝ եթե պաշտպանվող անձին ուղղված վտանգի վերացման համար պահանջվում է, որ նա թողնի նախկին աշխատանքի, ծառայության կամ ուսման վայրը, ապա քրեական վարույթ իրականացնող մարմինն այդ անձի միջնորդությամբ կամ համաձայնությամբ օգնում է տեղավորվելու նոր աշխատանքի կամ ուսման վայր: Պաշտպանվող անձի հարկադիր պարապուրդի ժամկետը հաշվակցվում է որպես աշխատանքային ստաժ, և այդ ժամկետի համար վճարվում է փոխհատուցում, որը չի կարող նախկին աշխատանքի կամ ծառայության համար տրված աշխատավարձից ցածր լինել: Նոր աշխատանքի կամ ծառայության վայրում ցածր աշխատավարձի դեպքում աշխատավարձերի տարբերությունը փոխհատուցվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով: Սույն պաշտպանության միջոցի ձեռնարկման դեպքում վարույթ իրականացնող մարմինը պաշտպանվող անձին նոր աշխատատեղով ապահովելու պարտականություն չունի, պարզապես նա հնարավոր բոլոր միջոցներով պետք է աջակցի պաշտպանվող անձին նոր աշխատանքի կամ ուսման վայր տեղավորվելու գործում: Այս պաշտպանության միջոցի ձեռնարկման համար նույնպես պահանջվում է պաշտպանվող անձի համաձայնությունը: Պաշտպանվող անձին ուսման այլ վայր տեղավորելիս պետք է հաշվի առնվեն նրա նախկին ուսման վայրի պայմանները[67]:

Տուժողի կամ վկայի նկատմամբ պաշտպանական միջոցների կիրառումն ու դրանց ընտրությունը պետք է հիմնվեն օբյեկտիվ գնահատականի վրա և կրեն նպատակային ու անհատական բնույթ:

[67] Պաշտպանական միջոցների մասին մանրամասն տես ՀՀ քրեական դատավարություն, Մաս 1, Գիտական խմբագիր՝ Ա. Ղամբարյան, Երևան, 2016, էջ 341–348:

Փախստականների պաշպանություն

Եթե հանցագործության տուժողը կամ վկան ապաստան հայցող է կամ փախստական, ապա բացի վերը նշված պաշտպանական միջոցներից՝ պաշտպանության համատեքստում այդ անձինք ՀՀ–ում կարող են տեղափոխվել Ժամանակավոր տեղավորման կենտրոն: «Փախստականների և ապաստանի մասին» ՀՀ օրենքի 14–րդ հոդվածի համաձայն՝ ապաստան հայցողների ժամանակավոր տեղավորման կենտրոնը[68] հատուկ հաստատություն է, որտեղ լիազոր մարմինը (ՀՀ միգրացիոն պետական ծառայություն — *Դ. Թ.*) տեղավորում է ապաստան հայցողներին մինչև նրանց ապաստանի հայցի վերաբերյալ վերջնական որոշում կայացնելը: Նույն օրենքի 24–րդ հոդվածն ամրագրում է կացարանի իրավունքը, որի համաձայն՝ լիազոր մարմին (ՀՀ միգրացիոն պետական ծառայություն) դիմած ապաստան հայցողներին և նրանց ընտանիքի անդամներին լիազոր մարմինը տեղավորում է Ժամանակավոր տեղավորման կենտրոնում, որտեղ նրանց ապահովում են կենսապահովման պայմաններով, մասնավորապես տրամադրվում են սնունդ (օրական երեք անգամ), սպիտակեղեն, անձնական հիգիենայի պարագաներ, անհրաժեշտության դեպքում՝ հագուստ և կոշիկ:

Մարդու թրաֆիքինգի կամ շահագործման ենթարկված անձանց պաշտպանություն

Առանձին հանցագործություններից տուժող անձանց իրավունքների մասին խոսելիս պետք է նշել մարդու թրաֆիքինգի կամ շահագործման ենթարկված անձանց լրացուցիչ աջակցության տրամադրման և պաշտպանության մասին: «Մարդկանց թրաֆիքինգի և շահագործման ենթարկված անձանց նույնացման և աջակցության մասին» ՀՀ օրենքի 20–րդ հոդվածով սահմանվում է, որ ցանկացած զոհ և հատուկ կատե-

[68] Հարկ է նշել, որ այստեղ առաջանում է որոշակի տերմինաբանական շփոթմունք Հատուկ կացարան և ապաստան հայցողների ժամանակավոր տեղավորելու կենտրոն եզրույթների միջև, չնայած ՀՀ կառավարության 2009 թ. նոյեմբերի 19–ի N1440–Ն որոշման 2–րդ կետում ամրագրված է, որ ապաստան հայցողների ժամանակավոր տեղավորելու կենտրոնը ՀՀ կառավարության 2003 թ. ապրիլի 3–ի N 407–Ն որոշմամբ ստեղծված «Հատուկ կացարան» պետական, ոչ առևտրային կազմակերպությունն է:

գորիայի զոհ ունի օրենսդրությամբ սահմանված կարգով աջակցություն և պաշտպանություն ստանալու իրավունք: Զոհերի և հատուկ կատեգորիայի զոհերի պաշտպանության և աջակցության ձևերը, տեսակները, տևողությունը, չափերը որևէ կերպ չեն կարող փոխկապակցված կամ պայմանավորված լինել իրավապահ մարմինների կողմից ՀՀ օրենքով սահմանված կարգով իրականացվող գործողություններին նրանց մասնակցության հանգամանքով: Աջակցության տրամադրումն[69] ապահովվում է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից: Այս նախարարությունն ապահովում է նաև ընտանեկան բռնության ենթարկված անձանց տրամադրվող աջակցությունը՝ ղեկավարվելով «Սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենքով:

Հարցաքննություն

Խոցելի խմբերի ներկայացուցիչ վկաների և/կամ տուժողների մասնակցությամբ քննչական գործողությունները պետք է առանձնանան «զոհակենտրոնությամբ», այսինքն՝ կիրառվող վերաբերմունքը պետք է հիմնված լինի տուժողի/վկայի իրավունքների պաշտպանության առաջնահերթության վրա: Եթե տուժողը կամ վկան երեխա է, ապա «զոհակենտրոն» մոտեցումը պետք է փոփոխվի «երեխայակենտրոն» մոտեցմամբ, երբ քննչական գործողություններն իրականացնելիս առաջնայնությունը տրվում է երեխայի լավագույն շահի պաշտպանությանը:

---

[69] Զոհերի և հատուկ կատեգորիայի զոհերի աջակցությունը կարող է ներառել՝
1) կացարանի տրամադրում,
2) բնաիրային օգնություն,
3) անհրաժեշտ փաստաթղթերի տրամադրում կամ վերականգնում,
4) բժշկական օգնություն և սպասարկում,
5) հոգեբանական օգնություն,
6) խորհրդատվական օգնություն,
7) իրավաբանական օգնություն,
8) խնամքի տրամադրում, այդ թվում՝ համապատասխան հաստատությունում,
9) թարգմանչական ծառայությունների մատուցում,
10) հիմնական կրթության ապահովում,
11) միջնակարգ կրթության կամ նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթության հասանելիության ապահովում,
12) աշխատանքի ապահովում,
13) անվտանգ վերադարձի կազմակերպում,
14) միանվագ դրամական փոխհատուցում:

Խոցելի խմբերի ներկայացուցիչ տուժողի կամ վկայի իրավունքների պաշտպանությունը քննության ողջ ընթացքում պետք է լինի առաջնային խնդիրներից մեկը:

Քննիչի կողմից տուժողների հետ կազմակերպվող աշխատանքը պետք է լինի «զոհակենտրոն», իսկ տուժող երեխաների հետ՝ «երեխայակենտրոն»:

ՀՀ քր. դատ. օր. 205–րդ հոդվածի համաձայն՝ վկան, տուժողը, կասկածյալը և մեղադրյալը քննիչի մոտ կանչվում են ծանուցագրով: Ծանուցագրում[70] նշվում է, թե ով է կանչում, ում, դատավարական ինչպիսի կարգավիճակով, ուր և երբ (օրն ու ժամը) պետք է ներկայանա կանչվողը, ինչպես նաև անհարգելի պատճառներով չներկայանալու հետևանքները:

Հարցաքննության կանչված անձը պարտավոր է քննիչին ներկայանալ նշանակված ժամկետում կամ նրան նախապես իրազեկել չներկայանալու պատճառները: Անհարգելի պատճառով չներկայանալու դեպքում հարցաքննության կանչված անձը կարող է բերման ենթարկվել ՀՀ քր. դատ. օր. 153–րդ հոդվածով նախատեսված հիմքով, իսկ կասկածյալի կամ մեղադրյալի նկատմամբ կարող են կիրառվել նաև ՀՀ քր. դատ. օր–ով նախատեսված դատավարական հարկադրանքի այլ միջոցներ:

Չնայած օրենսդրությամբ ամրագրված է քննչական գործողությանը վկայի կամ տուժողի մասնակցությունը ապահովելը բերման ենթարկելու որոշում կայացնելով՝ խոցելիությունը հաշվի առնելով՝ նման մոտեցումները միջազգային պրակտիկայում անընդունելի են, քանի որ իրավապահ մարմինների հետ համագործակցության ցանկություն չհայտնած վկան կամ տուժողը դեռ հանցագործի կամ հանցագործության ազդե-

[70] Ծանուցագիրը կանչվող անձին հանձնվում է ստորագրությամբ կամ փոխանցվում է կապի միջոցներով: Նրա ժամանակավոր բացակայության դեպքում ծանուցագիրը հանձնվում է կանչվողի ընտանիքի չափահաս անդամներից որևէ մեկին, հարևաններին, համատիրությանը (բնակարանային շահագործման կազմակերպությանը) կամ փոխանցվում է նրան աշխատանքի կամ ուսման վայրի վարչակազմի միջոցով:

ցության տակ է, և միայն դրանց բացասական հետևանքներից ձերբազատվելուց հետո նա ի վիճակի կլինի (անգամ հոգեբանորեն) մասնակցելու քննչական գործողություններին:

Ավելին, եթե հանցագործության տուժողը կամ վկան գիտակցի քննչական գործողության մասնակցությունը, օրինակ՝ ցուցմունք տալը, լոկ որպես պարտականություն, նա կկարողանա կիրառել այնպիսի ձևակերպումներ, որոնք ցուցմունքը կդարձնեն անբովանդակ և ձևական, ինչը միանշանակ չի բխում քննության շահերից:

Պետք է հիշել նաև այն, որ մարդու դեմ ուղղված հանցագործությունների, մասնավորապես սեռական հանցագործությունների, սպանության, ընտանեկան բռնությունների դեպքում վկան ինքնին հանդիսանում է սթրեսային վիճակում գտնվող, և պատահական չէ, որ ծանր և առանձնապես ծանր հանցագործությունների ականատես վկաներին պետք է վերաբերվել այնպես, ինչպես վերաբերվում են հանցագործության տուժողին, այլ ոչ թե վկային[71]:

Ծանր և առանձնապես ծանր հանցագործությունների ականատեսներին պետք է վերաբերվել այնպես, ինչպես վերաբերվում են հանցագործության տուժողին՝ հաշվի առնելով նրանց հոգեբանական և հոգեկան վիճակը:

Քննիչն անչափահաս տուժողի հարցաքննության առավելագույն տևողության օրենսդրական սահմանափակումից բացի պետք է նկատի

[71] Օրինակ՝ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված է տարբերակված մոտեցում խոցելի խմբերի որոշ ներկայացուցիչների հարցաքննության դեպքում: Այսպես՝ ՀՀ քր. դատ. օր. 205.1–րդ հոդվածի համաձայն՝ հարցաքննությունը չի կարող տևել անընդմեջ չորս ժամից, իսկ անչափահասի, ինչպես նաև հոգեկան կամ այլ ծանր հիվանդությամբ տառապող անձի հարցաքննությունը՝ երկու ժամից ավելի: Այսինքն՝ խոցելի խմբերի որոշ ներկայացուցիչների համար օրենսդրորեն ամրագրված է առանձնահատկություններ: Հարցաքննությունը թույլատրվում է շարունակել հարցաքննվող անձին հանգստի և սնվելու համար անհրաժեշտ առնվազն մեկ ժամ ընդմիջում տրամադրելուց հետո: Օրվա մեջ հարցաքննության ընդհանուր տևողությունը չի կարող գերազանցել ութ, իսկ անչափահասի, ինչպես նաև հոգեկան կամ այլ ծանր հիվանդությամբ տառապող անձի համար՝ վեց ժամը: Բժշկի եզրակացության հիման վրա քննիչը կարող է սահմանել սույն հոդվածով նախատեսված հարցաքննության ժամկետներից ավելի կարճ ժամկետներ:

ունենա, թե երեխան ինչ ժամանակահատվածով կարող է կենտրոնացնել իր ուշադրությունը, մասնավորապես՝

1. դպրոցականների ուշադրության կենտրոնացման ունակությունը, կախված տարիքից և զարգացածության աստիճանից, կարող է տատանվել 30 րոպեից մինչև 1,5 ժամ, սակայն հարցաքննության արդյունավետ տևողությունը 45 րոպե է (1 դասաժամ դպրոցում).

2. նախադպրոցականների հարցաքննության արդյունավետ տևողությունը 20 րոպեից ոչ ավելի է[72]:

ՌԴ քր. դատ. օր. 191–րդ հոդվածի 1–ին մասում (փոփոխությունն ուժի մեջ է մտել 2015 թ. հունվարի 1–ից) վերոնշյալ հարցի վերաբերյալ սահմանվել են հետևյալ կանոնները.

- 7 տարին չլրացած անչափահաս վկայի կամ տուժողի մասնակցությամբ իրականացվող քննչական գործողությունները մեկ օրվա ընթացքում չեն կարող գերազանցել մեկ ժամը, իսկ առանց ընդմիջման կարող են տևել առավելագույնը 30 րոպե:
- 7–14 տարեկան անչափահաս վկայի կամ տուժողի մասնակցությամբ իրականացվող քննչական գործողությունները մեկ օրվա ընթացքում չեն կարող գերազանցել երկու ժամը, իսկ առանց ընդմիջման կարող են տևել առավելագույնը 1 ժամ:
- 14 տարին լրացած անչափահաս վկայի կամ տուժողի մասնակցությամբ իրականացվող քննչական գործողությունները մեկ օրվա ընթացքում չեն կարող գերազանցել չորս ժամը, իսկ առանց ընդմիջման կարող են տևել առավելագույնը 2 ժամ[73]:

ՀՀ քր. դատ. օր. 206–րդ հոդվածի համաձայն՝ վկային կարելի է հարցաքննել[74] գործի համար նշանակություն ունեցող ցանկացած հան-

---

[72] Методические рекомендации по организации и ведению допроса несовершеннолетних в специализированном помещении на этапе следствия. – СПб: Санкт–Петербургская общественная организация. «Врачи Детям», 2014, էջ 18:

[73] Ղամբարյան Ա., Թումասյան Դ. Երեխաների սեռական անձեռնմխելիության և սեռական ազատության դեմ ուղղված հանցագործություններն ու դրանց վարույթի առանձնահատկությունները (ձեռնարկ քննիչների համար), Երևան, 2015, էջ 102–103:

[74] Հարցաքննությունից առաջ քննիչը հավաստիանում է վկայի ինքնության մեջ, տեղեկացնում, թե որ գործով է նա կանչվել, և նախազգուշացնում է գործով նրան հայտնի ամեն ինչ պատմելու պարտականության, ինչպես նաև ցուցմունքներ տալուց հրաժարվելու կամ խուսափելու, սուտ ցուցմունքներ տալու համար սահմանված

գամանքի, այդ թվում՝ կասկածյալի, մեղադրյալի, տուժողի, այլ վկաների անձի մասին: Վկան հարցաքննվում է նախաքննության կատարման վայրում, իսկ անհրաժեշտության դեպքում՝ իր գտնվելու վայրում: Վկան հարցաքննվում է այլ վկաներից անջատ: Ընդ որում՝ քննիչը միջոցներ է ձեռնարկում, որպեսզի նույն գործով կանչված վկաները մինչև հարցաքննության ավարտը հաղորդակցություն չունենան միմյանց հետ:

ՀՀ քր. դատ. օր. 207–րդ հոդվածի համաձայն՝ անչափահաս վկան կամ անչափահաս տուժողը, անկախ տարիքից, կարող է հարցաքննվել՝ պայմանով, որ նա կարող է հաղորդել գործի համար նշանակություն ունեցող տեղեկություններ: Մինչև տասնվեց տարեկան վկայի կամ տուժողի հարցաքննությունը կատարվում է մանկավարժի մասնակցությամբ: Անչափահաս վկայի կամ անչափահաս տուժողի հարցաքննությանը ներկա գտնվելու իրավունք ունի նրա օրինական ներկայացուցիչը: Հարցաքննությունը սկսելուց առաջ օրինական ներկայացուցչին բացատրվում են հարցաքննությանը ներկա գտնվելու, քննիչի թույլտվությամբ իր դիտողությունները շարադրելու և հարցեր տալու իր իրավունքները, ինչպես նաև պարտականությունները: Քննիչն իրավունք ունի չընդունելու տրված հարցերը, սակայն դրանք պետք է ներառվեն արձանագրությունում:

Տասնվեց տարին չլրացած վկային կամ տուժողին բացատրվում է գործին վերաբերող ամեն ինչի մասին ճշմարտացիորեն պատմելու նրա պարտականությունը, բայց նա չի նախազգուշացվում ցուցմունքներ տա-

---

քրեական պատասխանատվության մասին: Վկային հաղորդվում է, որ նա պարտավոր չէ տալ իր, ամուսնու կամ մերձավոր ազգականների վերաբերյալ ցուցմունքներ: Դրանից հետո քննիչը պարզում է կասկածյալի, մեղադրյալի, տուժողի հետ վկայի փոխհարաբերության բնույթը և սկսում է հարցաքննությունը:

Հարցաքննությունն սկսվում է նրանով, որ առաջարկվում է վկային պատմել գործով իրեն հայտնի ամեն ինչ, որից հետո նրան կարող են հարցեր տրվել:

Եթե վկան հարցաքննության է ներկայացել փաստաբանի հետ, որը հրավիրվում է վկայի կողմից վերջինիս իրավաբանական օգնություն ցույց տալու նպատակով, ապա փաստաբանն իրավունք ունի ներկա գտնվելու հարցաքննությանը, սակայն իրավասու չէ հարցեր տալու վկային կամ մեկնաբանելու նրա պատասխանները: Վկայի՝ սույն օրենսգրքի 86–րդ հոդվածի հինգերորդ մասով նախատեսված իրավունքները խախտող հարցեր տալու կամ գործողություններ կատարելու դեպքում փաստաբանն իրավունք ունի անելու հայտարարություններ, որոնք ներառվում են հարցաքննության արձանագրությունում:

լուց հրաժարվելու կամ խուսափելու կամ ակնհայտ սուտ ցուցմունքներ տալու համար օրենքով սահմանված պատասխանատվության մասին:

ՀՀ քր. դատ. օր. 208–րդ հոդվածի համաձայն՝ խուլ վկայի հարցաքննությունը կատարվում է ժեստերի լեզվի թարգմանչի մասնակցությամբ: Վերջինիս մասնակցության մասին նշում է կատարվում արձանագրության մեջ: Վկայի հոգեկան կամ այլ ծանր հիվանդության առկայության դեպքում վկայի հարցաքննությունը կատարվում է բժշկի թույլտվությամբ և ներկայությամբ:

Չնայած ՀՀ գործող օրենսդրությունը հատուկ կարգավորում է երեխա և հոգեկան կամ այլ ծանր հիվանդություն ունեցող վկայի հարցաքննությունը, քննիչը չպետք է կաշկանդվի տակտիկական այնպիսի հնարքների օգտագործումից, որոնք կնպաստեն խոցելի խմբերի ներկայացուցիչ այլ վկաների հարցաքննությունն ավելի արդյունավետ և մարդահեն դարձնելու համար:

Երեխաների հարցաքննության ընթացքում պետք է պահպանվեն հետևյալ կանոնները[75].

Խուսափե՛ք	**Օգտագործե՛ք**
1) երկար նախադասություններից	1) համառոտ նախադասություններ
2) բարդ նախադասություններից	2) պարզ նախադասություններ
3) կրավորական սեռից (*Ինչ է արվել քո կողմից*)	3) ներգործական սեռ (*Ինչ ես արել*)
4) ժխտական նախադասություններից (*Դու նրան չե՞ս ասել*)	4) ոչ ժխտական նախադասություններ (*Դու նրան ասացի՞ր*)
5) բազմիմաստ հարցերից	5) միայն մեկ իմաստ ունեցող հարցեր
6) կրկնակի ժխտումից (*Մայրիկդ չի՞ ասել քեզ, որ փողոց դուրս չգաս*)	6) մեկ ժխտում (*Մայրիկդ ասե՞լ է քեզ, որ փողոց դուրս չգաս*)
7) հռետորական հարցերից (*Եթե հոգնես, ասա՛*)	7) ուղիղ հարցեր (*Դու հոգնե՞լ ես*)

Վերը նշված կանոնները կիրառելի են նաև հոգեկան խանգարում

[75] Օ'Բրայեն Մ., Թ. Հոերթեն, Ա. Վան դեն Բորն, Ինչպես հարցաքննել թրաֆիքինգի/շահագործման ենթարկված անչափահասներին (մեթոդական ձեռնարկ իրավապահ մարմինների աշխատակիցների համար), Երևան, 2012, էջ 16–17:

ունեցող, տկարամիտ, հոգեբանական բարդույթներ կամ խնդիրներ ունեցող անձանց նկատմամբ:

ՔՆՆԱՐԿՈՒՄ

Կազմեք 13 տարեկան աղջիկ երեխայի հարցաքննության պլան, ով, ըստ նախնական տվյալների, ենթարկվել է սեռական բռնության 45 տարեկան տղամարդ ուսուցչի կողմից: Երեխան միակողմանի ծնողազուրկ է, ապրում է մոր հետ, ով չունի մշտական աշխատանք: Ընտանիքը նյութապես կարիքավոր է, ընտանիքում միակ երեխան նա է, ունի ցածր առաջադիմություն, շփվող չէ, դասարանում ընկերներ չունի:

Խոցելի խմբերի ներկայացուցիչ տուժողները կամ վկաներն ուշադրություն են դարձնում ոչ միայն հարցերի ձևակերպմանը, այլ նաև քննիչի ձայնին, միմիկային և վարքին:

Երեխաները, հատկապես փոքր տարիքի, ընկալում են քննիչներին որպես հեղինակություններ: Երբեմն նրանք քննիչին ընկալում են որպես մի անձ, ով ամեն ինչ գիտի, և երեխան կարող է գոհացնելու մեծ պատրաստակամություն ցուցաբերել՝ «ճիշտ» պատասխաններ տալով: Սա կարող է հանգեցնել երեխային թաքցնելու թյուրիմացություններն ու ցանկացած անհարմարություն: Ստորև թվարկված են ուղենիշային որոշ սկզբունքներ, որոնց պահպանումը կարևոր է քննիչի համար.

1. «Եթե ես ասածներիցդ ինչ–որ բան սխալ հասկանամ, ասա՛ ինձ դրա մասին: Ես ուզում եմ դա ճիշտ ընկալել»:

2. «Եթե դու իմ ասածներից ինչ–որ բան չհասկանաս, ասա՛ ինձ, և ես կպարզաբանեմ ասածս»:

3. «Եթե դու որևէ անգամ անհարմար զգաս քեզ, ասա՛ ինձ կամ ցո՛ւյց տուր ինձ «Ստոպ» նշանը»:

4. «Եթե նույնիսկ դու կարծում ես, որ ես արդեն դա գիտեմ, միևնույնն է, ասա՛ ինձ՝ թեկուզ կրկնվելով»:

5. «Եթե դու անգամ համոզված չես պատասխանում, մի՛ փորձիր կռահել: Սա այն դեպքը չէ, երբ դու դպրոցում ես, և ուսուցիչը բարկանում է քեզ վրա կամ ասում, որ պետք է պարտադիր պատասխանես:

Միայն մինչ պատասխանդ ասա՛ ինձ, որ դու վստահ չես»:

6. «Հիշի՛ր, որ երբ դու պատմում ես դեպքի մասին, ես այնտեղ չեմ եղել, երբ դա կատարվել է: Որքան շատ կարողանաս պատմել պատահածի մասին, այնքան ավելին ես կհասկանամ»:

7. «Հիշի՛ր, որ ես չեմ բարկանա կամ զայրանա քեզ վրա»:

8. «Միայն խոսի՛ր այն բաների մասին, որոնք իրական են և իրականում տեղի են ունեցել»[76]:

Խոցելի խմբերի ներկայացուցիչների նկատմամբ վերաբերմունքը

Հանցագործության բնույթով և հանգամանքներով պայմանավորված խոցելի խմբերի ներկայացուցիչների մասնակցությամբ քննությունն իրականացնելիս քննիչները պետք է կարգավորեն հետևյալ հիմնահարցերը.

- **ապահովեն խոցելի տուժողների պաշտպանության պոզիտիվ պարտականության իրականացումը**,
- **ձեռնարկեն կրկնազոհացումից և սպառնալիքներից պաշտպանող միջոցառումներ**,
- **նվազեցնեն քննության ընթացքում առաջացող դժվարությունները**,
- **ապահովեն անձնական և մասնավոր կյանքի պաշտպանությունը**,
- **կշռադատված ապահովեն տուժողի/վկայի իրավունքների իրականացումը կասկածյալի/մեղադրյալի պաշտպանության իրավունքի համատեքստում**:

Վերը նշված հիմնահարցերը ստորև կենթարկվեն մանրամասն վերլուծությամբ:

Խոցելի տուժողների պաշտպանության պոզիտիվ պարտականության իրականացում

ՄԻԵԴ–ի նախադեպային պրակտիկայի համաձայն՝ պետության ներկայացուցիչները ոչ միայն պարտավոր են հարգել մարդու իրավունքները, այլ նաև ունեն «պաշտպանելու պարտավորություն», որի

[76] Ճանաչողական (կոգնիտիվ) հարցաքննության սցենար, ՀՀ դատախազության դպրոցի ուսումնական ֆիլմի համար, Հեղինակ. խումբ՝ Սարգսյան Գ., Թումանյան Ք., Թումասյան Դ., Գասպարյան Ա. և այլք, Երևան, 2013:

շրջանակում պետությունը պարտավոր է իրավունք կրողին պաշտպանել երրորդ անձանց միջամտությունից և պատժել մեղավորներին[77]: Ուստի քննիչները որոշակի հանգամանքներում կրում են երրորդ անձանց կողմից դաժան վերաբերմունքի նկատմամբ խոցելի անհատների իրավունքները երաշխավորելու պոզիտիվ պարտավորություն:

Դատարանն իսկապես համարել է, որ ՄԻԵԿ–ի 1–ին հոդվածով նախատեսված պարտավորությունը (իրենց իրավազորության ներքո գտնվող յուրաքանչյուր անձի համար ապահովել Կոնվենցիայով սահմանված իրավունքները և ազատությունները) ՄԻԵԿ–ի 3–րդ հոդվածի հետ (խոշտանգման կամ անմարդկային և նվաստացուցիչ վերաբերմունքի արգելք) միասին վերցված նշանակում է, որ պետությունները պարտավոր են միջոցներ ձեռնարկել, որպեսզի իրենց իրավազորության ներքո գտնվող անձինք չենթարկվեն խոշտանգման կամ անմարդկային և նվաստացուցիչ վերաբերմունքի կամ պատժի՝ ներառյալ մասնավոր անձանց կողմից նման վերաբերմունքը (*Փրեթին ընդդ. Միացյալ Թագավորության* (վճիռ՝ 29 ապրիլ, 2002 թ.), պարբ. 50 և 51): Այդ պաշտպանությունն ապահովելու համար անհրաժեշտ են ողջամիտ և արդյունավետ միջոցներ՝ ներառյալ երեխաների և խոցելի այլ խմբերի առնչությամբ (*Օքալին ընդդ. Թուրքիայի* (վճիռ՝ 16 հոկտեմբեր, 2006 թ.), պարբ. 70), որպեսզի կանխվի այն դաժան վերաբերմունքը, որի մասին իշխանություններն իմացել են կամ պետք է իմանային: Այդ պարտավորությունից բխում է քննելու պարտավորությունը, որը չի կարող համարվել բացառապես պետության ներկայացուցիչների գործողություններով սահմանափակված պարտավորություն (*Մ.Կ.–ն ընդդ. Բուլղարիայի* (վճիռ՝ 4 դեկտեմբեր, 2003 թ.), պարբ. 151):

Խոցելի անձանց պաշտպանելու պոզիտիվ պարտավորությունը կիրառվել է նաև գենդերային և սեռական բռնության արդյունավետ քննությունն ապահովելու համար:

[77] J. Akandji–Kombe, Positive Obligations under the European Convention on Human Rights: A Guide to the Implementation of the European Convention on Human Rights, Human Rights Handbooks, No. 7, (2007 Council of Europe), էջ 5:

Կրկնազոհացումից և սպառնալիքներից պաշտպանող միջոցառումներ

Այն տուժողներին և վկաներին, ում խոցելիության պատճառը հանցագործության տեսակն է կամ հանցագործության հանգամանքները, ընկալման մակարդակը բարձրացնող լրացուցիչ երաշխիքները դժվար թե նույնչափ անհրաժեշտ լինեն, քանի որ նրանց խոցելիությունը պայմանավորված է ոչ թե ճանաչողական ընկալման ավելի ցածր աստիճանով, այլև սուբյեկտիվ հանգամանքով: Այնուամենայնիվ, միջոցներ պետք է ձեռնարկել նրանց կրկնազոհացումից և սպառնալիքներից պաշտպանելու ուղղությամբ, որոնք համապատասխան դեպքերում պետք է ներառեն նաև նրանց անձնական կյանքի պաշտպանությունը, նրանց անվտանգության պաշտպանության հատուկ միջոցներ և աջակցության՝ ներառյալ բուժօգնության կամ խորհրդատվության ցուցաբերում:

Քննիչները պետք է տեղյակ լինեն, որ ահաբեկված վկաների և տուժողների պաշտպանության լրացուցիչ երաշխիքները կարող են կիրառվել նաև երեխաների, խոցելի չափահասների և գենդերային բռնության ենթարկված կանանց դեպքում:

Եվրոպայի խորհրդի վկաների ահաբեկման և պաշտպանական կողմի իրավունքների մասին թիվ R(97)13 հանձնարարականով «ահաբեկումը» սահմանվում է որպես ցանկացած ուղղակի, անուղղակի կամ պոտենցիալ սպառնալիք՝ ուղղված վկային, որը կարող է միջամտություն առաջացնել նրա՝ որևիցե ազդեցությունից զերծ ցուցմունք տալու պարտականության նկատմամբ: Դա ներառում է բռնության և վրեժխնդրության գործելակերպով հայտնի հանցավոր կազմակերպության գոյության փաստով պայմանավորված ահաբեկումը կամ վկայի՝ փակ սոցիալական խմբի պատկանելու և դրա ներսում թույլ վիճակ ունենալու փաստը:

Ընդհանուր սկզբունքն այն է, որ քննիչները պետք է ձեռնարկեն համապատասխան միջոցներ, որպեսզի տուժողները և վկաները, ինչպես նաև նրանց մերձավորներն ազատ կարողանան ապացույցներ տրամադրել և չենթարկվեն ահաբեկող որևէ գործողության[78]: Ավելին, հար-

[78] Recommendation Rec(2005)9 on the protection of witnesses and collaborators of justice, պարբերություն 1:

գելով պաշտպանական կողմի իրավունքը՝ դատաքննությունից առաջ, դրա ընթացքում և դրանից հետո պետք է կազմակերպել տուժողների, վկաների և նրանց մերձավորների պաշտպանությունը[79]:

Վերը նշված թիվ R(97)13 հանձնարարականի համաձայն՝

1. Պետք է ձեռնարկվեն համապատասխան օրենսդրական և գործնական միջոցներ՝ ապահովելու համար, որ վկաները կարողանան ցուցմունք տալ ազատ և առանց վախի:

2. Հարգելով հանդերձ պաշտպանական կողմի իրավունքները՝ դատաքննությունից առաջ, դրա ընթացքում և դրանից հետո պետք է անհրաժեշտության դեպքում կազմակերպել տուժողների, վկաների և նրանց մերձավորների պաշտպանությունը՝ ներառյալ նրանց կյանքի և անձնական անվտանգության պաշտպանությունը:

3. Վկաների ահաբեկման գործողությունները պետք է պատժելի դարձվեն կա՛մ որպես առանձին հանցագործություններ, կա՛մ որպես դրա փորձ կամ նախապատրաստություն:

4. Հաշվի առնելով դատարանների կողմից ապացույցների ազատ գնահատման սկզբունքը՝ դատավարական օրենսդրությունը պետք է թույլատրի հաշվի առնել ցուցմունքների վրա ահաբեկման ազդեցությունը:

5. Պահպանելով հիմնական իրավունքները՝ վկաներին պետք է քաջալերել, որպեսզի նրանք իրավասու մարմիններին հաղորդեն հանցագործություններին առնչվող բոլոր վերաբերելի տեղեկությունները, ապա համաձայնեն ցուցմունք տալ դատարանում:

6. Հարգելով պաշտպանական կողմի իրավունքները՝ վկաներին պետք է ընձեռել ապացույց ներկայացնելու այլընտրանքային մեթոդներ, որոնցով նրանք կպաշտպանվեն մեղադրյալի հետ առերեսվելու փաստով պայմանավորված ահաբեկումից, օրինակ՝ վկաներին թույլատրելով ապացույց ներկայացնել առանձին սենյակում:

7. Քրեական արդարադատության ոլորտում աշխատողները պետք է համարժեքորեն վերապատրաստված լինեն, որպեսզի քննեն այնպիսի գործեր, որոնցով հնարավոր է վկաներն ահաբեկված լինեն:

---

[79] Նույն տեղում, պարբերություն 2:

Քննության ընթացքում առաջացող դժվարությունների նվազեցում

Քրեական վարույթին որպես տուժող կամ վկա մասնակցելը կարող է յուրաքանչյուրին դժվարություններ պատճառել, հատկապես երբ անձը խոցելի վիճակում է, երբ հանցանքը կատարողի անձը հայտնի է տուժողին կամ վկային: Հետևապես, քննիչները պետք է միջոցներ ձեռնարկեն՝ խուսափելով խոցելի տուժողների և վկաների մասնակցությամբ հանցագործությունները քննելիս անձանց լրացուցիչ դժվարություն պատճառելուց:

Վկաների ահաբեկման և պաշտպանական կողմի իրավունքների մասին Եվրոպայի խորհրդի հանձնարարականը առանձնացնում է խոցելի վկաների առնչությամբ իրագործվող միջոցառումները, հատկապես ընտանեկան բռնության պարագայում: Այդ միջոցառումների համաձայն՝ պետք է ծրագրեր ներդնել, որոնք վկաներին կօգնեն ապացույցներ ներկայացնել ընտանիքի այլ անդամների դեմ: Այդ ծրագրերը կարող են համապատասխան շրջանակ նախատեսել հետևյալի համար.

– իրավական, հոգեբանական և սոցիալական աջակցություն, իսկ համապատասխան դեպքերում՝ խնամք և ֆինանսական աջակցություն,

– հետագա ահաբեկումը կանխելու նպատակով մեղադրյալին վկայի շրջապատից հեռացնելը կամ որպես այլընտրանք՝ վկային հեռացնելը,

– հոգեսոցիալական միջոցառումներ մեղադրյալի համար (օրինակ՝ հոգեբուժական բուժում)՝ հետագա ահաբեկումը կանխելու համար:

Պաշտպանական միջոցառումներ իրականացնող քննիչները պետք է ապահովեն պաշտպանության համաչափությունը տուժողի կամ վկայի ահաբեկման ծանրությանը (Եվրոպայի խորհուրդ, Rec(2005)9 հանձնարարական, պարբ. 14): Պաշտպանության միջոցներ կամ ծրագրեր ստանալու՝ տուժողի կամ վկայի իրավունքի մասին որոշում կայացնելիս պետք է, ի թիվս այլ հանգամանքների, հաշվի առնել հետևյալ չափորոշիչները՝

- պաշտպանվող անձի դատավարական կարգավիճակը (տուժող, վկա, հանցագործության կատարող, կազմակերպիչ, դրդիչ կամ օժանդակող),
- մասնակցության նշանակությունը,
- ահաբեկման/սպառնալիքի ծանրությունը,

- պաշտպանության միջոցների և ծրագրերի մեջ ներգրավվելու պատրաստակամությունը և համատեղելիությունը:

Թեպետ միևնույն տեսակի ահաբեկման/սպառնալիքի ենթարկված տուժողները և վկաները պետք է միատեսակ պաշտպանություն ստանալու իրավունք ունենան, պաշտպանական ցանկացած միջոցառման կամ ծրագրի մեջ հարկ է հաշվի առնել նաև դեպքի կոնկրետ հանգամանքները և անձի անհատական կարիքները (Եվրոպայի խորհուրդ, Rec(2005)9 հանձնարարական, պարբ. 15):

Քննիչները պետք է տեղյակ լինեն, որ «պաշտպանության միջոցների կամ ծրագրերի ընդունման, իրագործման, փոփոխման կամ չեղարկման հետ կապված ընթացակարգի բոլոր փուլերը պետք է գաղտնի պահել» (Եվրոպայի խորհուրդ, Rec(2005)9 հանձնարարական, պարբ. 8):

Անձնական և մասնավոր կյանքի պաշտպանություն

Հարգելով պաշտպանական կողմի իրավունքները՝ վկաներին և տուժողներին պետք է հնարավորության դեպքում ընձեռել ապացույց ներկայացնելու այլընտրանքային մեթոդներ, որոնք նրանց կպաշտպանեն մեղադրյալի հետ առերեսվելու փաստով պայմանավորված ահաբեկումից (Եվրոպայի խորհուրդ, Rec(2005)9 հանձնարարական, պարբ. 6): Դա կարող է ներառել մինչդատական փուլում քննիչների կողմից ապացույցներ ստանալը, որոնք կարող են դատարանում ներկայացվել՝ տուժողների կամ վկաների ուղղակի ցուցմունքների փոխարեն:

Վկաների ահաբեկման և պաշտպանական կողմի իրավունքների մասին Եվրոպայի խորհրդի հանձնարարականի համաձայն՝

«….17. Համարժեք օրենսդրական և գործնական միջոցառումներ պետք է ձեռնարկել քրեական գործով ընտանիքի անդամների դեմ ցուցմունք տվող վկաներին ահաբեկումից պաշտպանությունն ապահովելու և ճնշումից զերծ պահելու համար:

18. Նման միջոցներ պետք է նախատեսել խոցելի վկաների տարբեր խմբերի համար: Դրա համար պետք է հաշվի առնել, որ ընտանեկան միջավայրում ահաբեկումը հաճախ թաքնված է և սովորաբար ազդում է վկաների հոգեբանական և հուզական բարօրության վրա: Ահաբեկման

բացահայտ գործողությունների բացակայության դեպքում, ուստի նախընտրելի է ոչ քրեաիրավական բնույթի միջոցների կիրառումը:

21. Ընտանեկան բռնության ենթարկվող կանայք և ընտանիքի անդամների կողմից դաժան վերաբերմունքի ենթարկված տարեցները պետք է համարժեք պաշտպանություն ստանան այն ահաբեկումից, որի նպատակն է կանխել նրանց կողմից հանցագործության մասին հաղորդում և ապացույցներ ներկայացնելը:

27. Մինչդատական փուլում տրված ցուցմունքները պետք է համապատասխան դեպքերում տեսագրվեն՝ առերեսումից և անհարկի կրկնվող հարցաքննություններից խուսափելու համար, որոնք կարող են պատճառել տրավմա: Դատաքննության ընթացքում կարող են օգտագործվել տեսաձայնային այնպիսի մեթոդներ, որոնք իրավասու մարմնին թույլ կտան համապատասխան անձանց լսել՝ միևնույն ժամանակ բացառելով նրանց՝ միմյանց ֆիզիկական ներկայությամբ գտնվելը»:

Անձնական և մասնավոր կյանքը չպետք է վտանգված լինի կամ դառնա հանրային քննարկման առարկա: Նախաքննության գաղտնիքը պահպանվում է:

Ցուցմունք տված վկաների պաշտպանության պարտականությունը

Վկաների և արդարադատության հետ համագործակցող անձանց պաշտպանության մասին թիվ Rec(2005)9 հանձնարարականի համաձայն՝

17. Վարույթի մասնակիցներին ընձեռելով վկայի/արդարադատության հետ համագործակցող անձի ներկայացրած ցուցմունքը վիճարկելու համարժեք հնարավորություն, կարող են քննարկվել վկայի նույնականացման կանխելուն ուղղված հետևյալ միջոցառումներն իրականացնելու նպատակահարմարությունը.

– վկաների/արդարադատության հետ համագործակցող անձանց տված ցուցմունքների տեսաձայնագրությունը նախաքննության փուլում,

– նախաքննության փուլում տված ցուցմունքները որպես ապացույց օգտագործելը դատարանում, երբ վկայի համար անհնարին է դատարան ներկայանալը, կամ երբ դատարան ներկայանալը կարող է մեծ և իրական վտանգ առաջացնել վկաների/արդարադատության հետ համագործակցող անձանց կամ նրանց մերձավորների համար: Մինչ-

դատական ցուցմունքները պետք է համարել վավերական ապացույց, եթե մասնակիցներն ունեն կամ ունեցել են հնարավորություն՝ մասնակցելու հարցաքննությանը և հարցաքննելու և/կամ խաչաձև հարցեր տալու վկային և քննարկելու ցուցմունքի բովանդակությունը վարույթի շրջանակում,

– այնպիսի տեղեկությունների բացահայտումը, որոնք հնարավոր են դարձնում վկայի նույնականացումը վարույթի հնարավորինս ուշ փուլում և/կամ միայն որոշ տվյալների բացահայտումը,

– զանգվածային լրատվության միջոցների և/կամ հանրության ներկայացուցիչների մասնակցության բացառումը կամ սահմանափակումը դատաքննությանը կամ դրա մի մասին,

– վկաների/արդարադատության հետ համագործակցող անձանց ֆիզիկական նույնացումը կանխող սարքերի, օրինակ՝ միջնապատի կամ վարագույրի օգտագործումը, վկայի դեմքի քողարկումը կամ նրա ձայնի աղավաղումը,

– տեսակապի օգտագործումը:

Կշռադատված ապահովել տուժողի/վկայի իրավունքների իրականացումը կասկածյալի/մեղադրյալի պաշտպանության իրավունքի համատեքստում

Քննիչները պետք է հատկապես տեղյակ լինեն, որ տուժողների և վկաների համար իրականացվող պաշտպանության շրջանակում «պետք է պահպանել ժողովրդավարական հասարակությունում անհրաժեշտ հավասարակշռությունը հանցավորությունը կանխելու, տուժողների և վկաների կարիքների և արդար դատաքննության իրավունքի երաշխիքների միջև» (Եվրոպայի խորհուրդ, Rec(2005)9 հանձնարարական, պարբ. 16):

Մեղադրական կողմի շահերին և տուժողների ու վկաների շահերին հակադրվում են արդար դատաքննության և կողմերի հավասարության հիմնարար երաշխիքներից մեկը՝ վկաների ապացույցները վիճարկելու՝ պաշտպանական կողմի իրավունքը (ՄԻԵԿ–ի 6–րդ հոդվածի 3–րդ մասի (դ) կետը): Թեպետ ՄԻԵԴ–ը վճռել է, որ պետությունը պարտավոր է պաշտպանել տուժողների շահերը, ՄԻԵԿ–ի դրույթներով՝ ներառ-

յալ 2–րդ և 8–րդ հոդվածներով, նախատեսված շահերը պետք է հավասարակշռել պաշտպանական կողմի շահերի հետ:

Հաշվի առնելով այն, որ վկայի պաշտպանության դատավարական միջոցների մեծ մասը բնականաբար տարբեր չափերով սահմանափակում է ապացույցները վիճարկելու՝ պաշտպանական կողմի իրավունքը և/կամ անմիջականության սկզբունքը, ՄԻԵԴ–ը կարևոր նախադեպային պրակտիկա է ձևավորել, որով սահմանվում են ՄԻԵԿ–ի 6–րդ հոդվածի 3–րդ մասի (դ) կետի ներքո այդ իրավունքի սահմանափակման ընդունելի սահմանները[80]: Օրինակ՝ ՄԻԵԴ–ը թույլ է տվել բացառություններ, որպեսզի վկայի ցուցմունքը ոչ միշտ պարտադիր լինի հրապարակավ ներկայացնել դատարանում՝ այն թույլատրելի ապացույց ճանաչելու համար: Նախաքննության փուլում տրված ցուցմունքները կարող են որպես անանուն ապացույցներ օգտագործվել դատարանում, եթե պաշտպանական կողմին հասանելի են փոխհատուցման միջոցառումներ, և եթե բավարարված են հետևյալ պայմանները.

- մեջբերված պատճառներն իրական են և քննարկվել են դատական իշխանությունների կողմից նախքան բացառությունը թույլատրելը,
- պաշտպանական կողմի իրավունքի սահմանափակումները պահպանվել են նվազագույնի սահմաններում և խստորեն անհրաժեշտ են պաշտպանության իրավաչափ նպատակի բավարարման համար,
- պաշտպանական կողմի իրավունքների պակասեցումը պետք է համապատասխանաբար փոխհատուցվի/հակակշռվի[81]:

Անանուն վկաներին վերաբերող նախադեպային որոշումներից են Կոստովսկին ընդդեմ Նիդերլանդների (վճիռ՝ 20 նոյեմբեր, 1989 թ.), Դուրսոնն ընդդ. Նիդերլանդների (վճիռ՝ 25 մարտ, 1996 թ.) և այլ գործեր:

Քննիչները պետք է տեղյակ լինեն, որ անգամ այն դեպքում, երբ պարզվում է, որ «հակակշռող» ընթացակարգերը բավարար չափով փոխհատուցել են պաշտպանական կողմի գործունեության սահմանափակումները, մեղադրական դատավճիռը չպետք է բացառապես կամ

[80] Procedural protective measures for witnesses: Training manual for law–enforcement agencies and the judiciary (2006 Council of Europe), էջ 37:
[81] Նույն տեղում, էջ 45:

վճռորոշ չափով հիմնված լինի անանուն վկայի ցուցմունքների վրա (Դուրսոնն ընդդ. Նիդերլանդների (վճիռ՝ 25 մարտ, 1996 թ.), պարբ. 76): Այսպիսով՝ քննիչները պետք է ձգտեն հավաքել մեղադրական դատավճիռը հիմնավորող լրացուցիչ ապացույցներ:

Ամփոփելով՝ հարկ է նշել հետևյալ քայլերը ձեռնարկելու անհրաժեշտությունը՝ երաշխավորել խոցելի վկաների և տուժողների բարօրությունը քննության ընթացքում՝ հաշվի առնելով քննության ընթացքում նրանց համար ծագող դժվարությունների և ահաբեկման կամ կրկնազոհացման ռիսկը:

ՍԵՌՈՎ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾ ԿԱՄ ՍԵՌԱԿԱՆ ԲՌՆՈՒԹՅԱՆ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին ՄԱԿ–ի կոնվենցիայի 1–ին հոդվածի համաձայն՝ սույն Կոնվենցիայի նպատակների համար «կանանց նկատմամբ խտրականություն» հասկացությունը նշանակում է սեռի հիմքով ցանկացած տարբերակում, բացառում կամ սահմանափակում, որը նպատակ ունի կանանց համար սահմանափակել կամ վերացնել քաղաքական, տնտեսական, սոցիալական, մշակութային, քաղաքացիական կամ ցանկացած այլ բնագավառում, տղամարդկանց և կանանց, անկախ նրանց ամուսնական կարգավիճակից, հավասարության հիմքով, մարդու իրավունքների ու հիմնարար ազատությունների ճանաչումը և կանանց կողմից այդ իրավունքների ու ազատությունների իրականացումը կամ դրանցից օգտվելը:

Սեռով պայմանավորված կամ սեռական բռնության քննության ընթացքում քննիչը պետք է մասնագիտորեն նախապատրաստված լինի՝ արդյունավետ և մարդկային արժանապատվությունը չնսեմացնող քննություն իրականացնելու համար[82]: Յուրաքանչյուր քննիչ նախ և առաջ պետք է պարզի կնոջ կարգավիճակը և նրա հատուկ կարիքները[83]: Կանանց նկատմամբ բռնությունները չեն ճանաչում սոցիալական,

[82] Մանրամասն՝ UN OHCHR (1997), 129:
[83] Նույն տեղում, 125:

մշակութային, էթնիկական կամ կրոնական սահմաններ[84]: Կանանց նկատմամբ բռնությունը բազմազան է:

Քննիչները պետք է տեղյակ լինեն նաև, որ «հանցավորության կանխարգելումը և կանանց նկատմամբ բռնության դեմ քրեական արդարադատության արձագանքը պետք է ուղղված լինեն տուժողների կարիքներին»: Ավելին՝ կանխարգելման և միջամտության ջանքերը պետք է գործադրվեն ոչ միայն կանանց նկատմամբ բռնությունը դադարեցնելու և համապատասխանաբար բռնարարին պատժելու, այլ նաև այդ բռնությունից տուժողների արժանապատվության և վերահսկողության զգացումը վերականգնելու համար (Հանցավորության կանխարգելման և քրեական արդարադատության ոլորտում կանանց նկատմամբ բռնության վերացման լրամշակված օրինակելի ռազմավարություններ և գործնական միջոցառումներ («Օրինակելի ռազմավարություններ»), պարբ. 7)[85]:

Ընդհանուր առմամբ քննիչները պարտավոր են (ա) արդյունավետորեն քննել կանանց նկատմամբ բռնության բոլոր ենթադրյալ միջադեպերը, (բ) բոլոր քննությունները կատարել՝ հարգելով յուրաքանչյուր կնոջ իրավունքները և կարիքները՝ անհարկի չծանրացնելով տուժողի համար առանց այն էլ գոյություն ունեցող բեռը, (գ) միջոցներ ձեռնարկել գենդերային բռնությունից տուժող բոլոր անձանց օժանդակելու և պաշտպանելու ուղղությամբ: Դրանք պետք է ներառեն հանցագործության և տուժողի առանձնահատուկ բնույթի նկատմամբ զգայուն գործելակերպի մշակում և ներդրում[86]:

Ընտանեկան բռնության համատեքստում կնոջ համար ծառացած վտանգը գնահատելու և կառավարելու առումով կարևոր է, որպեսզի

---

[84] UNDOC, Handbook on Effective police responses to violence against women, Criminal justice Handbook Series (2010, United Nations: New York), էջ 1:

[85] 16–րդ կետ. անդամ պետություններին կոչ է արվում՝ ազգային իրավական համակարգերի շրջանակում հավուր պատշաճի և միջազգային իրավական բոլոր գործիքները հաշվի առնելով .... (բ) մշակել կանանց նկատմամբ բռնության դեմ արձագանքի ամբողջական, բազմամասնագիտական, համակարգված, համակարգային և շարունակելի մեխանիզմներ, որոնց շնորհիվ ավելի հավանական կդառնան հանցագործի բարեհաջող ներբակալությունը, քրեական հետապնդումը և դատապարտումը, կբարելավվի տուժողի բարօրությունը և անվտանգությունը, և կկանխվի կրկնազոհացումը:

[86] UNDOC, Handbook on Effective police responses to violence against women, Criminal justice Handbook Series (2010, United Nations: New York), էջ 46:

քննիչը հիշի, որ յուրաքանչյուր իրավիճակ հատուկ է, և ուստի հնարավոր չէ հեշտ հաղթահարել պարզ կամ բանաձևային արձագանքի միջոցով: Յուրաքանչյուր վտանգի բարդությունից և նրբությունից ելնելով՝ պահանջվում է անհատականացված արձագանք, որը լավագույնս կբավարարի տվյալ կնոջ կարիքները:

Քննիչը պարտավոր է.

1. Իրականացնել արդյունավետ քննություն: Առանձնակի զգուշավորություն պետք է ցուցաբերել, որպեսզի ընտանեկան բռնությունից տուժողների բողոքները հավուր պատշաճի քննվեն, և որպեսզի քայլեր ձեռնարկվեն հետագա սպառնալիքներից նրանց պաշտպանելու ուղղությամբ (*Օփուզն ընդդեմ Թուրքիայի* (վճիռ՝ 9 հունիս, 2009 թ.): Սույն գործով իշխանությունները տեղյակ են եղել բռնության լուրջ միջադեպերի և գանգատաբերի ամուսնու կողմից նրա և մոր նկատմամբ հնչեցված սպառնալիքների մասին, սակայն իշխանությունները համարել էին, որ միջադեպերն «ընտանեկան բնույթի են», և միջադեպերից միայն մեկի արդյունքում էր արդյունավետ կերպով քրեական հետապնդում իրականացվել՝ նախքան գանգատաբերի ամուսնու կողմից գանգատաբերի մորը սպանելը: Պաշտպանության մասին կնոջ բազմաթիվ դիմումները մերժվել էին: Դատարանը վճռել է, որ տեղի է ունեցել ՄԻԵԿ–ի 2–րդ հոդվածի խախտում, քանի որ մահացու հարձակումը ոչ միայն հնարավոր, այլ նաև կանխատեսելի էր բռնության պատմության լույսի ներքո: Գանգատաբերին պաշտպանելու առումով իշխանությունների արձագանքն ակնհայտորեն անհամարժեք էր եղել:

Ա.–ն ընդդ. Խորվաթիայի գործով ՄԻԵԴ–ը վճռեց, որ Խորվաթիայի իշխանություններն ի կատար չեն ածել գանգատաբերին իր բռնարար ամուսնուց պաշտպանելու մասին դատարանի որոշումները: Ամուսնու մոտ ախտորոշվել էին հոգեկան առողջության խնդիրներ, և բազմաթիվ վարույթներ էին իրականացվել կնոջ նկատմամբ ամուսնու բռնի և սպառնալից վարքագծի կապակցությամբ: Մի առիթով նրան դատապարտել էին ազատազրկման, սակայն իշխանությունները հաղորդել էին, որ բանտում նրա համար տեղ չկար, և պատիժն ի կատար չէր ածվել: Դրանից հետո կինը ստիպված է եղել թաքնվելով ապրել՝ երեխայի հետ

միասին: Դատարանը վճռեց, որ պետությունը խախտել է կնոջ անձնական կյանքը պաշտպանելու՝ ՄԻԵԿ–ի 8–րդ հոդվածից բխող իր պոզիտիվ պարտավորությունը (*Ա–ն ընդդ. Խորվաթիայի* (վճիռ՝ 14 հոկտեմբեր, 2010 թ.)):

2. Իրականացնել քննությունը՝ կիրառելով զգայուն մոտեցումներ: Օրինակելի ռազմավարությունների տեքստով պահանջվում է, որպեսզի բռնության ենթարկված կանանց հնարավորություն ընձեռվի նախաքննության ընթացքում ցուցմունք տալ՝ համարժեք միջոցներով հարցաքննությունը կազմակերպելով՝ պաշտպանելով կանանց անձնական կյանքը, ինքնությունը և արժանապատվությունը, ապահովելով նրանց անվտանգությունը քրեական վարույթի ընթացքում և խուսափելով կրկնազոհացումից (Օրինակելի ռազմավարություններ, պարբ. 15(գ)):

Գենդերային բռնության դեպքերով գործի քննությունը՝ ներառյալ ապացույցների հավաքումը, խիստ զգայուն մոտեցում է պահանջում քննիչներից, հատկապես սեռական բռնության դեպքում: Քայլեր պետք է ձեռնարկել տուժողին, նրա անձնական կյանքը և նրա կրած տրավման հարգելու ուղղությամբ՝ միևնույն ժամանակ նվազագույնի հասցնելով նրա կյանքի մեջ ներխուժող գործողությունները[87]: Խիստ կարևոր է, որպեսզի գենդերային բռնությունից տուժած անձանց գործերով հնարավորության դեպքում վարույթն իրականացնեն կին քննիչները (Օրինակելի ռազմավարություններ, պարբ. 16(I)):

Կարևոր սկզբունք

Սեռական բռնության դեպքի արդար և արդյունավետ քննությունն ապահովելու համար քննիչները պետք է ապացույցներ հավաքելիս տեղյակ լինեն հետևյալի մասին.

Սեռական բռնության գործով բողոք ներկայացնողի արժանահավատությունը որևէ կերպ պակաս չէ, քան ցանկացած այլ հանցագործության վերաբերյալ բողոք ներկայացնողինը: Թե՛ քրեական, թե՛ քաղաքացիական վարույթում բողոք ներկայացնողի սեռական կյանքի վերաբերյալ պատմություններ ներկայացնելն արգելվում է, եթե դա չի առնչվում

[87] Նույն տեղում, էջ 55:

գործին: Սեռական հանցագործության ենթադրյալ կատարման պահից մինչև դրա մասին հաղորդում ներկայացնելն անցած որևէ տևողությամբ ժամանակահատվածի հիման վրա չի կարելի կատարել բացասական եզրահանգումներ (Օրինակելի ռազմավարություններ, պարբ. 15(ե)):

Ուստի քննիչները պետք է տուժողի սեռական կյանքի մասին պատմությանը և վարքին առնչվող ապացույցները ներկայացնեն միայն այն դեպքում, երբ դրանք վերաբերելի են և անհրաժեշտ (Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրանց դեմ պայքարի մասին Եվրոպայի խորհրդի կոնվենցիա, հոդված 54):

Հետաքրքրությունից բխող և գործին չվերաբերող հարցերն անթույլատրելի են, իսկ դրանց պատասխանները կիրառելը՝ առավել ևս:

Կանանց նկատմամբ բռնության մասին ԵՄ կոնվենցիայի 56–րդ հոդվածի համաձայն՝ պետությունները պետք է ձեռնարկեն օրենսդրական և այլ բնույթի անհրաժեշտ բոլոր միջոցները նախաքննության և դատաքննության փուլերում՝ տուժողների իրավունքները և շահերը, ներառյալ նրանց՝ որպես վկաների ունեցած հատուկ կարիքները պաշտպանելու նպատակով, մասնավորապես՝

ա. տուժողներին, ինչպես նաև նրանց ընտանիքի անդամներին և վկաներին՝ պաշտպանելով ճնշումներից, վրեժից և կրկնակի զոհականացումից,

բ. ապահովելով, որպեսզի տուժողները տեղեկացվեն կատարողին ժամանակավորապես կամ վերջնականապես ազատ արձակելու կամ վերջինիս փախուստի մասին՝ առնվազն այն դեպքերում, երբ տուժողը կամ նրա ընտանիքի անդամները վտանգված են,

գ. տեղեկացնելով նրանց, ներքին օրենսդրությամբ սահմանված պայմաններում, իրենց իրավունքների և իրենց տրամադրվող ծառայությունների, բողոքների քննության ընթացքի, հարուցված գործի մեղադրանքների, ընդհանրապես նախաքննական կամ դատական վարույթի ընթացքի, իրենց դատավարական դերի, ինչպես նաև գործի ելքի մասին,

դ. հնարավորություն տալով տուժողներին, ներպետական քրեադատավարական օրենքով սահմանված կարգով, արտահայտելու իրենց

տեսակետը և ներկայացնելու ապացույցներ և ապահովելով նրանց տեսակետները, կարիքները և մտահոգություններն անձամբ կամ միջնորդի միջոցով քննարկման առարկա դարձնելու հնարավորությունը,

ե. տուժողներին աջակցության համապատասխան ծառայություններ տրամադրելով այնպես, որ նրանց իրավունքներն ու շահերը ներկայացվեն և հաշվի առնվեն պատշաճ կերպով,

զ. ապահովելով տուժողի մասնավոր կյանքի անձեռնմխելիությունը կամ տուժողի նկարագիրը պաշտպանելուն ուղղված միջոցներ նախատեսելու հնարավորությունը,

է. հնարավորության դեպքում ապահովելով նախաքննության մարմնի գտնվելու վայրում կամ դատարանում տուժողների և կատարողների միջև շփումների բացառումը,

ը. ապահովելով անկախ և ձեռնահաս թարգմանիչներ,

թ. ներպետական օրենսդրությամբ սահմանված կարգով տուժողներին տրամադրելով առանց դատական նիստին ներկայանալու կամ առնվազն դատական նիստից ենթադրյալ կատարողի բացակայության պայմաններում ցուցմունք տալու հնարավորություն, մասնավորապես հնարավորության դեպքում հաղորդակցման տեխնոլոգիաների օգտագործմամբ:

Կանանց նկատմամբ բռնության կամ ընտանեկան բռնության տուժող կամ վկա երեխաներին համապատասխան դեպքերում պետք է տրամադրվեն պաշտպանության հատուկ միջոցներ, որոնք հաշվի կառնեն երեխայի լավագույն շահը:

ՔՆՆԱՐԿՈՒՄ

25 տարեկան կինը դիմում է ներկայացրել ոստիկանություն, որ 1 ժամ առաջ նրան բռնաբարել է իր զուգընկերը: Ներկայացրեք պարզաբանման ենթակա հանգամանքները, պլանավորեք Ձեր գործողությունները, նախապատրաստվեք ենթադրյալ զոհի հարցաքննությունը:

Քննիչները պետք է տեղյակ լինեն, որ ընտանեկան կամ սեռական բռնության դեպքում տուժողներին կարող է անհրաժեշտ լինել հրատապ բուժօգնություն կամ բժշկական զննություն: Լավագույն տարբե-

ռակն այն է, երբ իգական սեռի տուժողին խնամող բուժաշխատողները (հատկապես, երբ տուժողը ենթարկվել է սեռական ոտնձգության/բռնաբարության) կանայք լինեն: Դա թեթևացնում է անհարմարության այն զգացումը, որը կինը կարող է ունենալ բուժօգնություն ստանալիս[88]:

Ընտանեկան և սեռական բռնության դեպքում բուժաշխատողները[89] կարող են մի քանի տարբեր ծառայություններ մատուցել՝ ներառյալ ֆիզիկական վնասվածքների խնամքը, խորհրդատվությունը կամ խորհրդատվության ուղղորդելը, ինչպես նաև կարող են օգնել հանցագործության ապացույցների հավաքմանը և փաստաթղթավորմանը: Բռնաբարության դեպքում նրանք կարող են նաև քայլեր ձեռնարկել սեռական ճանապարհով փոխանցվող հիվանդությունների և ՄԻԱՎ/ՁԻԱՀ–ի փոխանցման ռիսկի կապակցությամբ՝ ներառյալ կանխարգելիչ բուժմամբ, թեստավորմամբ և խորհրդատվությամբ[90]:

[88] UNDOC, Handbook on Effective police responses to violence against women, Criminal justice Handbook Series (2010, United Nations: New York), էջ 58:

[89] Գենդերային բռնությունից տուժողներին պաշտպանելու համար կարող են անհրաժեշտ լինել նաև այլ միջոցառումներ: Թեպետ քննիչներն իրենք ոչ միշտ են ի վիճակի լինում տրամադրելու այդպիսի ծառայություններ, նրանք պետք է տեղյակ լինեն առկա միջոցառումներին և տուժողին/վկային այդ ծառայությունները ստանալու ուղղորդման կարգին:

[90] UNDOC, Handbook on Effective police responses to violence against women, Criminal justice Handbook Series (2010, United Nations: New York), էջ 58:

ԴԱՍ 3.
ԽՈՑԵԼԻ ԿԱՍԿԱԾՅԱԼՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ

ԹԵՄԱ 1. ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ԽՄԲԵՐԸ

Յուրաքանչյուր կասկածյալ կամ մեղադրյալ ունի պաշտպանության կարիք և իրավունք: Առաջնահերթ նա պաշտպանվում է կասկածանքից կամ իր դեմ ներկայացված մեղադրանքից բոլոր հնարավոր եղանակներով և միջոցներով՝ ընդհուպ օգտվելով լռելու իրավունքից: Սակայն գործնականում քիչ չեն դեպքերը, երբ ենթադրյալ հանցագործություն կատարած անձն ինքը պաշտպանության կարիք ունի՝ ելնելով իր դատավարական կարգավիճակից ու անձնական առանձնահատկություններից:

Կասկածյալի կամ մեղադրյալի պաշտպանության իրավունքն ապահովվում է կամ ինքնուրույն, կամ պաշտպանի միջոցով:

Միջազգային չափանիշների լույսի ներքո խոցելի խմբերի ներկայացուցիչ կասկածյալները կամ մեղադրյալները պայմանականորեն կարող են բաժանվել երկու խմբի.

1) **Ում խոցելիությունը պայմանավորված է որոշակի օբյեկտիվ հատկանիշներով** (**երեխաներ**, **հաշմանդամներ**, **հոգեկան խանգարումներ ունեցողներ**, **տկարամիտներ**): Այս կատեգորիայի կասկածյալները կամ մեղադրյալները հանցագործություն կատարելիս են եղել խոցելի վիճակում, ինչով կարող է պայմանավորված լինել հանցագործության կատարումը, հետևաբար քննությունը կազմակերպելիս առաջնահերթ պետք է պարզել այն շարժառիթները, որոնց ազդեցությամբ այս խմբի ներկայացուցիչը կատարել է հանցավոր արարքը, ինչպես նաև այն նպատակները, որոնց ցանկանում էր հասնել հանցագործը: Նրանց արդյունավետ մասնակցությունը վարույթին պայմանավորված է ինտելեկտուալ հատկանիշներով, որոնցով այս խմբի ներկայացուցիչները կարող են օժտված չլինել, ավելին՝ հոգեկան խանգարում ունեցող

անձի վերաբերյալ պարտադիր պետք է նշանակվի դատահոգեբուժական փորձաքննություն, որի արդյունքում կպարզվի հանցագործության կատարման պահին անձի մեղսունակության/անմեղսունակության վիճակում հանցանք կատարելու հանգամանքը:

2) **Ում խոցելիությունը պայմանավորված է հանցագործության առանձնահատկություններով**, **մասնավորապես այդ անձինք խոցելի են**, **քանի որ նրանց սպառնում են**, **նրանցից ցանկանում են վրեժ լուծել**, **նրանց կողմից կատարված արարքը հակաբարոյական է և անգամ չի ընդունվում այլ հանցագործների կողմից և այլն** (երեխայի նկատմամբ սեռական բռնություն, ծայրահեղ կրոնական պետությունում կրոնի դեմ ուղղված հանցագործություններ, տարեց կամ այլ անօգնական անձի առանձին դաժանությամբ սպանություն և այլն): Նման անձինք վտանգված են, և նրանց նկատմամբ խափանման միջոցի ընտրությունը պետք է պայմանավորված լինի հասարակությունից մեկուսացնելու խիստ անհրաժեշտության հանգամանքը հաշվի առնելով, քանի որ նրանից վրեժխնդիր լինելն ազատության պայմաններում առավել հավանական է: Ասվածն ամենևին չի նշանակում, որ այս խմբի ներկայացուցիչների նկատմամբ պարտադիր պետք է կիրառվի կալանավորում խափանման միջոցը, այդ հարցը լուծվում է խափանման միջոցների կիրառման հարցին վերաբերող իրավական հիմքերի առկայության դեպքում և կարգով, սակայն շատ հնարավոր է, որ այս անձանց նկատմամբ կկիրառվի ՀՀ քր. դատ. օր. 98.1–րդ հոդվածով նախատեսված պաշտպանական միջոցները: Այդ հոդվածի համաձայն՝ ՀՀ–ում պաշտպանության միջոցները տասներկուսն են, սակայն խոցելի խմբերի ներկայացուցիչ կասկածյալների կամ մեղադրյալների նկատմամբ առավել արդյունավետ է կիրառել հետևյալները.

1) անձին պաշտոնապես նախազգուշացնելը, ումից սպասվում է պաշտպանվող անձի նկատմամբ բռնության վտանգ կամ այլ հանցանքի կատարում.

2) պաշտպանվող անձի ինքնությունը հաստատող տվյալները պաշտպանելը.

3) պաշտպանվող անձի անձնական անվտանգությունն ապահովելը, բնակարանը և այլ գույք պահպանելը.

4) պաշտպանվող անձին բնակության այլ վայր փոխադրելը.

5) պաշտպանվող անձի աշխատանքի, ծառայության կամ ուսման վայրը փոփոխելը:

Անհրաժեշտության դեպքում կարող են իրականացվել մեկից ավելի հատուկ պաշտպանության միջոցներ:

Խոցելի խմբերի ներկայացուցիչ կասկածյալների կամ մեղադրյալների խոցելիությունը որոշվում է նույն հատկանիշների հիման վրա, որոնք կիրառելի են տուժողների կամ վկաների համար, սակայն խոցելիությունը որոշելուց հետո տարբերակված է լինում նրանց նկատմամբ կիրառվող վերաբերմունքը և այն հետևանքները, որոնք կարող են առաջանալ այդ կասկածյալի կամ մեղադրյալի համար:

ԹԵՄԱ 2. ԼՐԱՑՈՒՑԻՉ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՆԹԱԿԱ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ

Քրեական գործի առանձնահատկություններով պայմանավորված, ինչպես նաև ելնելով ենթադրյալ հանցագործի անձնական հատկանիշներից (սեռ, տարիք, առողջական վիճակ և այլն)՝ կասկածյալը/մեղադրյալը կարող է հատուկ պաշտպանության կարիք ունենալ:

Տրամաբանական է, որ առաջնահերթ դա վերաբերում է անչափահասներին և կանանց: Անչափահասների արդարադատությունը պարտավորեցնում է տարբերակված մոտեցում դրսևորել անչափահաս կասկածյալների/մեղադրյալների հանդեպ՝ հաշվի առնելով նրանց իրավունքների ինքնուրույն պաշտպանելու ոչ ամբողջական լինելը:

Խոցելի խմբերի ներկայացուցիչ կասկածյալների կամ մեղադրյալների իրավունքների համատեքստում կարևորվում է ՄԻԵԿ–ով պաշտպանության տակ առնված հետևյալ իրավունքների պաշտպանությունը.

1. Կյանքի իրավունք (2–րդ հոդված).

2. Խոշտանգումների արգելում (3–րդ հոդված).

3. Ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունք (5–րդ հոդված).

4. Արդար դատաքննության իրավունք (6–րդ հոդված).

5. Պատիժ՝ բացառապես օրենքի հիման վրա (7–րդ հոդված).

6. Անձնական և ընտանեկան կյանքը հարգելու իրավունք (8–րդ հոդված).

7. Իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունք (13–րդ հոդված).

8. Խտրականության արգելում (14–րդ հոդված):

Հետևաբար, կասկածյալի կամ մեղադրյալի իրավունքների արդյունավետ պաշտպանությունը նախ և առաջ պայմանավորված է վերը նշված հոդվածների առնչությամբ ՄԻԵԴ–ի արտահայտված դիրքորոշումներով:

Կարելի է համարել, որ ունենալով կասկածյալի կարգավիճակ և իրենց մարդու իրավունքների պաշտպանության հարցում կախվածության մեջ գտնվելով պետական մարմիններից՝ հասարակության այլ անդամների համեմատ կասկածյալները փաստացի խոցելի վիճակում են: Օրինակ՝ *Սալդուզն ընդդ. Թուրքիայի* գործով ՄԻԵԴ–ն ընդգծեց, որ քննության փուլը կարևոր է քրեական վարույթի նախապատրաստման համար, քանի որ այդ փուլում ստացված ապացույցները կանխորոշում են այն շրջանակը, որում դատաքննության ընթացքում ներկայացվելու է մեղադրանքը (...): Միևնույն ժամանակ մեղադրյալը հաճախ վարույթի այդ փուլում հայտնվում է առանձնապես խոցելի վիճակում, որի հետևանքը ծանրանում է այն փաստով, որ քրեական վարույթի մասին օրենսդրությունը գնալով ավելի խրթին է դառնում, հատկապես ապացույցների հավաքումը և օգտագործումը կարգավորող կանոնների մասով (*Սալդուզն ընդդ. Թուրքիայի* (Մեծ պալատի վճիռ՝ 27 նոյեմբեր, 2008 թ.), պարբ. 54):

Անչափահասների գործերով արդարադատության իրականացման ՄԱԿ–ի նվազագույն ստանդարտ կանոնների[91] համաձայն՝ անչափահասների գործերով արդարադատության համակարգը պետք է հատկապես կարևորի անչափահասի բարեկեցությունը և ապահովի, որ անչափահաս հանցագործների նկատմամբ կիրառվող միջոցները համարժեք լինեն թե՛ հանցագործության հանգամանքներին, թե՛ հանցագործի առանձնահատկություններին:

Անչափահաս հանցագործների անձեռնմխելիության իրավուն-

[91] Այսուհետ՝ Պեկինյան կանոններ:

քը պետք է հարգվի բոլոր փուլերում՝ անհարկի հրապարակայնության կամ անվանարկելու արդյունքում նրանց վնաս պատճառելուց խուսափելու համար: **Չպետք է հրապարակվի անչափահասի ինքնությունն ի հայտ բերող որևէ տեղեկատվություն**:

Անչափահասի ձերբակալման ժամանակ նրա ծնողները կամ խնամակալը պետք է անհապաղ տեղեկացվեն, իսկ եթե դա անհնարին է, ծնողները կամ խնամակալը կարող են ծանուցվել ավելի ուշ, սակայն հնարավորինս սեղմ ժամկետում:

Դատաքննության ողջ ընթացքում անչափահասն իրավունք ունի պաշտպանությունն իրականացնելու իրավաբանի միջոցով կամ դիմելու իրավական անվճար օգնություն ստանալու հարցով, եթե նման օգնությունը նախատեսված է տվյալ երկրի օրենսդրությամբ[92]:

Ծնողները կամ խնամակալն իրավունք ունեն մասնակցելու դատաքննությանը, և անչափահասների շահերից ելնելով՝ իրավասու մարմինը կարող է պահանջել նրանց մասնակցությունը: Սակայն իրավասու մարմինը կարող է մերժել նրանց մասնակցությունը, եթե հիմքեր կան ենթադրելու, որ դա բխում է անչափահասի շահերից[93]:

Անչափահասի նկատմամբ վարույթներով քննիչներն իրենց տրամադրության տակ պետք է ունենան անչափահասի նկատմամբ ներգործության միջոցների լայն ընտրություն, ինչը ճկունություն կհաղորդի ուղղիչ հիմնարկում տեղավորելուց հնարավորինս խուսափելու հարցում[94]:

---

[92] ՀՀ քր. դատ. օր. 69–րդ հոդվածի 1–ին մասի 5–րդ կետի համաձայն՝ քրեական գործով վարույթին պաշտպանի մասնակցությունը պարտադիր է, երբ հանցանքը կատարելու պահին կասկածյալը կամ մեղադրյալն անչափահաս է:

[93] ՀՀ քր. դատ. օր. 441–րդ հոդվածի համաձայն՝ անչափահասների հանցագործությունների վերաբերյալ գործերի քննությանը մասնակցում է անչափահաս կասկածյալի կամ մեղադրյալի օրինական ներկայացուցիչը, այսինքն՝ այն կրում է պարտադիր բնույթ:

[94] ՀՀ քր. դատ. օր. 148–րդ հոդվածի 1–ին մասի համաձայն՝ հսկողության հանձնելն այն է, երբ անչափահաս կասկածյալի կամ մեղադրյալի ծնողների, խնամակալների, հոգաբարձուների կամ փակ մանկական հիմնարկների վարչակազմի վրա, որտեղ նա պահվում է, պարտականություն է դրվում ապահովել կասկածյալի կամ մեղադրյալի պատշաճ վարքագիծը, քրեական վարույթն իրականացնող մարմնի կանչով նրա ներկայանալը և այլ դատավարական պարտականություններ կատարելը: Նույն հոդվածի 2–րդ մասի համաձայն՝ անչափահասի նկատմամբ որպես խափանման միջոց հսկողության հանձնելը կիրառելու դեպքում քրեական վարույթն իրականացնող մարմինը նրա ծնողներին, խնամակալներին, հոգաբարձուներին, փակ մանկական հիմնարկի վարչակազմի ներկայացուցչին ծանոթացնում է կայացված որոշմանը և

Այդ միջոցները կարող են համակցվել միմյանց հետ: Դրանք են՝

ա) խնամքը, կողմնորոշումը և հսկողությունը,

բ) պրոբացիան,

գ) համայնքային ծառայություններին հանձնելը,

դ) դրամական տույժի, փոխհատուցման և վնասի հարթման կիրառումը,

ե) միջանկյալ և այլ միջոցառումներ կիրառելը,

զ) խմբային խորհրդատվություն և նման այլ միջոցառումների մասնակցելը,

է) խնամատարության, այս կամ այն համայնքում կամ կրթական հաստատությունում տեղավորելը,

ը) այլ որոշումներ կայացնելը:

Անչափահաս կասկածյալի հետ բոլոր շփումներում քննիչները պետք է «**հարգեն անչափահասի իրավական կարգավիճակը**, **ապահովեն անչափահասի բարօրությունը և խուսափեն նրան վնաս պատճառելուց՝ հավուր պատշաճի հաշվի առնելով գործի հանգամանքները**» (Պեկինյան կանոններ, պարբ. 10.3):

ՄԻԵԴ–ն ընդգծել է, որ պետական իշխանություններից ակնկալվում է, որ նրանք լրացուցիչ կշիռ կվերագրեն երեխաների խոցելիության հարցին՝ Կոնվենցիայի 3–րդ հոդվածի ներքո նրանց պաշտպանելով անձնական անձեռնմխելիության խախտումներից: Դատարանը, մասնավորապես, նշել է. «Հաշվի առնելով Դատարանի նախադեպը, որի համաձայն երեխաները, ովքեր հատկապես խոցելի են բռնության տարբեր ձևերի նկատմամբ, ունեն անձի անձեռնմխելիության նման ծանր խախտումներից պետության պաշտպանություն ստանալու իրավունք՝ արդյունավետ նախականխման տեսքով (…), իշխանություններից կարելի էր ակնկալել, որ նրանք որոշ կշիռ կվերագրեն գանգատաբերի խո-

---

նրանց հանձնում որոշման պատճենը, ծանոթացնում է կասկածանքի կամ մեղադրանքի բովանդակությանը, նրանց բացատրում է իրենց իրավունքները, պարտականությունները և պատասխանատվությունը, ինչն արտացոլվում է արձանագրությունում:

Վտանգն այն է, որ նույն հոդվածի 3–րդ մասի համաձայն՝ ծնողները, խնամակալները, հոգաբարձուներն իրավունք ունեն հրաժարվելու անչափահաս կասկածյալի կամ մեղադրյալի նկատմամբ հսկողություն իրականացնելուց: Այս դեպքում քննիչն արդեն այլընտրանք, որպես կանոն, չի ունենում:

ցելիության հարցին» (*Օկալին ընդդ. Թուրքիայի* (վճիռ՝ 17 հոկտեմբեր, 2006 թ.), պարբ. 70):

Երեխաների հարցաքննությունը պետք է տեղի ունենա երեխայի համար բարենպաստ միջավայրում, երեխայի օրինական ներկայացուցչի ներկայությամբ: Ինչպես նշվեց, երեխան պետք է նաև լիովին տեղեկացված լինի իրավաբանական ներկայացուցիչ ունենալու կամ լռություն պահպանելու իր իրավունքի մասին (*Պանովիտսն ընդդ. Կիպրոսի* (վճիռ՝ 11 դեկտեմբեր, 2008 թ.), պարբ. 84):

Երեխաները կարող են խոշտանգման կամ դաժան վերաբերմունքի նկատմամբ հատկապես խոցելի լինել քննության փուլում, մասնավորապես, եթե նրանք կալանավորված են: Ուստի քննիչները պետք է գիտակցեն երեխայի խոցելիությունը և հիշեն, որ որևէ պարագայում իրավունք չունեն շեղվելու խոշտանգման և անմարդկային և նվաստացուցիչ վերաբերմունքի կամ պատժի արգելքից:

Անչափահաս կասկածյալի կամ մեղադրյալի մասնավոր կյանքն առավել խիստ պաշտպանության ներքո է և, համադրելով նաև անմեղության կանխավարկածի հետ, պետք է հստակ կիրառել հետևյալ քայլերն անչափահաս կասկածյալներին կամ մեղադրյալներին պաշտպանելու համար՝

1. **չտրամադրել որևէ անհատական տեղեկատվություն անչափահասի մասին**,

2. **չհրապարակել և թույլ չտալ, որպեսզի հրապարակվեն անչափահասին նույնացնող լուսանկարներ՝ առավել ևս ձեռնաշղթաներով կամ հատուկ համազգեստով**, **որը կհուշի նրա կասկածյալ կամ մեղադրյալ լինելու մասին**:

Երեխայի իրավունքների մասին ՄԱԿ–ի կոնվենցիան

Հոդված 37 (*բ*). Ոչ մի երեխա չպետք է զրկվի ազատությունից անօրինական կամ կամայական կերպով: Երեխայի ձերբակալությունը, կալանքը կամ բանտարկությունը իրականացվում են համաձայն օրենքի և գործադրվում միայն որպես ծայրահեղ միջոց, որքան հնարավոր է, կարճ ժամանակամիջոցում:

Հոդված 37 (*գ*). Ազատությունից զրկված յուրաքանչյուր երեխա պետք է օգտվի մարդասիրական վերաբերմունքից և իր անձի անկապտելի արժանապատվության նկատմամբ հարգանքից՝ հաշվի առնելով նրա տարիքի անձանց պահանջմունքները: Մասնավորապես, ազատությունից զրկված յուրաքանչյուր երեխա պետք է առանձնացվի մեծահասակներից, եթե միայն չի համարվում, որ, երեխայի լավագույն շահերից ելնելով, հարկավոր չէ այդ անել, և պետք է իրավունք ունենա կապ պահպանել իր ընտանիքի հետ նամակագրության և տեսակցությունների միջոցով՝ բացառությամբ հատուկ հանգամանքների:

Հոդված 37 (*դ*). Ազատությունից զրկված յուրաքանչյուր երեխա պետք է իրավունք ունենա անհապաղ օգտվելու համապատասխան իրավական և այլ օգնությունից, ինչպես նաև դատարանի կամ իրավասու, անկախ և անկողմնակալ այլ մարմնի առաջ վիճարկել իրեն ազատությունից զրկելու օրինականությունը և իրավունք ունենա նրանց կողմից անհապաղ որոշում ակնկալելու այդպիսի ցանկացած դատավարական գործողության առթիվ:

ԽԿՀ–ն (CPT) նշել է, որ անկախ ազատությունից զրկելու պատճառից անչափահասներն ի սկզբանե ավելի խոցելի են, քան չափահասները: Հետևապես, առանձնակի զգոնություն է պահանջվում՝ նրանց ֆիզիկական և հոգեկան բարօրության համարժեք պաշտպանությունն ապահովելու համար (9th General Report [CPT/Inf (99) 12], պարբ. 20):

Հետևաբար, ԽԿՀ–ն տալիս է անչափահասներին դաժան վերաբերմունքից պաշտպանության հետևյալ երաշխիքները. բոլոր անձինք և հատկապես անչափահասները պետք է ոստիկանությունում պահվելու

պարտավորություն ունենալու առաջին պահից ստանան ազգականին կամ որևէ երրորդ անձի իրենց կալանավորման փաստի մասին ծանուցելու, փաստաբանի և բժշկի հետ տեսակցելու իրավունք: Նրանք պետք է պահվեն չափահասներից անջատ: Պետք է լինեն թե՛ արական, թե՛ իգական սեռի աշխատողներ, որպեսզի հնարավոր լինի ապահովել պատշաճ կադրերի ներկայությունը գենդերազգայուն գործառույթներ, օրինակ՝ խուզարկություններ կատարելիս (9th General Report [CPT/Inf (99) 12], պարբ. 23–26):

Կալանավորումը պետք է կիրառել որպես հնարավոր միջոցներից վերջինը և հնարավորինս կարճ ժամկետով (Պեկինյան կանոններ, պարբ. 13.1): Հնարավորության դեպքում մինչդատական կալանքը պետք է փոխարինել այլընտրանքային միջոցներով, օրինակ՝ վերահսկողությամբ, ինտենսիվ խնամքով կամ ընտանիքում կամ կրթական միջավայրում կամ տնային միջավայրում տեղավորելով (Պեկինյան կանոններ, պարբ. 13.2.): Մինչդատական կալանքի տակ գտնվող անչափահասները պետք է պահվեն չափահասներից անջատ և պետք է պահվեն առանձին հիմնարկում կամ միաժամանակ նաև չափահասներ պահող հաստատության առանձին մասում (Պեկինյան կանոններ, պարբ. 13.2.): Կալանքի ընթացքում անչափահասները պետք է ստանան խնամք, պաշտպանություն և անհրաժեշտ անհատական աջակցություն՝ սոցիալական, կրթական, մասնագիտական, հոգեբանական, բժշկական և ֆիզիկական, որը նրանց կարող է անհրաժեշտ լինել՝ հաշվի առնելով նրանց տարիքը, սեռը և անձը (Պեկինյան կանոններ, պարբ. 13.5): Ավելին՝ կարևոր է ապահովել ազգականների և երեխայի նկատմամբ իրավաչափ շահեր ունեցող անձանց կողմից երեխաների ազատազրկման հաստատություններ հեշտորեն մուտք գործելու հնարավորությունը՝ բացառությամբ, երբ այլ բան է բխում երեխայի լավագույն շահերից[95]:

ՀՀ քր. դատ. օր. 441–րդ հոդվածի համաձայն՝ անչափահասների հանցագործությունների վերաբերյալ գործերի քննությանը մասնակցում է

[95] Guidelines for Action on Children in the Criminal Justice System, Recommended by Economic and Social Council Resolution 1997/30 of 21 հուլիս, 1997.

անչափահաս կասկածյալի կամ մեղադրյալի օրինական ներկայացուցիչը, այսինքն՝ այն կրում է պարտադիր բնույթ:

Թեպետ ՄԻԵԿ–ը թույլ է տալիս որոշ սահմանափակ հանգամանքներում կալանավորել անչափահասներին, ՄԻԵԴ–ի նախադեպով սահմանվել են որոշակի երաշխիքներ, որոնք անհրաժեշտ է պահպանել նման դեպքերում (օրինակ՝ Ասսենովն ընդդեմ Բուլղարիայի, վճիռ՝ 28 հոկտեմբեր, 1998 թ., Նարթն ընդդեմ Թուրքիայի, վճիռ՝ 6 մայիս, 2008 թ., Գյուվեցն ընդդեմ Թուրքիայի, վճիռ՝ 20 հունվար, 2009 թ.):

ԹԵՄԱ 3. ԽՈՑԵԼԻ ԿԱՍԿԱԾՅԱԼՆԵՐԻ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆՆ ԱՊԱՀՈՎՈՂ ՔՆՆՉԱԿԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Խոցելի խմբերի ներկայացուցիչ կասկածյալների կամ մեղադրյալների՝ մարդու իրավունքների պաշտպանությունն իրականացվում է՝ հաշվի առնելով հավելվածում նշված նախադեպերը՝ համադրելով ներպետական պաշտպանական միջոցներով: Ինչպես արդեն նշվել է վերևում, կասկածյալի կամ մեղադրյալի իրավունքների պաշտպանությունը պաշտպանի միջոցով արդեն իսկ նրանց իրավունքների պաշտպանության երաշխիքներից մեկն է:

ՀՀ քր. դատ. օր. 69–րդ հոդվածի համաձայն՝ քրեական գործով վարույթին պաշտպանի մասնակցությունը պարտադիր է, երբ՝

1) այդպիսի ցանկություն հայտնել է կասկածյալը կամ մեղադրյալը.

2) կասկածյալի կամ մեղադրյալի համար դժվար է ինքնուրույն իրականացնել պաշտպանության իր իրավունքը՝ համր, կույր, խուլ լինելու, խոսքի, լսողության, տեսողության ֆունկցիաների այլ էական խանգարման, երկարատև ծանր հիվանդության, ինչպես նաև տկարամտության, բացահայտ մտավոր անզարգացածության, այլ ֆիզիկական կամ հոգեկան պակասությունների հետևանքով.

3) կասկածյալի կամ մեղադրյալի մոտ առկա է հոգեկան հիվանդություն կամ ժամանակավոր հիվանդագին հոգեկան խանգարում.

4) կասկածյալը կամ մեղադրյալը չի տիրապետում կամ ոչ բավարար չափով է տիրապետում քրեական դատավարության լեզվին.

5) հանցանքը կատարելու պահին կասկածյալը կամ մեղադրյալն անչափահաս է.

6) մեղադրյալը ժամկետային ծառայության զինծառայող է.

7) կասկածյալների կամ մեղադրյալների շահերի միջև կան հակասություններ, և նրանցից մեկը պաշտպան ունի.

8) քրեական հետապնդումն իրականացվում է այն անձի նկատմամբ, որին վերագրվում է քրեական օրենսգրքով չթույլատրված արարքի կատարում անմեղսունակության վիճակում.

9) կասկածյալը կամ մեղադրյալն անգործունակ է.

10) դատական քննության արագացված կարգի կիրառման դեպքում.

11) դատարանը կիրառում է սույն օրենսգրքի 314.1–րդ հոդվածի առաջին մասի 2–րդ կետով նախատեսված սանկցիան:

Կասկածյալի կամ մեղադրյալի իրավունքների պաշտպանության առաջնահերթությունը պայմանավորված է որակյալ պաշտպանի միջոցով իրավաբանական օգնություն տրամադրելով:

Կասկածյալ կամ մեղադրյալ անչափահասը

«Երեխայի իրավունքների մասին» ՀՀ օրենքի 31–րդ հոդվածի համաձայն՝ երեխան ունի անձի անձեռնմխելիության իրավունք, որը պաշտպանվում է օրենքով: Երեխային չի կարելի ձերբակալել, խուզարկել կամ կալանավորել այլ կերպ, քան սահմանված է օրենքով: Երեխայի ձերբակալման կամ կալանավորման մասին անհապաղ հայտնվում է ծնողներին կամ այլ օրինական ներկայացուցիչների: Ազատազրկման դատապարտված յուրաքանչյուր երեխա ունի օրենքով սահմանված կարգով ազատազրկման դատավճիռը բողոքարկելու իրավունք: Արգելվում է երեխային չափահասների հետ միասին կալանքի տակ պահելը: ՀՀ օրենսդրությամբ սահմանված դեպքերում երեխային քրեական պատասխանատվության ենթարկելիս փաստաբանի[96] (հոգեբանի,

[96] ՀՀ քր. դատ. օր. 69–րդ հոդվածի 1–ին մասի 5–րդ կետի համաձայն՝ քրեական գործով վարույթին պաշտպանի մասնակցությունը պարտադիր է, երբ հանցանքը կատարելու պահին կասկածյալը կամ մեղադրյալն անչափահաս է:

մանկավարժի) ներկայությունը հետաքննության, նախաքննության և դատաքննության ընթացքում պարտադիր է: Երեխան պարտավոր չէ ցուցմունք տալ իր, ծնողների կամ մերձավոր ազգականների դեմ: Արգելվում է որպես վկա ցուցմունքներ վերցնելու կամ սեփական հանցանքը խոստովանելու համար երեխայի նկատմամբ բռնության, սպառնալիքի և այլ ապօրինի գործողությունների կիրառումը:

ՀՀ քր. դատ. օրենսգրքով սահմանվում են և՛ կալանավորումը որպես խափանման միջոց, և՛ ձերբակալումը: Հարկ է նշել, որ կալանավորումից բացի՝ առկա են նաև այլ խափանման միջոցներ, որոնցից մեկը կիրառվում է միայն անչափահասների նկատմամբ: Դա հսկողության հանձնելն է: ՀՀ քր. դատ. օր. 148–րդ հոդվածի համաձայն՝ հսկողության հանձնելն այն է, երբ անչափահաս կասկածյալի կամ մեղադրյալի ծնողների, խնամակալների, հոգաբարձուների կամ փակ մանկական հիմնարկների վարչակազմի վրա, որտեղ նա պահվում է, պարտականություն է դրվում ապահովել կասկածյալի կամ մեղադրյալի պատշաճ վարքագիծը, քրեական վարույթն իրականացնող մարմնի կանչով նրա ներկայանալը և այլ դատավարական պարտականություններ կատարելը: Ծնողները, խնամակալները, հոգաբարձուներն իրավունք ունեն հրաժարվելու անչափահաս կասկածյալի կամ մեղադրյալի նկատմամբ հսկողություն իրականացնելուց: Անչափահասների ձերբակալության և կալանավորման պայմաններն էապես տարբերվում են չափահասների նույնանուն պայմաններից: Օրինակ՝ ձերբակալված կամ կալանավորված անչափահասները ապահովվում են անվճար հատուկ սննդով (Ձերբակալված կամ կալանավորված անձանց պահելու մասին ՀՀ օրենքի հոդված 19), ձերբակալված կամ կալանավորված անչափահասների համար ձերբակալվածներին պահելու վայրերում և կալանավորվածներին պահելու վայրերում ստեղծվում են բարելավված նյութակենցաղային պայմաններ, և նրանք օգտվում են ամենօրյա՝ երկու ժամից ոչ պակաս տևողությամբ զբոսանքի իրավունքից, որի ընթացքում հնարավորություն է տրվում զբաղվելու մարմնամարզությամբ (հոդված 27), անչափահասներին պատժախուց տեղափոխելը մինչև հինգ օր ժամկետով է (հոդված 35) և այլն:

2009 թ. դեկտեմբերի 18–ի Գագիկ Գառնիկի Միքայելյանի վերաբերյալ քրեական գործ թիվ ԵԱԴԴ/0085/06/09–ով ՀՀ վճռաբեկ դատարանը դիրքորոշում է հայտնել հետևյալի մասին, որ «17. .... Ձերբակալման ընթացակարգի յուրահատկությունը հաշվի առնելով՝ հանցագործություն կատարած լինելու հիմնավոր կասկածով անձին ազատությունից զրկելու կառուցակարգը կարող է ընդգրկել որոշակի տևողությամբ սկզբնական փուլ, որի ընթացքում անձը կարող է որևէ դատավարական կարգավիճակ չունենալ՝ պայմանավորված գործող քրեադատավարական օրենսդրության անբավարար որոշակիությամբ:

18. Այսպես՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 128–րդ հոդվածի 1–ին մասի համաձայն՝ «Ձերբակալումն անձի կողմից հանցագործության կատարումը կամ այն կատարելուց հետո նրա փախուստը կանխելու նպատակով նրան արգելանքի վերցնելն է, հետաքննության կամ վարույթ իրականացնող մարմին բերելը, համապատասխան արձանագրություն կազմելը և այդ մասին նրան հայտարարելը՝ օրենքով որոշված վայրերում ու պայմաններում արգելանքի տակ կարճաժամկետ պահելու համար»:

Այս բնորոշումից երևում է, որ ձերբակալման ընթացակարգը բաղկացած է միմյանց հաջորդող չորս գործողություններից՝

1) անձին ազատությունից փաստացի զրկելը,

2) նրան իրավասու մարմին բերելը,

3) ձերբակալման արձանագրություն կազմելը,

4) այդ մասին նրան հայտարարելը:

Ուստի անձը կարող է ձերբակալվածի կարգավիճակ ստանալ վերջին՝ չորրորդ գործողությունը կատարելու պահից, այսինքն՝ քրեական հետապնդման մարմնում ձերբակալման արձանագրության մասին անձին հայտարարելու պահից:

Նախքան դա անձը, փաստացի արգելանքի վերցվելով և քրեական հետապնդման մարմին բերվելով, դեռևս ձերբակալվածի կարգավիճակ չի կարող ունենալ, մինչդեռ նրան արգելանքի վերցնելու և վարույթն իրականացնող մարմին բերելու հիմքը հանցագործություն կատարած լինելու հիմնավոր կասկածն է՝ զուգորդված նրա փախուստը կանխելու

նպատակով: Ընդ որում՝ այստեղ կասկածի հիմնավորվածության աստիճանն էլ ավելի ցածր է, քան ձերբակալման դեպքում:

19. Եթե բերված անձի նկատմամբ վարույթն իրականացնող մարմինը շարունակում և ավարտին է հասցնում ձերբակալման գործընթացը, ապա ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 173–րդ հոդվածի 3–րդ մասի 4–րդ նախադասության ուժով ձերբակալման ժամկետի հաշվարկը սկսվում է արգելանքի վերցնելու պահից, սակայն դա կատարվում է հետադարձ կարգով: Ուստի արգելանքի վերցված ու վարույթն իրականացնող մարմին բերված անձը նախքան ձերբակալման արձանագրությունն իրեն հայտարարելը չի կարող բավարար որոշակիությամբ գիտակցել իր կարգավիճակը: Ավելին՝ քանի դեռ արձանագրությունը կազմված չէ, նա կարող է ազատ արձակվել՝ այդպես էլ չստանալով ձերբակալվածի կարգավիճակ:

20. Սույն որոշման 15–19–րդ կետերում արված վերլուծության հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ հանցագործություն կատարած լինելու հիմնավոր կասկածի հիմքով անձին ազատությունից զրկելու քրեադատավարական կառուցակարգերը չեն սահմանափակվում «ձերբակալման» և «կալանավորման» ինստիտուտներով, այլ ներառում են նաև արգելանքի վերցվելու և վարույթն իրականացնող մարմին բերվելու կառուցակարգը: Համապատասխանաբար, մինչդատական վարույթում «ձերբակալվածի» և «կալանավորվածի» կարգավիճակների հետ մեկտեղ ազատությունից զրկված անձը կարող է ունենալ նաև նախնական իրավական վիճակ, որը պայմանականորեն կարելի է անվանել «բերվածի» կարգավիճակ:

Բերմանը հարաբերական ինքնուրույնություն տալու օրենսդրի մոտեցման մասին է վկայում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 180–րդ հոդվածի 2–րդ մասը, որը նախքան քրեական գործի հարուցումը թույլատրելի գործողությունների շարքում ամրագրում է նաև «հանցագործություն կատարելու կասկածանքի բավարար հիմքերի առկայության դեպքում ... բերման ... ենթարկվել[ը]»:

Ձերբակալման վերաբերյալ վերը նշված ձևակերպումները կիրառելի են նաև անչափահասների նկատմամբ:

Պեկինյան կանոնների համաձայն՝ անչափահասների գործերով արդարադատության համակարգը պետք է հատկապես կարևորի անչափահասի բարեկեցությունը և ապահովի, որ անչափահաս հանցագործների նկատմամբ կիրառվող միջոցները համարժեք լինեն թե՛ հանցագործության հանգամանքներին, թե՛ հանցագործի առանձնահատկություններին:

ՀՀ քր. դատ. օր. 50–րդ գլխով նախատեսված են անչափահասների գործերով վարույթի առանձնահատկությունները:

ՀՀ քր. դատ. օր. 212–րդ հոդվածի համաձայն՝

1. Քննիչը պարտավոր է մեղադրյալին հարցաքննել նրան մեղադրանք առաջադրելուց հետո՝ անհապաղ, բայց ոչ ուշ, քան 24 ժամվա ընթացքում, իսկ մեղադրյալի խուսափելու կամ նրան հետախուզում հայտարարելու դեպքում՝ նրան բերման ենթարկելուց 48 ժամվա ընթացքում:

2. Մեղադրյալի հարցաքննությունը, բացի անհետաձգելի դեպքերից, կատարվում է ցերեկը:

3. Մեղադրյալը հարցաքննվում է նախաքննության կատարման վայրում, իսկ անհրաժեշտության դեպքում՝ իր գտնվելու վայրում:

4. Մեղադրյալը հարցաքննվում է գործով անցնող այլ անձանցից անջատ: Քննիչը միջոցներ է ձեռնարկում, որպեսզի մեղադրյալը չհաղորդակցվի գործով անցնող այլ անձանց հետ:

5. Մեղադրյալն իրավունք ունի հարցաքննվելու պաշտպանի մասնակցությամբ: Սույն օրենսգրքով նախատեսված դեպքերում պաշտպանի մասնակցությունը պարտադիր է:

6. Խուլ մեղադրյալի հարցաքննությունը կատարվում է ժեստերի լեզվի թարգմանչի մասնակցությամբ:

7. Մեղադրյալը հարցաքննվում է առաջադրված մեղադրանքի էության, ինչպես նաև գործի համար նշանակություն ունեցող այլ հանգամանքների վերաբերյալ:

8. Հարցաքննությունը սկսելուց առաջ քննիչը մեղադրյալին բացատրում է ցուցմունքներ տալուց, հարցաքննությունը պաշտպանի մասնակցությամբ անցկացնելու կամ պաշտպանի մասնակցությունից հրաժարվելու (բացառությամբ պաշտպանի մասնակցության

պարտադիր լինելու դեպքերի) նրա իրավունքները:

9. Հարցաքննության սկզբում քննիչը պետք է պարզի, թե մեղադրյալն արդյոք իրեն մեղավոր ճանաչում է առաջադրված մեղադրանքում:

10. Քննիչն առաջարկում է մեղադրյալին ցուցմունքներ տալ մեղադրանքի և բոլոր այն հանգամանքների վերաբերյալ, որոնք, իր կարծիքով, կարող են նշանակություն ունենալ գործի համար:

ԿՅԱՆՔԻ ԻՐԱՎՈՒՆՔԸ ԵՎ ԽՈՇՏԱՆԳՄԱՆ ԵՎ ԱՆՄԱՐԴԿԱՅԻՆ ԵՎ ՆՎԱՍՏԱՑՈՒՑԻՉ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԻ ԿԱՄ ՊԱՏԺԻ ԱՐԳԵԼՔԸ

ՄԻԵԿ–ի 2–րդ հոդվածը երաշխավորում է կյանքի իրավունքը և թվարկում այն հանգամանքները, որոնցում կյանքից զրկելը կարող է հիմնավորված լինել, ընդ որում՝ այն Կոնվենցիայի առավել հիմնարար դրույթներից է, որից չի թույլատրվում որևէ շեղում (օրինակ՝ *Մակարատցին ընդդ. Հունաստանի* (Մեծ պալատի վճիռ՝ 20 դեկտեմբեր, 2004 թ.), պարբ. 56): ՄԻԵԿ–ի 2–րդ հոդվածը պետությանը ոչ միայն պարտավորեցնում է ձեռնպահ մնալ դիտավորյալ և անօրինական կերպով կյանքից զրկելուց, այլ նաև պոզիտիվ պարտավորություն է սահմանում՝ համապատասխան քայլեր ձեռնարկելով երաշխավորելու իր իրավազորության ներքո գտնվող անձանց կյանքը, ուստի նաև կատարելու այն ամենը, ինչը կարող է իրենից պահանջվել անձանց կյանքը ռիսկի ենթարկելը կանխելու համար (օրինակ՝ Լ.Կ. *Բ–ն ընդդ. Միացյալ Թագավորության* (վճիռ՝ 9 հունիս, 1998 թ.), պարբ. 39, և *Ռենոլդեն ընդդ. Ֆրանսիայի* (վճիռ՝ 16 հոկտեմբեր, 2008 թ.), պարբ. 80):

Ինչ վերաբերում է խոշտանգման սահմանմանը, ապա ՄԻԵԴ–ը մասամբ համաձայնել է Խոշտանգման դեմ պայքարի ՄԱԿ–ի կոնվենցիայի սահմանման հետ, ըստ որի՝ *խոշտանգում եզրույթը նշանակում է ցանկացած գործողություն, որով անձին* ***դիտավորյալ պատճառվում է*** *ֆիզիկական կամ հոգեկան* ***ծանր ցավ կամ տառապանք****, որի նպատակն է նրանից կամ երրորդ անձից տեղեկություններ կամ խոստովանություն ստանալը, նրան որևէ արարքի համար պատժելը, որը կատարել կամ որի կատարման մեջ կասկածվում է նա կամ որևէ երրորդ անձ, կամ նրան կամ երրորդ անձի ահաբեկելը կամ հարկադրելը, կամ երբ դրա*

պատճառը որևէ տեսակի խտրականությունն է (օրինակ՝ *Ակկոսն ընդդ. Թուրքիայի* (վճիռ՝ 10 հոկտեմբեր, 2000 թ.) պարբ. 115 և *Սալմանն ընդդ. Թուրքիայի* (վճիռ՝ 27 հունիս, 2000 թ.), պարբ. 114): Այսպիսով՝ խոշտանգում արձանագրելու համար էական են հետևյալ երեք տարրերը.

- **ծանր ֆիզիկական կամ հոգեկան ցավ կամ տառապանք պատճառելը**,
- **ցավը դիտավորյալ կամ դիտավորությամբ պատճառելը**,
- **որոշակի նպատակ**, **օրինակ՝ տեղեկություններ հավաքելու**, **պատժելու կամ ահաբեկելու նպատակ հետապնդելը**[97]:

Դատարանը կյանքի իրավունքի և անմարդկային կամ նվաստացուցիչ վերաբերմունքի արգելքի առնչությամբ պետության համար որոշակի պոզիտիվ պարտավորություններ է սահմանել այն դեպքում, երբ իշխանությունները գործ ունեն խոցելի անձանց հետ: Այդ պարտավորությունները կիրառելի են հատկապես կալանավորման դեպքում:

Ինչ վերաբերում է կյանքի իրավունքին, ապա անձանց կյանքի իրավունքը պաշտպանելու՝ պետության պոզիտիվ պարտավորությունն ավելանում է, երբ անձը հատկապես խոցելի անձ է: ՄԻԵԴ–ն ընդգծել է, որ կալանավորված անձինք խոցելի են, և իշխանությունները պարտավոր են պաշտպանել նրանց (օրինակ՝ *Քինանն ընդդ. Միացյալ Թագավորության* (վճիռ՝ 2 ապրիլ, 2001 թ.), պարբ. 91, *Ռենոլդեն ընդդ. Ֆրանսիայի* (վճիռ՝ 16 հոկտեմբեր, 2008 թ.), պարբ. 83): Այդ պարտավորությունը պետք է կատարել տվյալ անձի իրավունքներին և ազատություններին համատեղելի կերպով (*Ռենոլդեն ընդդ. Ֆրանսիայի* (վճիռ՝ 16 հոկտեմբեր, 2008 թ.), պարբ. 83):

Այսպես՝ քննիչները պարտավոր են ապահովել իրենց կողմից բոլոր համապատասխան քայլերի կատարումը՝ բացառելու համար հատկապես խոցելի կասկածյալների կյանքը ռիսկի ենթարկելը: Երբ անձը խոցելիության վիճակում է, նրա խոցելիությունն անհրաժեշտ է դարձնում հատուկ պաշտպանությունը (*Ռենոլդեն ընդդ. Ֆրանսիայի* (վճիռ՝ 16 հոկ-

[97] A. Reidy, The Prohibition of Torture: A Guide to the Implementation of Article 3 of the European Convention on Human Rights, Human Rights Handbook, No.6 (2003 Council of Europe), էջ 12:

տեմբեր, 2008 թ.), պարբ. 109): Օրինակ՝ ՄԻԵԴ–ը համարել է, որ հոգեկան խանգարում ունեցող անձանց դեպքում անհրաժեշտ է հաշվի առնել նրանց հատկապես խոցելի վիճակը (*Երտսն ընդդեմ Բելգիայի* (վճիռ՝ 30 հուլիս, 1998 թ.), պարբ. 66, *Քինանն ընդդ. Միացյալ Թագավորության* (վճիռ՝ 2 ապրիլ, 2001 թ.), պարբ. 111, և *Ռենոլդեն ընդդ. Ֆրանսիայի* (վճիռ՝ 16 հոկտեմբեր, 2008 թ.), պարբ. 84)[98]:

---

[98] Renolde–ն ընդդ. Ֆրանսիայի (վճիռ՝ 16 հոկտեմբեր, 2008) — Գանգատաբերի եղբայրը՝ Ռենոլդը, հոգեկան խանգարում էր ունեցել և բանտում գտնվելու ընթացքում ինքնասպան էր եղել: ՄԻԵԴ–ը համարեց, որ իշխանությունները գիտեին, որ Ռենոլդն ուներ հոգեկան խանգարումներ, որոնք կարող էին նրան դրդել ինքնավնասման (պարբ. 89): Հաշվի առնելով, որ իշխանությունները չէին քննարկել նրան հոգեբուժական հիվանդանոց ընդունելը, ՄԻԵԴ–ը նշեց, որ «հաշվի առնելով, որ պետությունը պոզիտիվ պարտավորություն ունի՝ կանխարգելիչ հրատապ միջոցներ ձեռնարկել այն անձին պաշտպանելու համար, ում կյանքը վտանգված է, կարելի էր ակնկալել, որ իշխանությունները, հանդիպելով բանտարկյալի, ում պարագայում հայտնի էր հոգեկան ծանր խանգարման և ինքնասպանության ռիսկի գոյությունը, նրա վիճակից բխող հատուկ միջոցներ կձեռնարկեին նրա՝ կալանքի շարունակման համար համատեղելիությունն ապահովելու համար» (պարբ. 97), և որ նրանք պետք է առնվազն կազմակերպած լինեին նրա՝ վիճակի ծանրությանը համարժեք բուժումը (պարբ. 98): ՄԻԵԴ–ը հատկապես նշեց, որ նրա դեղորայքը նրան տրվել էր առանց որևէ վերահսկողության (պարբ. 100): Ավելին՝ Ռենոլդը պատժվել էր մենախցով՝ բանտի աշխատողի վրա հարձակվելու համար, սակայն այդ որոշումը կայացնելիս հաշվի չէր առնվել նրա հոգեկան վիճակը (պարբ. 106): Դատարանը վերահաստատեց, որ հոգեկան խանգարում ունեցող անձանց խոցելիությունն անհրաժեշտ է դարձնում հատուկ պաշտպանությունը, ուստի եզրակացրեց, որ իշխանությունները չեն կատարել Ռենոլդի կյանքը պաշտպանելու՝ իրենց պոզիտիվ պարտավորությունը, և որ տեղի է ունեցել Կոնվենցիայի 2–րդ հոդվածի խախտում (պարբ. 109–110):
Saoud–ն ընդդ. Ֆրանսիայի (վճիռ՝ 9 հոկտեմբեր, 2007) — Սույն գործի շրջանակում հոգեկան խանգարում ունեցող անձը մահացել էր ձերբակալության ընթացքում: Ծայրահեղ ուժի գործադրմամբ նա 30 րոպե գամված էր եղել գետնին, որի պատճառով նա խեղդամահ էր եղել:
De Donder–ը և De Chippel–ն ընդդ. Բելգիայի (վճիռ՝ 6 դեկտեմբեր, 2011) — Գանգատաբերները հոգեբուժական խնդիրներ ունեցող երիտասարդի ծնողներն էին, ով ինքնասպանություն էր գործել բանտում: Որոշում էր կայացվել Գենթի բանտի հոգեբուժական մասնաշենքում պրն Դե Կլիպելին կալանավորելու մասին, սակայն փաստացի նա պահվել էր սովորական խցում՝ ուրիշների հետ, ապա պատժվելով տեղափոխվել էր առանձնախուց: Մի քանի օր հետո նա ինքնասպանություն էր գործել: Դատարանը 2–րդ հոդվածի վերաբերյալ նշեց, որ գանգատաբերների որդին կրկնակի խոցելի էր ինքնասպանության ռիսկի նկատմամբ, քանի որ բանտերում ավելի բարձր է ինքնասպանության տարածվածությունը, և քանի որ նրա մոտ ախտորոշված էր շիզոֆրենիա՝ ինքնասպանության բարձր ռիսկ պարունակող հոգեկան խանգարում: Ավելին՝ պրն Դե Կլիպելի բռնի և անհանգիստ վարքը բանտ գալուց առաջ և հետո պետք է որ գրաված լինեին իշխանությունների ուշադրությունը: Բացի դրանից, թեպետ նա նախազգուշական նշաններ չէր դրսևորել, իշխանությունները պետք է տեղյակ

Ինչ վերաբերում է խոշտանգման և անմարդկային ու նվաստացուցիչ վերաբերմունքի արգելքին, ապա կասկածյալի անձնական առանձնահատկությունները, հատկապես նրա խոցելիությունն ազդում է հոգեկան կամ ֆիզիկական ցավի կամ տառապանքի ծանրության՝ դատարանի կողմից տրվող գնահատականի վրա, որով որոշվում է, թե արդյոք տեղի ունեցած վերաբերմունքն առաջացրել է խոշտանգում կամ անմարդկային և նվաստացուցիչ վերաբերմունք:

ՄԻԵԴ–ը հաճախ է նշել հետևյալը. դաժան վերաբերմունքը պետք է ծանրության նվազագույն աստիճանի հասնի, որպեսզի տեղավորվի 3–րդ հոդվածի շրջանակի մեջ: Նվազագույնի գնահատականը հարաբերական է և կախված է գործի բոլոր հանգամանքներից, օրինակ՝ վերաբերմունքի տևողությունից, ֆիզիկական և/կամ հոգեկան ազդեցությունից, իսկ որոշ դեպքերում՝ տուժողի սեռից, տարիքից և առողջական վիճակից (*Քինանն ընդդ. Միացյալ Թագավորության* (վճիռ՝ 3 ապրիլ, 2001 թ.), պարբ. 109):

ՀՈԳԵԿԱՆ ԽԱՆԳԱՐՈՒՄԸ

Հոգեկան խանգարում ունեցող կասկածյալներին կամ կալանավորվածներին վերաբերող մի շարք գործերով ՄԻԵԴ–ը վճռել է, որ 2–րդ և 3–րդ հոդվածների չափանիշներին վերաբերմունքի կամ պատժի համատեղելիության գնահատականի մեջ պետք է հաշվի առնել կալանավորվածի խոցելիությունը: Դատարանը նշել է, որ «հոգեկան խանգարում ունեցող անձինք հատկապես խոցելի են, և նրանց կալանավորման դեպքում հիմնարար մարդկային արժանապատվության հարգանքի ակնհայտ խնդիրներ են ծագում» (*Մ. Ս.–ն ընդդ. Միացյալ Թագավորության* (վճիռ՝ 3 մայիս, 2012 թ.), պարբ. 39, *նաև Դյուբեկուն ընդդ. Ալբանիայի* (վճիռ՝ 18 դեկտեմբեր, 2007 թ.), պարբ. 41):

Մասնավորապես, հոգեկան լուրջ խանգարում և ինքնասպանության ռիսկ ունեցող **բանտարկյալները ունեն իրենց վիճակից բխող հատուկ**

լինեին, որ գոյություն ունի իրական ռիսկ, որ հոգեկան խանգարումներից տառապող երիտասարդը կարող է ինքնասպանության փորձ կատարել սովորական բանտի պայմաններում: Ուստի տեղի էր ունեցել 2–րդ հոդվածի խախտում:

միջոցառումների կարիք՝ ապահովել մարդավայել վերաբերմունք նրանց նկատմամբ (*Ռենոլդեն ընդդ. Ֆրանսիայի* (վճիռ՝ 16 հոկտեմբեր, 2008 թ.), պարբ. 128, *նաև Ռիվյերեն ընդդ. Ֆրանսիայի* (վճիռ՝ 11 հուլիս, 2006 թ.), պարբ. 75):

Դատարանը հիշեցրել է, որ «տվյալ վերաբերմունքի կամ պատժի՝ ՄԻԵԿ–ի 3–րդ հոդվածի չափանիշներին անհամատեղելիությունը գնահատելիս հոգեկան խանգարում ունեցող անձանց պարագայում պետք է հաշվի առնել նրանց խոցելիությունը և որոշ դեպքերում որոշակի վերաբերմունքի՝ իրենց վրա ազդեցության վերաբերյալ հասկանալի բողոք կամ ընդհանրապես բողոք ներկայացնելու անկարողությունը» (*Քինանն ընդդ. Միացյալ Թագավորության* (վճիռ՝ 3 ապրիլ, 2001 թ.), պարբ. 111, *նաև Աեփցն ընդդ. Բելգիայի* (վճիռ՝ 30 հուլիս, 1998 թ.), պարբ. 66): Իսկապես, հոգեկան խանգարում ունեցող անձանց նկատմամբ վերաբերմունքը կարող է անհամատեղելի լինել 3–րդ հոդվածի չափանիշներին մարդու հիմնարար արժանապատվության ոտնահարման առումով, անգամ եթե տվյալ անձն անկարող է կամ ի վիճակի չէ մատնանշելու դրա կոնկրետ բացասական հետևանքները (*Քինանն ընդդ. Միացյալ Թագավորության* (վճիռ՝ 3 ապրիլ, 2001 թ.), պարբ. 113)[99]:

---

[99] Keenan–ն ընդդ. Միացյալ Թագավորության (վճիռ՝ 3 ապրիլ, 2001 թ.) — Քինանն ուներ հոգեկան քրոնիկ խանգարում, որը ներառում էր պսիխոտիկ դրվագներ և պարանոյայի զգացողություն, և նրա մոտ ախտորոշվել էր անձի խանգարում: Երբ նա բանտի հիվանդանոցային մասնաշենքից տեղափոխվել էր սովորական վայր, նա ցուցաբերել էր ինքնասպանական հակումներ, պարանոյիդ տիպի հնարավոր վախեր և ագրեսիվ և բռնի պոռթկումներ (պարբ. 112): Դատարանը հանգեց հետևյալ եզրակացությանը: Մարկ Քինանի վիճակի արդյունավետ մոնիթորինգի բացակայությունը և նրա գնահատման և բուժման մեջ հոգեբուժական իրազեկված մասնակցության բացակայությունը վկայում են այն մասին, որ ինքնասպանության վտանգ կրող և հոգեկան խանգարում ունեցող անձին ցուցաբերված բուժօգնությունն ունեցել էր էական թերություններ: Այդ հանգամանքներում նրա նկատմամբ ուշացած կարգով կարգապահական ծանր պատժի՝ պատժախցերի մասնաշենքում 7–օրյա մեկուսացման պատժի կիրառությունը և նրա պատժի տևողությունը լրացուցիչ 28 օրով երկարացնելը, որը կիրառվել էր միջադեպից երկու շաբաթ անց և նրա ազատ արձակման ակնկալվող ամսաթվից ընդամենը ինը օր առաջ և կարող էր սպառնալ նրա ֆիզիկական և բարոյական դիմադրությանը, համատեղելի չէ հոգեկան խանգարում ունեցող անձի պարագայում պահանջվող վերաբերմունքի չափանիշին: Այն պետք է համարել անմարդկային և նվաստացուցիչ վերաբերմունք և պատիժ Կոնվենցիայի 3–րդ հոդվածի իմաստով:
Renolde–ն ընդդ. Ֆրանսիայի (վճիռ՝ 16 հոկտեմբեր, 2008 թ.) — ՄԻԵԿ 3–րդ հոդվածի խախտման առկայությունը որոշելիս ՄԻԵԴ–ը հատկապես նշեց, որ Ռենոլդի

ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԻՆՔ ԵՎ ԲՈՒԺՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՑՈՒՑԱԲԵՐԵԼՈՒ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ

ՄԻԵԴ–ը համարել է, որ «այն դեպքում, երբ իշխանությունները որոշում են կալանավորել հաշմանդամություն ունեցող անձին, նրանք պետք է հատուկ զգուշավորություն ցուցաբերեն՝ երաշխավորելով նրա՝ հաշմանդամությունից բխող հատուկ կարիքներին համապատասխա-

---

նկատմամբ կիրառվել էր տույժ՝ 45 օր պատժախցում պահելը, որը կարող էր վտանգել նրա ֆիզիկական և բարոյական դիմադրությունը: Ուստի Դատարանը եզրակացրեց, որ այդ տույժը համատեղելի չէր հոգեկան խանգարում ունեցող անձի պարագայում պահանջվող վերաբերմունքի չափանիշին և պետք է համարել անմարդկային և նվաստացուցիչ վերաբերմունք և պատիժ, ուստի՝ Կոնվենցիայի 3–րդ հոդվածի խախտում (պարբ. 129–130):

Rupa–ն ընդդ. Ռումինիայի (վճիռ՝ 16 դեկտեմբեր, 2008 թ.) — Գանգատաբերը երկարատև հոգեկան հիվանդություն ուներ և հաշվառված էր որպես հաշմանդամ: Նա պնդում էր, որ ոստիկանության կողմից ենթարկվել է դաժան վերաբերմունքի և մի քանի անգամ անմարդկային և նվաստացուցիչ պայմաններում պահվել ոստիկանական խցերում՝ ի խախտումն 3–րդ հոդվածի (անմարդկային և նվաստացուցիչ վերաբերմունք կամ պատիժ): ՄԻԵԴ–ը նկատեց, որ գանգատաբերի ձերբակալման ժամանակ նա ֆիզիկապես ենթարկվել էր վատ վերաբերմունքի, ջանքեր չէին գործադրվել նրան բուժզննության ենթարկելու համար, չնայած նրա հոգեկան խանգարումներին՝ հատուկ միջոցներ չէին նախատեսվել վարքի խանգարումներ ունեցող անձին ձերբակալելու դեպքում ի վերուստ առկա ռիսկերը մեղմելու ուղղությամբ: Դատարանը նշեց նաև, որ միայն մետաղյա նստարաններով կահավորված ոստիկանական պահման սենյակում գանգատաբերին պահելն ակնհայտորեն աննպատակահարմար էր գանգատաբերի առողջական խնդիրներ ունեցող անձի կալանավորման համար, և որ նա չէր ենթարկվել բուժզննության: Իշխանությունները պարտավոր էին հնարավորինս շուտ ապահովել նրա զննությունը հոգեբույժի կողմից, որպեսզի պարզվեր, թե արդյոք նրա հոգեբանական վիճակը համատեղելի է կալանքի հետ, և թե թերապևտիկ ինչ միջոցառումներ պետք է իրականացվեն: Ուստի տեղի էր ունեցել 3–րդ հոդվածի խախտում:

M. S.–ն ընդդ. Միացյալ Թագավորության (վճիռ՝ 3 մայիս, 2012 թ.) — Գանգատաբերը, ով կասկածվում էր իր մորաքրոջը մարմնական վնասվածք պատճառելու մեջ, հոգեկան հիվանդություն ուներ և պահվել էր ոստիկանության խցում ավելի քան 3 օր՝ սպասելով հոգեբուժական հիվանդանոց տեղափոխվելուն: Նրա հոգեկան վիճակը բուժման բացակայության պայմաններում արագորեն վատթարացել էր: Նա բողոքում էր 3–րդ հոդվածի խախտումների մասին (անմարդկային և նվաստացուցիչ վերաբերմունք): ՄԻԵԴ–ը վճռեց, որ գանգատաբերի սկզբնական կալանքն անհրաժեշտ էր՝ հաշվի առնելով իր և ուրիշների համար նրա վտանգավորությունը (պարբ. 40), և որ իշխանությունները դիտավորություն չէին ունեցել՝ գանգատաբերի նկատմամբ ցուցաբերելու 3–րդ հոդվածին անհամատեղելի վերաբերմունք (պարբ. 41): Այնուհանդերձ, գանգատաբերը ոստիկանության բաժնում կալանավորման ողջ ընթացքում եղել էր խիստ խոցելի վիճակում, քանի որ հոգեբուժական պատշաճ բուժման սուր կարիք էր ունեցել: Այդ վիճակն էապես նսեմացրել էր նրա հիմնարար մարդկային արժանապատվությունը՝ խախտելով 3–րդ հոդվածը (պարբ. 44–46):

նող պայմանները» (*Զարզիկին ընդդ. Լեհաստանի* (վճիռ՝ 12 մարտ, 2013 թ.), պարբ. 102, նաև *Փրայսն ընդդ. Միացյալ Թագավորության* (վճիռ՝ 10 հուլիս, 2001 թ.), պարբ. 30, *Ֆարբրուսն ընդդ. Լատվիայի* (վճիռ՝ 2 դեկտեմբեր, 2004 թ.), պարբ. 56):

Նման գործերում ՄԻԵԴ–ը պետք է հատկապես հետևյալ 3 գործոնները հաշվի առնի գանգատաբերի կալանքի շարունակման՝ նրա առողջական վիճակին համատեղելի լինելու հանգամանքը գնահատելիս, երբ առողջական վիճակը մտահոգության տեղիք է տալիս. (**ա**) **կալանավորվածի վիճակը**, (**բ**) **ցուցաբերված խնամքի որակը**, **և** (**գ**) **թե արդյոք գանգատաբերը պետք է շարունակի մնալ կալանավորված՝ հաշվի առնելով նրա առողջական վիճակը** (*Զարզիկին ընդդ. Լեհաստանի*, (վճիռ՝ 12 մարտ, 2013 թ.), պարբ. 103):

Պետությունն իսկապես պարտավոր է ապահովել, որպեսզի անձը կալանավորվի նրա մարդկային արժանապատվությունը հարգող պայմաններում, որպեսզի միջոցն ի կատար ածելու ձևը և մեթոդը նրան չպատճառեն կալանավորման դեպքում անխուսափելի տառապանքի մակարդակը գերազանցող դժվարություններ կամ տառապանք, և որպեսզի **համարժեքորեն երաշխավորվեն նրա առողջությունը և բարօրությունը՝ հաշվի առնելով կալանավորման գործնական պահանջները** (*Վեներսկին ընդդ. Լեհաստանի* (վճիռ՝ 20 հունվար, 2009 թ.), պարբ. 55, *նաև Կուդլան ընդդ. Լեհաստանի* (վճիռ՝ 29 հոկտեմբեր, 2000 թ.), պարբ. 91–94):

Այսպես՝ քննիչները պարտավոր են ապահովել, որպեսզի մինչդատական կալանքի տակ պահվող խոցելի կասկածյալները ստանան իրենց անհրաժեշտ համարժեք օժանդակություն, և որպեսզի նրանց կալանավորման պայմանները համապատասխանեն նրանց վիճակին: **Ֆիզիկական ծանր հաշմանդամություն ունեցող անձանց նրանց առողջական վիճակին չհամապատասխանող պայմաններում կալանավորելը կամ բնական կարիքները հոգալու**, **լողանալու և հագնվելու հարցում նրանց խցակիցների օգնությունից կախվածության մեջ թողնելը առաջացրել էին նվաստացուցիչ վերաբերմունք** (*Զարզիկին ընդդ. Լեհաստանի* (վճիռ՝ 12 մարտ, 2013 թ.), պարբ. 104, *նաև Փրայսն ընդդ. Մի-*

ացյալ Թագավորության (վճիռ՝ 10 հուլիս, 2001 թ.), պարբ. 30, *Էնջելն ընդդ. Հունգարիայի* (վճիռ՝ 20 մայիս, 2010 թ.), պարբ. 27–30, *Վինսենթն ընդդ. Ֆրանսիայի* վճիռ՝ 24 հոկտեմբեր, 2006 թ.), պարբ. 94–103)[100]:

---

[100] Price–ն ընդդ. Միացյալ Թագավորության (վճիռ՝ 10 հուլիս, 2001 թ.) — Գանգատաբերը չորս վերջույթներից զուրկ բրիտանուհի էր, ով ուներ երիկամային խնդիրներ և կալանավորվել էր ոստիկանությունում և բանտում՝ դատարանի հանդեպ անհարգալից վերաբերմունքի համար: Նա բողոքում էր, որ իր կալանքի պայմանները հարմարեցված չէին իր հաշմանդամությանը, և որ ինքը ենթարկվում էր անմարդկային և նվաստացուցիչ վերաբերմունքի՝ ՄԻԵԿ–ի 3–րդ հոդվածին հակառակ: ՄԻԵԴ–ը վճռեց, որ թեպետ չկային գանգատաբերին նվաստացնելու կամ ստորացնելու որոշակի դիտավորության մասին վկայող փաստեր, Դատարանը համարեց, որ ծանր հաշմանդամություն ունեցող անձին վտանգի աստիճան սառը պայմաններում կալանավորելու դեպքում ծագում էր վերքերի առաջացման ռիսկ, և քանի որ նրա մահճակալը դժվարամատչելի կամ անհասանելի էր, և նա չէր կարող զուգարան գնալ կամ մաքուր մնալ առանց ծանրագույն դժվարության, տեղի էր ունեցել Կոնվենցիայի 3–րդ հոդվածին հակասող նվաստացուցիչ վերաբերմունք (պարբ. 30):
Todorov–ն ընդդ. Ուկրաինայի (վճիռ՝ 12 հունվար, 2012 թ.) — Գանգատաբերը մեղադրվում էր զինված ավազակային հարձակման և հանցավոր կազմակերպության անդամակցելու մեջ: Նա ստորագրությամբ հրաժարվել էր փաստաբան ունենալու իրավունքից և խոստովանել կալանքի ընթացքում հարցաքննվելիս: Գանգատաբերն ուներ մաշկի հիվանդություն, աչքի կատարակտ և մինչդատական կալանքի ընթացքում մի քանի անգամ խնդրել էր, որպեսզի իրեն թույլատրեն ստանալ իր բուժումը, սակայն մերժվել էր: Նա մեղավոր էր ճանաչվել և դատապարտվել յոթ տարվա ազատազրկման: Բանտում գտնվելու ընթացքում նրա վիճակը վատթարացել էր, և բժիշկները մի քանի անգամ խորհուրդ էին տվել նրան վիրահատել: Այնուհանդերձ, բանտում պայմանների բացակայության պատճառով գանգատաբերը չէր ստացել համարժեք բուժօգնություն և ամբողջովին կորցրել էր տեսողությունը: Նա ՄԻԵԴ–ին բողոքել էր 3–րդ հոդվածի խախտման (անմարդկային և նվաստացուցիչ վերաբերմունք), 5–րդ հոդվածի 3–րդ մասի խախտման (ողջամիտ ժամկետում դատաքննություն), 6–րդ հոդվածի 1–ին, 2–րդ մասերի և 3–րդ մասի (գ) կետի խախտումների (արդար դատաքննություն, փաստաբանի օգնություն) մասին: ՄԻԵԴ–ը վճռեց, որ իշխանությունները չէին արել այն, ինչ ողջամտորեն կարելի էր ակնկալել նրանցից գանգատաբերի առողջական վիճակի վատթարացումը և տեսողության կորուստը կանխելու ուղղությամբ: Արդյունքում նա ենթարկվել էր անմարդկային և նվաստացուցիչ վերաբերմունքի, և տեղի էր ունեցել Կոնվենցիայի 3–րդ հոդվածի խախտում (պարբ. 51–55):
Zarzycki–ն ընդդ. Լեհաստանի (վճիռ՝ 12 մարտ, 2013 թ.) — Կալանքի տակ պահված գանգատաբերի ձեռքերն անդամահատված էին, և նա այլ անձի օգնության կարիք ուներ (պարբ. 106): Գանգատաբերը պնդում էր, թե իր կալանավորման երկու ժամկետների ընթացքում նա չէր կարողացել կատարել իր առօրյա կամ կենցաղային գործառույթներից շատերը, օրինակ՝ կերակուրներ մատուցելը, մահճակալը հարդարելը, ոտքի եղունգները կտրելը, լվացվելը, սափրվելը և հագնվելը, ինչպես նաև զուգարան գնալուց հետո մաքրվելը (պարբ. 107): Դատարանը նշեց հետևյալը.
... Բանտի ղեկավարությունը նախաձեռնողական վերաբերմունք էր դրսևորել գանգատաբերի նկատմամբ: Իրավասու մարմինները գանգատաբերին տրամադրել էին կանոնավոր և համարժեք աջակցություն, որն անհրաժեշտ էր՝ ելնելով նրա հատուկ կարիքներից: Ավելին՝ սույն գործով չկան գանգատաբերին նվաստացնելու կամ

Բացի դրանից՝ ՄԻԵԴ–ը վճռել է, որ ՄԻԱՎ կամ առողջական այլ խնդիրներ ունեցող և կալանավորված անձանց նկատմամբ բժշկական ուշադրության բացակայությունն առաջացրել է ՄԻԵԿ–ի 3–րդ հոդվածի խախտում: Պետությունները պարտավոր են իրենց վերաբերմունքի մեջ հաշվի առնել այդ անձանց խոցելիությունը: Նրանք հատուկ պարտավորություն ունեն՝ այդ անձանց ցուցաբերելու համարժեք և անհրաժեշտ բուժօգնություն, հատկապես, երբ հաստատվել է նման բուժօգնության անհրաժեշտության հրատապությունը (*Վեներսկին ընդդ. Լեհաստանի* (վճիռ՝ 20 հունվար, 2009 թ.), պարբ. 64): Համարժեք բուժօգնությունը նշանակում է, որ կալանավորվածը պարբերաբար ստուգվում է բավարար որակավորում ունեցող բուժաշխատողների կողմից, ովքեր ի վիճակի են արդյունավետորեն գնահատելու նրա վիճակը և բուժման համարժեք կուրս նշանակելու նրա առողջական խնդիրների համար[101]:

ստորացնելու հատուկ դիտավորության կամ նման դեպքերի առկայության որևէ փաստեր: Ուստի Դատարանը վճռում է, որ թեպետ անդամահատված ձեռքերով բանտարկյալն ավելի խոցելի է կալանքի դժվարությունների նկատմամբ, սույն գործի հանգամանքներում գանգատաբերի նկատմամբ վերաբերմունքը չէր հասել ծանրության այն աստիճանին, որպեսզի համարվեր Կոնվենցիայի 3–րդ հոդվածին հակասող նվաստացուցիչ վերաբերմունք (պարբ. 125):

[101] McGlinchey–ն ընդդ. Միացյալ Թագավորության (վճիռ՝ 29 ապրիլ, 2003 թ.) — Գանգատաբերները կին բանտարկյալի հարազատներն էին, ով մահացել էր հիվանդանոցում՝ հերոինային կախվածության զրկանքի ծանր ախտանշաններով: Նրանք պնդում էին, որ տեղի են ունեցել 3–րդ հոդվածի (անմարդկային և նվաստացուցիչ վերաբերմունքի արգելք) խախտումներ, քանի որ նա բանտում գտնվելու ընթացքում չէր ստացել համարժեք բուժօգնություն: ՄԻԵԴ–ը վերահաստատեց, որ պետությունը, 3–րդ հոդվածի համաձայն, պարտավոր է ապահովել, որպեսզի անձը կալանավորվի նրա մարդկային արժանապատվությունը հարգող պայմաններում, որպեսզի միջոցն ի կատար ածելու ձևը և մեթոդը նրան չպատճառեն կալանավորման դեպքում անխուսափելի տառապանքի մակարդակը գերազանցող դժվարություններ կամ տառապանք, և որպեսզի համարժեքորեն երաշխավորվեն նրա առողջությունը և բարօրությունը՝ հաշվի առնելով կալանավորման գործնական պահանջները, մասնավորապես նրան ցուցաբերելով պահանջվող բուժօգնությունը (պարբ. 45–46): ՄԻԵԴ–ը վճռեց, որ բանտի ղեկավարությունը համարժեք մոնիթորինգ չէր իրականացրել բանտարկյալի քաշի նկատմամբ և ավելի արդյունավետ քայլեր չէր ձեռնարկել տվյալ վիճակում նրան բուժելու ուղղությամբ: Այսպիսով՝ նրանք խախտել էին կալանավորված անձանց դեպքում պահանջվող բուժօգնությունը ցուցաբերելու իրենց պարտավորությունը և չէին բավարարել Կոնվենցիայի 3–րդ հոդվածով սահմանված չափանիշները (պարբ. 47–58): Wenerski–ն ընդդ. Լեհաստանի (վճիռ՝ 20 հունվար, 2009 թ.) — Գանգատաբերը տարիներ շարունակ աչքերի տարբեր խնդիրներ էր ունեցել, որից հետո նրա աջ աչքը հեռացվել էր: Դատարանը եզրակացրեց, որ «տևական ժամանակ գանգատաբերին թողնելով, որպեսզի նա ծանր ցավից տառապի, 1998 թվականից մինչև 2004 թվա-

ՏԱՐԻՔԸ ԵՎ ՍԵՌԸ

Ինչպես նշվեց, ՄԻԵԴ–ի կողմից 3–րդ հոդվածի իմաստով ծանրությունը գնահատելիս հաշվի են առնվում նաև գանգատաբերի տարիքը և սեռը (*Քինանն ընդդ. Միացյալ Թագավորության* (վճիռ՝ 3 ապրիլ, 2001 թ.), պարբ. 109, *Մենեշևան ընդդ. Ռուսաստանի*, (վճիռ՝ 9 մարտ, 2006 թ.), պարբ. 61)[102]: Հետևաբար, քննիչները պարտավոր են ապա-

---

կանի փետրվարի 18–ը նրան չցուցաբերելով աջ աչքի ակնակապիճի անհրաժեշտ և հրատապ բուժումը՝ կալանավորող մարմինները խախտել էին արդյունավետ բուժօգնություն ցուցաբերելու իրենց պարտավորությունները, և գանգատաբերը ենթարկվել էր Կոնվենցիայի 3–րդ հոդվածը խախտող անմարդկային և նվաստացուցիչ վերաբերմունքի» (պարբ. 64):

Ε. Α.–ն ընդդ. Ռուսաստանի (վճիռ՝ 23 մայիս, 2013 թ.) — Ձերբակալությունից առաջ և հետո գանգատաբերի մոտ ախտորոշվել էին մի շարք հիվանդություններ, որոնց համար նա ստացել էր բուժումներ: 2003 թվականին ձերբակալվելուց հետո նրա անալիզում հայտնաբերվել էր ՄԻԱՎ վարակ: Գանգատաբերը պնդում էր, թե իր ՄԻԱՎ վարակը բանտի ղեկավարության թերացման հետևանք էր: Դատարանը եզրակացրեց, որ իշխանությունները չէին կատարել գանգատաբերին համարժեք բուժօգնություն ցուցաբերելու իրենց պարտավորությունը (պարբ. 66): Ինչ վերաբերում է գանգատաբերի առողջական վիճակի ծանրությանը և 2003–ից 2006 թվականներին իշխանությունների կողմից բուժօգնություն չցուցաբերելուն, ապա ՄԻԵԴ–ը նշեց հետևյալը. «Սույն գործով բացահայտվում է պատասխանող Պետության կողմից թույլ տված խախտում, որը հանգեցրել է այնպիսի իրավիճակի, որում կարելի է ասել, որ գանգատաբերը կրել է կալանավորման դեպքում անխուսափելի տառապանքի մակարդակը գերազանցող դժվարություն կամ տառապանք: Ուստի Դատարանը եզրակացնում է, որ իշխանությունների թերացումն առաջացրել է անմարդկային և նվաստացուցիչ վերաբերմունք Կոնվենցիայի 3–րդ հոդվածի իմաստով» (պարբ. 67):

[102] Aydin–ն ընդդ. Թուրքիայի (վճիռ՝ 25 սեպտեմբեր, 1997 թ.) — Գանգատաբերը կալանավորվել էր անվտանգության ուժերի կողմից, և կալանքի ընթացքում բռնաբարվել էր և ենթարկվել դաժան վերաբերմունքի տարբեր ձևերի: Դատարանը նշեց, որ «պետության պաշտոնյայի կողմից կալանավորվածի բռնաբարությունը պետք է համարել դաժան վերաբերմունքի հատկապես ծանր և նողկալի դրսևորում՝ հաշվի առնելով, որ այդ պարագայում շահագործվել են տուժողի խոցելիությունը և թուլացած դիմադրողականությունը»: Ավելին՝ Դատարանը համարեց, որ հաշվի առնելով նրա սեռը և տարիքը, իսկ դեպքերի ժամանակ նա 17 տարեկան էր, գանգատաբերը կալանքի ընթացքում վերապրել էր նաև ահաբեկող և նվաստացնող մի շարք փորձառություններ, որոնք նրան էլ ավելի խոցելի էին դարձրել՝ ներառյալ նրան ավելի քան երեք օր կալանավորման ընթացքում աչքակապ պահելը, հարցաքննության ընթացքում ծեծելը, նվաստացնող պայմաններում մերկ քայլել ստիպելը և, անվի մեջ գլորելուն զուգահեռ, բարձր ճնշման ջրի շիթով ջրելը: Ուստի Դատարանը համոզվեց, որ նրա նկատմամբ տեղի է ունեցել խոշտանգում՝ ի խախտումն 3–րդ հոդվածի (պարբ. 81–86):

Menesheva–ն ընդդ. Ռուսաստանի (վճիռ՝ 9 մարտ, 2006 թ.) — Տվյալ գործով գանգատաբերը մի քանի անգամ ծեծվել էր ոստիկանությունում կալանքի տակ գտնվելու ընթացքում: Դատարանը գանգատաբերին պատճառված ցավի կամ տառապանքի ծանրությունը գնահատելիս հաշվի առավ «գործի բոլոր հանգամանքները, օրինակ՝

հովել, որպեսզի իրենց կողմից կասկածյալների նկատմամբ վերաբերմունքը վերջիններիս չպատճառի անմարդկային կամ նվաստացուցիչ վերաբերմունք՝ հաշվի առնելով նրանց անձնային առանձնահատկությունները, օրինակ՝ սեռը:

Իգական սեռի կասկածյալների խոշտանգման և նրանց նկատմամբ դաժան վերաբերմունքի խնդիրը լայն տարածում ունի ողջ Եվրոպայում, և քննիչները պետք է միջոցներ ձեռնարկեն, որպեսզի նման վերաբերմունք տեղի չունենա: Օրինակ՝ բողոքներ են ստացվել այն մասին, որ Հունաստանում իգական սեռի կալանավորները հեշտոցի ինվազիվ և նվաստացուցիչ զննությունների են ենթարկվել, որոնք կատարել են բանտի աշխատողները՝ խուզարկության ընթացքում[103]:

Քննիչները պետք է միջոցներ ձեռնարկեն քննությունը գենդերազգայուն կերպով իրականացնելու համար, որպեսզի կանայք քննության ընթացքում չենթարկվեն անմարդկային կամ նվաստացուցիչ վերաբերմունքի: Կանայք հատկապես խոցելի են, երբ զրկված են ազատությունից: Բռնությունը կարող է տեղի ունենալ բացահայտ գործողությունների, օրինակ՝ բռնաբարության կամ սեռական նվաստացման տեսքով, կամ տեղի ունենալ այն պարագայում, երբ ապօրինի դիտում է իրականացվում ցնցուղներում կամ զուգարաններում, կամ կատարվում են ոչ անհրաժեշտ անձնական խուզարկություններ, կամ երբ արական սեռի ներկայացուցիչները ներկա են այդ գործողությունների ընթացքում և այդ վայրերում[104]:

վերաբերմունքի տևողությունը, դրա ֆիզիկական կամ հոգեկան ազդեցությունը, իսկ որոշ դեպքերում՝ նաև տուժողի սեռը, տարիքը և առողջական վիճակը»: Հետևաբար, Դատարանը եզրակացրեց, որ «դեպքերի ժամանակ գանգատաբերն ընդամենը 19 տարեկան էր, և որպես իգական սեռի ներկայացուցիչ՝ առճակատվելով արական սեռի մի քանի ոստիկանների, հատկապես խոցելի էր»: Դատարանը հաշվի առավ նաև դաժան վերաբերմունքի տևողությունը՝ եզրակացնելով, որ այն հավասարազոր է եղել խոշտանգման (պարբ. 61–63):

[103] Redress, Torture in Europe: The Law and Practice, Regional Conference Report (2012 Redress Trust), էջ 10: Available at: http://www.redress.org/downloads/publications/121012%20Europe%20Report%20FINAL.pdf [դիտվել է 23 մարտ, 2016].

[104] UNDOC, Handbook on Effective police responses to violence against women, Criminal justice Handbook Series (2010, United Nations: New York), էջ 12:

ՄԱՐԳԻՆԱԼԱՑՎԱԾ ԱՅԼ ԽՄԲԵՐ ԵՎ ԽՈՇՏԱՆԳՄԱՆ ԵՎ ԴԱ-ԺԱՆ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԻ ԱՎԵԼԻ ԲԱՐՁՐ ՌԻՍԿԸ

Քննիչները պետք է տեղյակ լինեն, որ մարգինալացված այլ խմբեր՝ ներառյալ էթնիկ փոքրամասնությունները, միգրանտները և ապաստան հայցողները, կանայք և սեռական փոքրամասնությունները, հատկապես խոցելի են խոշտանգման և դաժան վերաբերմունքի նկատմամբ[105]: Կասկածյալների հանդեպ դաժան վերաբերմունքի շարժառիթը հաճախ արմատացած խտրականությունն է, և եվրոպական մի շարք պետությունների փորձը վկայում է այնպիսի գործելակերպի առկայության մասին, որի պարագայում քրեական արդարադատության համակարգում բռնության և չարաշահումների շարժառիթը խտրականությունն է[106]: ՄԻԵԴ–ը բազմիցս անդրադարձել է այդ հարցերին[107]:

---

[105] Redress, Torture in Europe: The Law and Practice, Regional Conference Report (2012 Redress Trust), էջ 9: Available at: http://www.redress.org/downloads/publications/121012%20Europe%20Report%20FINAL.pdf [դիտվել է 23 մարտ, 2016].

[106] Redress, Torture in Europe: The Law and Practice, Regional Conference Report (2012 Redress Trust), էջ 9: Available at: http://www.redress.org/downloads/publications/121012%20Europe%20Report%20FINAL.pdf [դիտվել է 23 մարտ, 2016].

[107] Stefanou–ն ընդդ. Հունաստանի (վճիռ՝ 22 ապրիլ, 2010 թ.) — Ստացվել էին տեղեկություններ այն մասին, որ ոստիկանությունը բիրտ և ավելորդ ուժ էր գործադրել գնչու անձին բերման ենթարկելիս: Ֆիզիկական վնասն ուղեկցվել էր վախի, անհանգստության և նվաստացման զգացմունքներով, որոնք պետք է որ նրան պատճառած լինեին այնպիսի տառապանք, որի ծանրությունը հաշվի առնելով՝ ոստիկանության գործողությունները կարող էին դասակարգվել որպես անմարդկային և նվաստացուցիչ: Ուստի ոստիկանության գործողություններն առաջացրել էին ՄԻԵԿ–ի 3–րդ հոդվածի խախտում (պարբ. 52):
Zontul–ն ընդդ. Հունաստանի (վճիռ՝ 17 հունվար, 2012 թ.) — Վկայում է կալանքի ընթացքում ԼԳԲՏ անձանց նկատմամբ բռնության մասին (սույն գործով գանգատաբերն այլ միգրանտների հետ միասին կալանավորվել էր Հունաստանի ջրային սահմանի պահպանության ծառայության կողմից): Զոնտուլը բռնաբարվել էր մահակով, և կարծիք կար, որ նա թիրախավորվել է իր սեռական կողմնորոշման պատճառով: Դատարանը վճռեց, որ Հունաստանի պաշտոնյաները պատասխանատվություն են կրում խոշտանգման համար (3–րդ հոդված) (պարբ. 84–93):
X–ն ընդդ. Թուրքիայի (վճիռ՝ 9 հոկտեմբեր, 2012 թ.) — Սույն գործը վերաբերում էր նույնասեռական բանտարկյալի, ով այլ բանտարկյալների կողմից ահաբեկման և ճնշումների գործողությունների մասին բողոքելուց հետո ավելի քան 8 ամիս ընդհանուր տևողությամբ պահվել էր մենախցում: Դատարանը գտավ, որ կալանքի այդ պայմանները գանգատաբերին պատճառել էին հոգեկան և ֆիզիկական տառապանք, ինչպես նաև իր արժանապատվությունից զրկված լինելու զգացողություն՝ այդ կերպ Կոնվենցիայի 3–րդ հոդվածի (անմարդկային կամ նվաստացուցիչ վերաբերմունքի արգելքի) խախտմամբ

ԽՈՑԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԿԱՍԿԱԾՅԱԼԻ ԱՐԴԱՐ ԴԱՏԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ

Խոցելի կասկածյալների արդար դատաքննության իրավունքը երաշխավորելու համար Հայաստանում կարող է անհրաժեշտ լինել, որպեսզի քննիչները տրամադրեն լրացուցիչ երաշխիքներ և աջակցություն: Դա հատկապես վերաբերում է խոցելի չափահաս անձանց, ում ընկալումը կարող է սահմանափակված լինել հոգեկան կամ ֆիզիկական հաշմանդամության, թմրամիջոցներից կամ ալկոհոլից կախվածության պատճառով:

Եվրամիությունը մշակել է քրեական վարույթում կասկածվող կամ մեղադրվող խոցելի անձանց դատավարական երաշխիքների վերաբերյալ Հրահանգը[108], որն անդամ պետություններին քաջալերում է ամրապնդել բոլոր այն կասկածյալների և մեղադրյալների դատավարական իրավունքները, ովքեր չեն կարող հասկանալ քրեական վարույթը և արդյունավետորեն մասնակցել դրան՝ պայմանավորված իրենց տարիքով, հոգեկան կամ ֆիզիկական վիճակով կամ հաշմանդամությամբ (ԵՄ հրահանգ 2013/C 378/02, պարբ. 1):

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ

Լրացուցիչ երաշխիքները պետք է ներառեն լիարժեք իրազեկումը և մասնակցելու հնարավորությունը՝ երաշխավորելու համար տեղեկատվության տրամադրումը: Խոցելի անձինք, իսկ համապատասխան դեպքերում՝ նրանց օրինական ներկայացուցիչները, պետք է տեղեկացվեն դատավարական իրավունքների, մասնավորապես տեղեկատվության իրավունքի, բուժօգնության իրավունքի, փաստաբան ունենալու իրավունքի, անձնական կյանքի հարգման իրավունքի, իսկ համապատասխան դեպքերում՝ նաև մինչդատական կալանքին առնչվող իրա-

---

առաջացնելով «անմարդկային կամ նվաստացուցիչ վերաբերմունք»: Դատարանը նաև վճռեց, որ գանգատաբերին մենախցում պահելու հիմնական պատճառը եղել էր ոչ թե նրան պաշտպանելը, այլ նրա սեռական կողմնորոշումը: Այդպես՝ Դատարանը եզրակացրեց, որ տեղի էր ունեցել Կոնվենցիայի 14–րդ հոդվածը (խտրականության արգելքը) խախտող խտրական վերաբերմունք:

[108] Այսուհետ՝ ԵՄ հրահանգ 2013/C 378/02:

վունքների մասին (ԵՄ հրահանգ 2013/C 378/02, 3–րդ բաժին): Այդ տեղեկությունը պետք է տրամադրել այնպիսի ձևով, որը հասանելի կլինի խոցելի կասկածյալին (ԵՄ հրահանգ 2013/C 378/02, 3–րդ բաժին): Օրինակ՝ խուլ կասկածյալը պետք է համապատասխան տեղեկությունները ստանա այն ձևով, որը նրան հասկանալի կլինի՝ ներառյալ ժեստերի լեզվի թարգմանչի միջոցով կամ համապատասխան գրավոր տեղեկատվության տեսքով:

ՄԻԵԿ–ի 6–րդ հոդվածի 3–րդ մասի (ա) կետով պահանջվում է, որպեսզի հանցագործության մեջ մեղադրվող յուրաքանչյուր ոք իրեն հասկանալի լեզվով անհապաղ ու հանգամանորեն տեղեկացվի իրեն ներկայացված մեղադրանքի բնույթի և հիմքի մասին: Բացի դրանից՝ ՄԻԵԿ–ի 6–րդ հոդվածի 3–րդ մասի (ե) կետով պահանջվում է, որպեսզի կասկածյալն օգտվի թարգմանչի անվճար օգնությունից, եթե ինքը չի հասկանում դատարանում գործածվող լեզուն կամ չի խոսում այդ լեզվով: Որպեսզի խոցելի կասկածյալները տեղեկացվեն իրենց ներկայացված մեղադրանքի մասին և կարողանան հասկանալ քննչական վարույթը, քննիչները պետք է պոզիտիվ քայլեր ձեռնարկեն կասկածյալների նկատմամբ՝ ելնելով նրանց անհատական կարիքներից, ապահովեն համապատասխան տեղեկություններով[109]:

---

[109] Vaudelle–ն ընդդ. Ֆրանսիայի (վճիռ՝ 30 հունվար, 2001 թ.) — Գանգատաբերը մեղադրվում էր 15 տարեկանը չլրացած անչափահասների նկատմամբ սեռական ոտնձգությունների մեջ: Դատարանը վճռեց, որ հատուկ դատավարական երաշխիքներ կարող են անհրաժեշտ լինել այն անձի շահերը պաշտպանելու համար, ով իր հոգեկան խանգարման պատճառով ոչ լիովին է ի վիճակի գործելու իր անունից: Դատարանը հանգեց հետևյալ եզրակացությանը:

Նման գործում, որը վերաբերում է ծանր մեղադրանքի, ազգային իշխանությունները պետք է ձեռնարկեն լրացուցիչ քայլեր՝ ելնելով արդարադատության պատշաճ իրականացման շահից: Նրանք կարող էին գանգատաբերին կարգադրել, որպեսզի տեսակցի հոգեբույժի հետ .... և ներկայանա դատաքննությանը, իսկ չկատարելու դեպքում՝ ապահովեին վերահսկող անձի կամ փաստաբանի միջոցով նրա ներկայացվածությունը: Դա գանգատաբերին հնարավորություն կընձեռեր հասկանալու վարույթը և հանգամանորեն տեղեկացված լինելու իրեն ներկայացված մեղադրանքի բնույթի և պատճառի մասին՝ Կոնվենցիայի 6–րդ հոդվածի 3–րդ մասի (ա) կետի իմաստով (պարբ. 65):

Ուստի տեղի է ունեցել Կոնվենցիայի 6–րդ հոդվածի խախտում:

Płonka–ն ընդդ. Լեհաստանի (վճիռ՝ 31 մարտ, 2009 թ.) — Գանգատաբերը, ով վերջին 20 տարիներին տառապում էր ալկոհոլամոլությամբ, ձերբակալվել էր մարդ

ՓԱՍՏԱԲԱՆԻ ՀԵՏ ՏԵՍԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔԸ

Արդար դատաքննության իրավունքի գործնական և արդյունավետ կիրառությունն ապահովելու համար կասկածյալները, հատկապես եթե նրանք խոցելի վիճակում են, պետք է առաջին իսկ հարցաքննության պահից ունենան փաստաբանի հետ հանդիպելու հնարավորություն, «բացառությամբ, երբ յուրաքանչյուր գործի կոնկրետ հանգամանքների լույսի ներքո հիմնավորվում է, որ այդ իրավունքը սահմանափակելու համար գոյություն ունեն ծանրակշիռ պատճառներ» (*Սալդուզն ընդդ. Թուրքիայի* (Մեծ պալատի վճիռ՝ 27 նոյեմբեր, 2008 թ.), պարբ. 55):

Բացի դրանից՝ հույժ կարևոր է, որպեսզի կասկածյալի օրինական ներկայացուցիչը կամ համապատասխան չափահաս անձը հնարավորինս շուտ տեղեկացվի կասկածյալի նկատմամբ քրեական վարույթի, մեղադրանքի բնույթի, դատավարական իրավունքների և իրավական պաշտպանության առկա միջոցների մասին (ԵՄ հրահանգ 2013/C 378/02, պարբ. 10): Որպեսզի երաշխավորվի արդար դատաքննության իրավունքը, առանձնապես խոցելի ճանաչված անձինք, ովքեր չեն կարող հետևել քրեական վարույթին և հասկանալ այն, չպետք է կարողանան հրաժարվել փաստաբան ունենալու իրավունքից (ԵՄ հրահանգ

սպանելու կասկածանքով: Նա պնդում էր, որ իրեն պատշաճ կերպով չեն տեղեկացրել հարցաքննության ընթացքում իրավաբանի օգնություն ստանալու հնարավորության մասին: ՄԻԵԴ–ը վճռեց, որ հաշվի առնելով գանգատաբերի առանձնահատուկ խոցելիությունը՝ արժանահավատ չէր կարող համարվել նախապես տպագրված հայտարարության ձևը, որը ստորագրելով՝ գանգատաբերը հաստատում էր, որ իրեն հիշեցրել են լռություն պահպանելու իրավունքի կամ փաստաբանի օգնությունը ստանալու իրավունքի մասին (պարբ. 37): Հարցաքննության ժամանակ պետք էր հաշվի առնել գանգատաբերի վիճակը, մասնավորապես 6–րդ հոդվածի համաձայն նրան իր դատավարական իրավունքների մասին տեղեկացնելիս (պարբ. 38):

Baytar–ն ընդդ. Թուրքիայի (վճիռ՝ 14 հոկտեմբեր, 2014 թ.) — Գործը վերաբերում էր առանց թարգմանչի օգնության ոստիկանությունում կալանքի ընթացքում այն անձի հարցաքննությանը, ով բավարար չափով չէր տիրապետում ազգային լեզվին: Դատարանը վճռեց, որ տեղի է ունեցել 6–րդ հոդվածի 3–րդ մասի (ե) կետի՝ 6–րդ հոդվածի 1–ին մասի հետ միասին վերցված խախտում: Մասնավորապես, Դատարանը վճռեց, որ չունենալով իրեն տրված հարցերի թարգմանության և մեղսագրվող հանցագործությունների մասին հնարավորինս ճշգրիտ գաղափար կազմելու հնարավորություն՝ գանգատաբերն ի վիճակի չի եղել լիովին հասկանալու լռությունը պահպանելու իր իրավունքից և իրավաբանի օգնությունը ստանալու իրավունքից հրաժարվելու հետևանքները:

2013/C 378/02, պարբ. 11): ՄԻԵԴ–ն այդ առնչությամբ նույնպես հայտնել է իր դիրքորոշումը[110]:

Խոցելի կասկածյալին մինչդատական կալանքի տակ պահելու տևողությունը նույնպես պետք է սահմանափակ լինի: ՄԻԵԿ–ի 5–րդ հոդվածի 3–րդ մասով նախատեսվում է. «Սույն հոդվածի 1–ին մասի «գ» կետի դրույթներին համապատասխան ձերբակալված կամ կալանավորված յուրաքանչյուր ոք անհապաղ տարվում է դատավորի կամ այլ պաշտոնատար անձի մոտ, ով օրենքով լիազորված է՝ իրականացնելու դատական իշխանություն, և ունի ողջամիտ ժամկետում դատաքննության իրավունք կամ մինչև դատաքննությունն ազատ արձակվելու իրավունք: Ազատ արձակումը կարող է պայմանավորվել դատաքննության ներկայանալու երաշխիքներով»: ՄԻԵԿ–ի 5–րդ հոդվածի 3–րդ մասի նպատակն է ապահովել 1–ին մասի «գ» կետի դրույթներին համապատասխան կիրառված ոստիկանական կամ վարչական կալանքի նկատմամբ անհապաղ և ինքնաբերական դատական հսկողությունը (*Դե Ջոնգը, Բալջեթը և Վան դեն Բրուքն ընդդ. Նիդերլանդների* (վճիռ՝ 22 մայիս, 1984 թ.), պարբ. 51): Կալանավորման նկատմամբ դատական հսկողությունը պետք է ինքնաբերական լինի և չի կարող կախվածության մեջ դրվել կալանավորված անձի կողմից նախապես դրա համար դիմելու հանգամանքից: Դա հատկապես այդպես է այն դեպքում, երբ կալանավորված անձը խոցելի է, օրինակ՝ հոգեպես անկայուն է կամ չի տիրապետում դատավարության լեզվին (*Աքուիլինան ընդդ. Մալթայի* (վճիռ՝ 29 ապրիլ, 1999 թ.) պարբ. 49, *Մակ–Քեյն ընդդ. Միացյալ Թագավորության* (վճիռ՝ 3 հոկտեմբեր, 2003 թ.), պարբ. 34):

---

[110] Timergaliyev–ն ընդդ. Ռուսաստանի (վճիռ՝ 14 հոկտեմբեր, 2008 թ.) — Գանգատաբերը 6–րդ հոդվածի ներքո բողոքում էր, որ իրեն չի տրամադրվել լսողական սարք, որ պետության նշանակած փաստաբանն անարդյունավետ էր եղել, և որ ինքն իրավաբանական օգնություն չի ունեցել վերաքննիչ դատավարության ժամանակ: ՄԻԵԴ–ը համարեց, որ «հաշվի առնելով, որ գանգատաբերի լսողության խանգարումը սահմանափակել էր վարույթին արդյունավետորեն մասնակցելու՝ նրա կարողությունը, արդարադատության շահերը պահանջում էին, որպեսզի արդար դատաքննություն ստանալու համար գանգատաբերը վերաքննիչ դատարանի վարույթում օգտված լիներ իր շահերը ներկայացնող իրավաբան ունենալու հնարավորությունից»: Ուստի տեղի է ունեցել 6–րդ հոդվածի 1–ին մասի, 6–րդ հոդվածի 3–րդ մասի (գ) կետի հետ միասին վերցված խախտում (պարբ. 59–60):

ԱՆՉԱՓԱՀԱՍ ԿԱՍԿԱԾՅԱԼՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԸ

ՕՐԻՆԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉԻՆ ԵՎ ԾՆՈՂՆԵՐԻՆ ԵՎ ԽՆԱՄԱԿԱԼՆԵՐԻՆ ՏԵՂԵԿԱՑՆԵԼԸ, ՕՐԻՆԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ ՈՒՆԵՆԱԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔԸ

Քրեական վարույթի ընթացքում անչափահաս կասկածյալի ձերբակալելու դեպքում քննիչները պետք է ապահովեն, որպեսզի նրա ծնողները կամ խնամակալները ծանուցվեն անհապաղ կամ ծանուցվեն հնարավորինս կարճ ժամկետում (Պեկինյան կանոններ, պարբ. 10.1): ԽԿՀ–ն (CPT) կարևորում է, որ անչափահասներից երբևէ չպահանջվի ստորագրել որևէ փաստաթուղթ առանց օրինական ներկայացուցչի կամ անչափահասի վստահությունը վայելող չափահաս անձի ներկայության (CPT/Inf (2004) 16 (Turkey), պարբ. 27):

Հաշվի առնելով երեխաների առանձնահատուկ խոցելիությունը և նրանց հասունության աստիճանը և մտավոր ու հուզական կարողությունները՝ ՄԻԵԴ–ն ընդգծում է, մասնավորապես, կալանավորված անձի անչափահաս լինելու դեպքում փաստաբանի հետ տեսակցելու հնարավորություն ընձեռելու կարևորությունը (*Սալդուզն ընդդ. Թուրքիայի* (վճիռ՝ 27 նոյեմբեր, 2008 թ.), պարբ. 60, *Բլոխինն ընդդ. Ռուսաստանի* (վճիռ՝ 23 մարտ, 2013 թ.) պարբ. 199)[111]:

---

[111] Salduz–ն ընդդ. Թուրքիայի (վճիռ՝ 27 նոյեմբեր, 2008 թ.) — Գանգատաբերը մեղադրվել և մեղավոր էր ճանաչվել ՔԲԿ–ին (Քուրդիստանի բանվորական կուսակցություն՝ անօրինական կազմակերպություն) օժանդակող չթույլատրված ցույցին մասնակցելու համար: Գանգատաբերի՝ փաստաբան ունենալու իրավունքը սահմանափակվել էր ոստիկանությունում կալանքի տակ գտնվելու ընթացքում, որի արդյունքում նա փաստաբան չէր ունեցել՝ ոստիկանությանը, դատախազությանը և քննության դատավորին իր ցուցմունքները տալու ընթացքում (պարբ. 56): Դատարանը շեշտեց փաստաբանի հետ տեսակցելու հնարավորություն ընձեռելու կարևորությունն այն դեպքում, երբ կալանքի տակ գտնվող անձն անչափահաս է, և վճռեց, որ թեպետ գանգատաբերը հնարավորություն ունեցել էր դատաքննության ժամանակ, հետո նաև վերաքննիչ դատարանում վիճարկելու իր դեմ ներկայացված ապացույցները, ոստիկանությունում կալանքի տակ գտնվելու ընթացքում փաստաբանի բացակայությունն անշրջելի ազդեցություն էր ունեցել նրա պաշտպանական իրավունքների վրա: Ուստի տեղի էր ունեցել 6–րդ հոդվածի 3–րդ մասի (գ) կետի խախտում (պարբ. 60–62):

Անչափահասների գործերով ՀՀ քր. դատ. օր. 440–րդ հոդվածի համաձայն՝ բոլոր գործերով հաստատման ենթակա հանգամանքներից բացի՝ անչափահասների գործերով անհրաժեշտ է պարզել նաև անչափահասի՝

1) տարիքը (ծննդյան օրը, ամիսը, տարեթիվը).

2) կյանքի և դաստիարակության պայմանները.

3) առողջության և ընդհանուր զարգացման վիճակը:

Այս երեք գործոնների ազդեցությունն անչափահասի նկատմամբ անհամեմատ մեծ է և ուղղակիորեն ազդում է հանցագործության, դրա կատարման եղանակի կամ հանցագործության այլ հանգամանքների ընտրության և իրականացման վրա:

ՀՀ քր. դատ. օր. համաձայն՝ անչափահասների հանցագործությունների վերաբերյալ գործերի քննությանը մասնակցում է անչափահաս կասկածյալի կամ մեղադրյալի՝

– օրինական ներկայացուցիչը,

Panovits–ն ընդդ. Կիպրոսի (վճիռ՝ 11 դեկտեմբեր, 2008 թ.) — Գանգատաբերը վարույթի մինչդատական փուլում չէր ունեցել փաստաբանի հետ տեսակցելու հնարավորություն: Դատարանը նշեց, որ այդ ժամանակ գանգատաբերը եղել էր 17 տարեկան: Դատարանը եզրակացրեց, որ «հաշվի առնելով գանգատաբերի տարիքը՝ դժվար թե նա իմանար, որ ոստիկանությունում որևէ բան ասելուց առաջ ուներ օրինական ներկայացուցիչ ունենալու իրավունք: Ավելին՝ հաշվի առնելով փաստաբանի կամ իր խնամակալի օգնության բացակայությունը, անհավանական էր նաև, որ նա կարող էր ողջամտորեն գիտակցել սպանության քննությանն առնչվող քրեական վարույթի շրջանակում առանց փաստաբանի հարցաքննվելու հետևանքներն իր համար» (պարբ. 71): Այսպիսով՝ ոստիկանության կողմից հարցաքննվելուց առաջ փաստաբանի հետ խորհրդակցելու իրավունքի մասին գանգատաբերին բավարար տեղեկություններ չտրամադրելը, հատկապես հաշվի առնելով այն փաստը, որ նա այդ ժամանակ անչափահաս էր և հարցաքննության ընթացքում չէր ստանում օրինական ներկայացուցչի օգնությունը, առաջացրել էր 6–րդ հոդվածի 3–րդ մասի (գ) կետի՝ 6–րդ հոդվածի 1–ին մասի հետ միասին վերցված խախտում (պարբ. 73):

Soykan–ն ընդդ. Թուրքիայի (վճիռ՝ 21 ապրիլ, 2009 թ.) — Գանգատաբերը 16 տարեկանում ձերբակալվել և դատապարտվել էր 2 տարի և 6 ամիս ազատազրկման՝ «Ժողովրդի ազատագրման հեղափոխական կուսակցություն/ճակատ» անօրինական կազմակերպությանն օգնելու համար: Նա մասնավորապես բողոքում էր, որ իր նկատմամբ իրականացված քրեական վարույթում խախտվել են իր պաշտպանական իրավունքները: Դատարանը վճռեց, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի 6–րդ հոդվածի 3–րդ մասի (գ) կետի 6–րդ հոդվածի 1–ին մասի հետ վերցված խախտում, քանի որ գանգատաբերը ոստիկանությունում կալանքի տակ գտնվելու ընթացքում չէր ունեցել փաստաբանի հետ տեսակցելու հնարավորություն:

– պաշտպանը,

– մասնագետը:

Անչափահասներին վերաբերող այլ հարցեր ներկայացվել են նախորդ պարագրաֆներում:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐ ԵՎ ԴԱՏԱԿԱՆ ՊՐԱԿՏԻԿԱ

1. ՄԱԿ–ի Երեխայի իրավունքների մասին 1989 թ. նոյեմբերի 20–ի կոնվենցիա, այդ կոնվենցիայի՝ մանկավաճառության, երեխաների մարմնավաճառության և մանկական պոռնոգրաֆիայի մասին և զինված հակամարտություններին երեխաների մասնակցությանը վերաբերող 2000 թ. մայիսի 25–ի կամընտիր երկու արձանագրություններ

2. ԱՄԿ–ի Երեխայի աշխատանքի վատթարագույն ձևերի մասին 1999 թ. հունիսի 17–ի կոնվենցիա

3. ՄԱԿ–ի Երեխաների միջազգային առևանգման քաղաքացիական մոտեցումների մասին 1993 թ. մայիսի 29–ի կոնվենցիա

4. ՄԱԿ–ի Երեխաների պաշտպանության և օտարերկրյա որդեգրման բնագավառում համագործակցության մասին 1980 թ. հոկտեմբերի 24–ի կոնվենցիա

5. ԱՄԿ–ի Հարկադիր կամ պարտադիր աշխատանքի մասին 1930 թ. հունիսի 28–ի կոնվենցիա

6. Մարդու իրավունքների 1948 թ. դեկտեմբերի 10–ի համընդհանուր հռչակագիր

7. Մարդու իրավունքների ու հիմնարար ազատությունների պաշտպանության մասին 1950 թ. նոյեմբերի 4–ի Եվրոպական կոնվենցիա

8. ԱՄԿ–ի Նվազագույն տարիքի մասին 1973 թ. հունիսի 26–ի կոնվենցիա

9. Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների 1966 թ. դեկտեմբերի 16–ի միջազգային դաշնագիր

10. ՄԱԿ–ի Փախստականների կարգավիճակի մասին 1951 թ. հուլիսի 28–ի կոնվենցիան

11. Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին 1966 թ. դեկտեմբերի 19–ի միջազգային դաշնագիր

12. ՄԱԿ–ի Անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ 2000 թ. նոյեմբերի 15–ի ՄԱԿ–ի կոնվենցիա և այդ կոնվենցիան լրաց-

նող մարդկանց, հատկապես կանանց և երեխաների առևտրի կանխարգելման, արգելման և պատժի մասին 2000 թ. նոյեմբերի 15–ի արձանագրություն

13. Ազատությունից զրկված անչափահասների պաշտպանության վերաբերյալ 1990 թ. դեկտեմբերի 14–ի ՄԱԿ–ի կանոններ (Հավանայի կանոններ)

14. Անչափահասների հանցավորությունը կանխելու վերաբերյալ 1990 թ. դեկտեմբերի 14–ի ՄԱԿ–ի ուղենիշներ (Ռիադի ուղենիշներ)

15. Անչափահասների գործերով արդարադատության իրականացման 1985 թ. նոյեմբերի 29–ի ՄԱԿ–ի նվազագույն ստանդարտ կանոններ (Պեկինի կանոններ)

16. Հանցագործությունից տուժած և հանցագործության վկա երեխաների գործերով 2005 թ. հուլիսի 22–ի արդարադատության ուղենիշներ

17. ՄԱԿ–ի Միգրանտ աշխատողների և նրանց ընտանիքների պաշտպանության մասին 1990 թ. դեկտեմերի 18–ի կոնվենցիա

18. Մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի միջոցների մասին 2005 թ. մայիսի 16–ի ԵԽ կոնվենցիա

19. Սեռական շահագործումից և սեռական բնույթի բռնություններից երեխաների պաշտպանության մասին 2008 թ. հոկտեմբերի 25–ի ԵԽ կոնվենցիա

20. «Հանցագործության զոհերի պաշտպանության, աջակցության և իրավունքների նվազագույն չափանիշների հաստատման մասին և ԵՄ թիվ 2001/220/JHA շրջանակային որոշման փոխարինման մասին» Եվրախորհրդարանի և Եվրոպական միության խորհրդի թիվ 2012/29/EU հրահանգ (ընդունվել է 2012 թ. հոկտեմբերի 25–ին)

21. ՀՀ Սահմանադրությունը, ընդունված՝ 06.12.2015 թ.

22. ՀՀ ընտանեկան օրենսգիրքը, ընդունված՝ 09.11.2004 թ.

23. ՀՀ քրեական օրենսգիրքը, ընդունված՝ 18.04.2003 թ.

24. ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը, ընդունված՝ 05.05.1998 թ.

25. ՀՀ քրեակատարողական օրենսգիրքը, ընդունված՝ 24.12.2004 թ.

26. «Երեխայի իրավունքների մասին» ՀՀ օրենքը, ընդունված՝ 29.05.1996 թ.

27. «Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքը, ընդունված՝ 24.09.2002 թ.

28. «Սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենքը, ընդունված՝ 17.12.2014 թ.

29. «Մարդկանց թրաֆիքինգի և շահագործման ենթարկված անձանց նույնացման և աջակցության մասին» ՀՀ օրենքը, ընդունված՝ 17.12.2014 թ.

30. «Քաղաքացիական կացության ակտերի գրանցման մասին» ՀՀ օրենքը, ընդունված՝ 08.12.2004 թ.

31. «Փախստականների և ապաստանի մասին» ՀՀ օրենքը, ընդունված՝ 27.11.2008 թ.

32. «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» ՀՀ օրենքը, ընդունված՝ 04.03.1996 թ.

ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

33. Արդարադատության մատչելիության հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում (գիտագործնական վերլուծություն), Խմբագիր՝ Դ. Ավետիսյան, Վ. Ենգիբարյան, Երևան, 2013:

34. Երեմյան Ա., Ղամբարյան Ա., Հայաստանի Հանրապետության քրեական դատավարությանը մասնակցող անձանց պետական պաշտպանությունը, Երևան, 2006:

35. Ղամբարյան Ա., Թումասյան Դ., Երեխաների սեռական անձեռնմխելիության և սեռական ազատության դեմ ուղղված հանցագործություններն ու դրանց վարույթի առանձնահատկությունները (ձեռնարկ քննիչների համար), Երևան, 2015:

36. ՀՀ քրեական դատավարություն, Մաս 1, Գիտական խմբագիր՝ Ա. Ղամբարյան, Երևան, 2016:

37. Սարգսյան Գ., Թումանյան Ք., Թումասյան Դ., Գասպարյան Ա. և այլք, Ճանաչողական (կոգնիտիվ) հարցաքննության սցենար: ՀՀ դատախազության դպրոցի ուսումնական ֆիլմի համար, Երևան, 2013:

38. Մելքոնյան Դ., Հարությունյան Ս., ՄԻԵԴ նախադեպային իրավունքի հիմնահարցերը քրեական գործերով, Երևան, 2015:

39. Օ'Բրայեն Մ., Թ. Հոերթեն, Ա. Վան դեն Բորն, Ինչպես հարցաքննել թրաֆիքինգի/շահագործման ենթարկված անչափահասներին (մեթոդական ձեռնարկ իրավապահ մարմինների աշխատակիցների համար), Երևան, 2012:

40. Бессарабов В. Г., Быуова Е. В., Курочкина Л. А., Европейские стандарты обеспечения прав и свобод человека и гражданина в российском уголовном процессе, М., 2005.

41. Брусницын Л. В., Правовое обеспечение безопасности лиц, содействующих уголовному правосудию. М., 1999.

42. Брусницын Л. В., Обеспечение безопасности лиц, содействующих уголовному правосудию: мировой опыт и развитие российского законодательства (процессуальное исследование). Монография. М., Юрлитинформ, 2010.

43. Гончаров В. Б., Кожевников В. В. Проблемы безопасности участников уголовного процесса, Государство и право, 2000, №2.

44. Методические рекомендации по организации и ведению допроса несовершеннолетних в специализированном помещении на этапе следствия, СПб: Санкт–Петербургская общественная организация. «Врачи Детям», 2014.

45. Стандарты Европейского суда по правам человека и российская правоприменительная практика. Сб. аналитических статей, Под ред. М. Р. Воскобитовой, М., 2005.

46. Akandji–Kombe J., Positive Obligations under the European Convention on Human Rights: A Guide to the Implementation of the European Convention on Human Rights, Human Rights Handbooks, No. 7, (2007 Council of Europe).

47. Brown H. Safeguarding adults and children with disabilities against abuse, (2003, Council of Europe Publishing), էջ 21: http://www.coe.int/t/e/social_cohesion/soc–sp/Abuse%20_E%20in%20color.pdf

48. CPT, The CPT Standards: 'Substantive' Section of the CPT's General Reports, CPT/Inf/E (2002) 1– Rev. 2006 – report

49. Murdoch J. & Roche R. The European Convention on Human Rights

and Policing: A Handbook for police and other Law Enforcement Officers, (2013) – Handbook

50. N. Muizniek, Commissioner for Human Rights of the Council of Europe following his visit to Armenia from 5 to 9 *հոկտեմբեր* 2014, (2015) Council of Europe, CommDH(2015)2 – report

51. Norwegian Helsinki Committee, FIDH and CSI, Administration of Justice in the Republic of Armenia, (2012) – report

52. Procedural protective measures for witnesses: Training manual for law–enforcement agencies and the judiciary, (2006 Council of Europe)

53. Redress, Torture in Europe: The Law and Practice, Regional Conference Report (2012 Redress Trust), http://www.redress.org/downloads/publications/121012%20Europe%20Report%20FINAL.pdf

54. Reidy A. The Prohibition of Torture: A Guide to the Implementation of Article 3 of the European Convention on Human Rights, Human Rights Handbook, No.6, (2003 Council of Europe)

55. The UN Economic and Social Council Guidelines on Justice in Matters involving Child Victims and Witnesses of Crime

56. The United Kingdom Ministry of Justice, Achieving Best Evidence in Criminal Proceedings: Guidance on interviewing victims and witnesses, and guidance on using special measures, (2011) Crown Prosecution Service – report

57. UNDOC & UNICEF, Handbook for Professionals and Policymakers on Justice Matters involving Child Victims and Witnesses of Crime, Criminal Justice Handbook Series (2009, United Nations: Vienna)

58. UNDOC, Victim Assistance and Witness Protection (2016). Available at: https://www.unodc.org/unodc/en/organized–crime/witness–protection.html

59. UNDOC, Handbook on Effective police responses to violence against women, Criminal justice Handbook Series (2010, United Nations: New York)

60. United Nations, Office for Drug Control and Crime Prevention, Handbook on Justice for Victims: on the Use and Application of the Declaration of Basic Principles of Justice for Victims of Crime and Abuse of Power (New York, 1999)

3. ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԿԱՅՔԷՋԵՐ

61. www.echr.coe.int
62. www.coe.am
63. http://www.state.gov/documents/organization/236708.pdf
64. http://www.osce.org/yerevan/84022

ՆԱԽԱԴԵՊԱՅԻՆ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

Ա–ն (A–***ն***) ***ընդդ. Խորվաթիայի*** (վճիռ՝ 14 հոկտեմբեր, 2010 թ.). պետական իշխանության մարմինները պարտավոր են ի կատար ածել դատական այն կարգադրությունները, որոնց նպատակը կանանց իրենց բռնարար ամուսիններից պաշտպանելն է: Կնոջը ստիպել էին երեխայի հետ միասին ապրել՝ թաքնվելով, և ՄԻԵԴ–ը դա համարեց կնոջ անձնական կյանքի՝ ՄԻԵԿ–ի 8–րդ հոդվածից բխող պոզիտիվ պարտավորության խախտում:

Աերտսն (Aerts–***ն***) ***ընդդ. Բելգիայի*** (վճիռ՝ 30 հուլիս, 1998 թ.). պետք է հատուկ ուշադրություն ցուցաբերել ազատազրկված հոգեկան խանգարում ունեցող անձանց նկատմամբ: Այս դեպքում, սակայն, միանշանակորեն հաստատված չէր, որ գանգատաբերը կրել էր ՄԻԵԿ–ի 3–րդ հոդվածի ներքո անմարդկային կամ նվաստացուցիչ դասակարգվող վերաբերմունք:

Աքքոսն (Akkoç–***ն***) ***ընդդ. Թուրքիայի*** (վճիռ՝ 10 հոկտեմբեր, 2000 թ.). դաժան վերաբերմունքի կոնկրետ ձև՝ խոշտանգում, համարվելու փաստը որոշելիս պետք է հաշվի առնել ՄԻԵԿ–ի 3–րդ հոդվածում ներառված՝ խոշտանգման և անմարդկային կամ նվաստացուցիչ վերաբերմունքի միջև տարբերակումը: Խոշտանգումը ներառում է ծանր ցավ կամ տառապանք, նպատակի տարր և ցավը կամ տառապանքը դիտավորությամբ պատճառելը:

Աքուիլինան (Aquilina–***ն***) ***ընդդ. Մալթայի*** (վճիռ՝ 29 ապրիլ, 1999 թ.). անհապաղ լինելուց բացի՝ կալանքի դատական հսկողությունը պետք է լինի ինքնաբերական և չի կարող կախվածության մեջ դրվել կալանավորված անձի կողմից դրա վերաբերյալ միջնորդություն ներկայացնելու հանգամանքից: Դա հատկապես վերաբերում է կալանավորված անձի խոցելի լինելու դեպքին, օրինակ, եթե նա ունի մտավոր խանգարում կամ չի տիրապետում դատավարության պաշտոնական լեզվին: ՄԻԵԿ–ի 5–րդ հոդվածի 3–րդ մասի համաձայն՝ դատական պաշտոնյան պետք է անձամբ լսի

կալանավորված անձին նախքան համապատասխան որոշում կայացնելը:

Ասսենովն (Assenov–***ն***) ***ընդդ***. ***Բուլղարիայի*** (վճիռ՝ 28 հոկտեմբեր, 1998 թ.). անգամ այն դեպքում, երբ ազգային իշխանությունները չեն սխալվել՝ ազատ արձակվելու դեպքում նոր հանցանք կատարելու ռիսկի առկայությունը գնահատելիս, գանգատաբերի անչափահաս լինելու պայմանը պարտավորեցնում է պետական իշխանություններին հատուկ ջանասիրություն դրսևորել՝ ապահովելով նրա դատական քննությունը ողջամիտ ժամկետում, որպեսզի չխախտեն ՄԻԵԿ–ի 5–րդ հոդվածի 3–րդ մասը:

Այդինն (Aydin–***ն***) ***ընդդ***. ***Թուրքիայի*** (վճիռ՝ 25 սեպտեմբեր, 1997 թ.). պետության պաշտոնյայի կողմից կալանավորվածի բռնաբարությունը պետք է համարել դաժան վերաբերմունքի հատկապես ծանր և նողկալի դրսևորում՝ հաշվի առնելով, որ այդ պարագայում շահագործվել են անձի խոցելիությունը և դիմադրություն ցույց տալու անհնարինությունը: Ավելին՝ տուժողի տարիքը կարող է հաշվի առնվել դաժան վերաբերմունքի՝ ՄԻԵԿ–ի 3–րդ հոդվածի ներքո խոշտանգման աստիճանի հասնելու փաստը որոշելիս:

Բավթարն (Baytar–***ն***) ***ընդդ***. ***Թուրքիայի*** (վճիռ՝ 14 հոկտեմբեր, 2014 թ.). չունենալով իրեն տրված հարցերի թարգմանության և մեղսագրվող հանցագործությունների մասին հնարավորինս ճշգրիտ գաղափար կազմելու հնարավորություն՝ գանգատաբերն ի վիճակի չի եղել լիովին հասկանալու իր՝ լռելու իրավունքից և իրավաբանական օգնություն ստանալու իրավունքից հրաժարվելու հետևանքները, ուստի տեղի է ունեցել ՄԻԵԿ–ի 6–րդ հոդվածի 3–րդ մասի (ե) կետի՝ 6–րդ հոդվածի 1–ին մասի հետ համատեղ խախտում:

Բեկիրսկին (Bekirski–***ն***) ***ընդդ***. ***Բուլղարիայի*** (վճիռ՝ 2 սեպտեմբեր, 2010 թ.). պետական իշխանության մարմինների կողմից կալանավորված, ուստի նրանց հսկողության և իշխանության ներքո գտնվող անձինք հատկապես խոցելի վիճակում են թե՛ իրենց ազատության սահմանափակման, թե՛ առողջական վիճակի բերումով: Նման դեպքերում պետական իշխանության մարմինները պարտավոր են ոչ միայն երաշխավորել անձանց կյանքի իրավունքը, այլև ձեռնարկել անհրաժեշտ բոլոր կանխարգելիչ

գործողությունները տվյալ անձի նկատմամբ դաժան վերաբերմունքից կամ պատժից (ՄԻԵԿ–ի 3–րդ հոդված) խուսափելու համար:

Բերքթայն (Berktay–***ն***) ***ընդդ***. ***Թուրքիայի*** (վճիռ՝ 1 մարտ, 2001 թ.). արգելանքի տակ գտնվող անձինք խոցելի վիճակում են, և իշխանությունները պարտավոր են նրանց պաշտպանել խոշտանգումից կամ անմարդկային կամ նվաստացուցիչ վերաբերմունքից (ՄԻԵԿ–ի 3–րդ հոդված): Եթե գոյություն ունի դաժան վերաբերմունքի կասկած, և խնդրո առարկա իրադարձություններն ամբողջովին կամ մեծ մասամբ ընկնում են իշխանությունների բացառիկ իմացության տիրույթում, պետությունը պարտավոր է ներկայացնել այդ փաստերը հաստատող ապացույցներ, որոնք կասկած են առաջացնում տուժողի նկատմամբ նման վերաբերմունքի կիրառման մասին:

Բլոխինն (Blokhin–***ն***) ***ընդդ***. ***Ռուսաստանի*** (վճիռ՝ 14 նոյեմբեր, 2013 թ.). հաշվի առնելով երեխաների առանձնահատուկ խոցելիությունը, նրանց հասունության մակարդակը և մտավոր ու հուզական կարողությունները՝ ՄԻԵԴ–ը հատկապես ընդգծել է փաստաբանի հետ հանդիպելու հնարավորությունն ապահովելու հիմնարար կարևորությունն այն դեպքում, երբ արգելանքի տակ պահվող անձն անչափահաս է (ՄԻԵԿ–ի 6–րդ հոդվածի 3–րդ մասի (գ) կետ):

Գլդանի Եհովայի վկաների միավորման 97 ***անդամները և*** 4 ***այլ անձինք*** (Case of 97 members of the Gldani Congregation of Jehovah's Witnesses and 4 others–***ն***) ***ընդդ***. ***Վրաստանի*** (վճիռ՝ 3 մայիս, 2007 թ.). պետությունները, ՄԻԵԿ–ի 3–րդ հոդվածի համաձայն, պոզիտիվ պարտավորություն ունեն անձանց պաշտպանելու դաժան վերաբերմունքից և արդյունավետորեն քննելու ենթադրյալ դաժան վերաբերմունքը: Այս պարագայում ոստիկանությունը, որին դիմել էր տուժողներից մի մասը, դաժան վերաբերմունքից նրանց պաշտպանելու նպատակով չէր ցուցաբերել որևէ աջակցություն, ինչպես նաև չէր ապահովվել արդյունավետ քննությունը:

Դե Դոնդերն ու Դե Չիփփելն (De Donder–***ը և*** De Chippel–***ն***) ***ընդդ***. ***Բելգիայի*** (վճիռ՝ 6 դեկտեմբեր, 2011 թ.). պետական իշխանությունները պետք է տեղյակ լինեն, որ գոյություն ունի ռիսկ, որ հոգեկան խանգա-

ռում ունեցող անձինք կարող են ինքնասպանության փորձ կատարել սովորական բանտային միջավայրում գտնվելու ժամանակ, և այդ իրավիճակում նրանք պարտավոր են անձին պաշտպանել ինքնասպանությունից, անգամ եթե 2–րդ և 3–րդ հոդվածի համաձայն՝ գոյություն չեն ունեցել նախազգուշական նշաններ:

Դե Ջոնգը, ***Բալջեթը և Վան դեն Բրուքն*** (De Jong–***ը***, Baljet–***ը և*** Van den Brink–***ն***) ***ընդդ***. ***Նիդերլանդների*** (վճիռ՝ 22 մայիս, 1984 թ.). ՄԻԵԿ–ի 5–րդ հոդվածի 3–րդ մասի սկզբնական մասի նպատակն է ապահովել 1–ին մասի (գ) կետի համաձայն կայացված որոշման հիման վրա ոստիկանությունում կալանքի կամ վարչական կալանքի նկատմամբ անհապաղ և ինքնաբերական դատական հսկողություն: ՄԻԵԿ–ի 5–րդ հոդվածի 3–րդ մասի ձևակերպումը («անհապաղ տարվում է դատավորի մոտ») դրա նպատակի և առարկայի լույսի ներքո մեկնաբանելու դեպքում ակնհայտ է դառնում, որ դա ի վերուստ «դատավարական» պահանջ է. «դատավորը» կամ «դատական պաշտոնյան» պետք է փաստացի լսի կալանավորված անձին և կայացնի համապատասխան որոշում: Անհապաղության խնդիրը պետք է յուրաքանչյուր գործի համար գնահատել առանձին՝ ելնելով դրա առանձնահատկություններից:

Դուրսոնն (Doorson–***ն***) ***ընդդ***. ***Նիդերլանդների*** (վճիռ՝ 25 մարտ, 1996 թ.). ՄԻԵԿ–ի 6–րդ հոդվածի համաձայն՝ չի բացառվում քննության փուլում այնպիսի աղբյուրների վրա հիմնվելը, ինչպիսիք անանուն վկաներն են: Այնուհանդերձ, գործը քննող դատարանի կողմից նրանց տված ցուցմունքների հետագա օգտագործումը մեղադրական դատավճիռը հիմնավորելու նպատակով կարող է խնդիրներ առաջացնել ՄԻԵԿ–ի ներքո: Հետևապես, արդար դատաքննության սկզբունքը պահանջում է, որ համապատասխան դեպքերում պաշտպանության շահերը հավասարակշռվեն ցուցմունք տալու հրավիրված վկաների կամ տուժողների շահերին:

Դուշկան (Dushka–***ն***) ***ընդդ***. ***Ուկրաինայի*** (վճիռ՝ 3 փետրվար, 2011 թ.). այս գործը վերաբերում էր 17–ամյա անձին ապօրինի կալանավորելուն և առանց փաստաբանի հարցաքննելուն: Գանգատաբերը պնդում էր, որ ոստիկանությունը կալանավորման ընթացքում իրեն

խոշտանգել է ավազակային հարձակման կատարումը խոստովանելու նպատակով: Դատարանը վճռեց, որ նման գործելակերպը, հատկապես հաշվի առնելով գանգատաբերի խոցելի տարիքը, անմարդկային և նվաստացուցիչ վերաբերմունք է, որն առաջացնում է ՄԻԵԿ–ի 3–րդ հոդվածի խախտում:

Դյուբեքուն (Dybeku–***ն***) ***ընդդ***. ***Ալբանիայի*** (վճիռ՝ 18 դեկտեմբեր, 2007 թ.). թեպետ ՄԻԵԿ–ի 3–րդ հոդվածը չի կարող մեկնաբանվել որպես կալանավորվածներին առողջական հիմքերով ազատ արձակելու ընդհանուր պարտավորություն սահմանող դրույթ, այնուհանդերձ, այն պետության համար սահմանում է պարտավորություն՝ պաշտպանելու ազատությունից զրկված անձանց ֆիզիկական բարօրությունը, օրինակ՝ նրանց տրամադրելով անհրաժեշտ բուժօգնություն: Պատշաճ բուժօգնության բացակայությունը կարող է առաջացնել ՄԻԵԿ–ի 3–րդ հոդվածին հակասող վերաբերմունք: Մասնավորապես, հոգեկան հիվանդություն ունեցող անձանց պարագայում կալանքի կոնկրետ պայմանների՝ ՄԻԵԿ–ի 3–րդ հոդվածի չափանիշներին անհամապատասխանությունը գնահատելիս պետք է հաշվի առնել նրանց խոցելիությունը, իսկ շատ դեպքերում նաև՝ իրենց վրա որոշակի վերաբերմունքի ազդեցության մասին հասկանալի բողոք կամ ընդհանրապես բողոք ներկայացնելու նրանց անկարողությունը:

Ե. ***Ա***.–***ն*** (E.A.–***ն***) ***ընդդ***. ***Ռուսաստանի*** (վճիռ՝ 23 մայիս, 2013 թ.). պետությունները պարտավոր են ապահովել համարժեք բուժօգնության ցուցաբերումն առողջական խնդիրներ ունեցող կալանավորվածին: Պետության կողմից դա չապահովելու հետևանքով ծագող իրավիճակը, որում կարող է համարվել, որ գանգատաբերը կրել է կալանքին բնորոշ տառապանքի անխուսափելի մակարդակից ավելի մեծ տառապանք կամ դժվարություն, կհամարվի ՄԻԵԿ–ի 3–րդ հոդվածի խախտում:

Ենգելն (Engel–***ն***) ***ընդդ***. ***Հունգարիայի*** (վճիռ՝ 20 մայիս, 2010 թ.). ՄԻԵԿ–ի 3–րդ հոդվածի իմաստով վերաբերմունքի «նվաստացուցիչ» լինելը քննարկելիս Դատարանի կողմից հաշվի առնվող գործոններից է այն, թե արդյոք դրա նպատակն է եղել տվյալ անձին նվաստացնելը և ստորացնելը: Մասնավորապես գանգատաբերը, ով ուներ պարապլե-

գիա, բնական կարիքները հոգալու, լողանալու և հագնվելու կամ հանվելու հարցում, թողնվել էր խցակիցների քմահաճույքին:

Ֆարբիթուսն (Farbtuhs–***ն***) ***ընդդ***. ***Լատվիայի*** (վճիռ՝ 2 դեկտեմբեր, 2004 թ.). եթե իշխանությունները որոշում են հաշմանդամություն ունեցող անձին կալանավորել և պահել կալանքի տակ, նրանք պետք է հատուկ խնամք ցուցաբերեն՝ երաշխավորելու համար հաշմանդամությամբ պայմանավորված հատուկ կարիքներին համապատասխանող պայմաններ:

Գյուվեցն (Güvec–***ն***) ***ընդդ***. ***Թուրքիայի*** (վճիռ՝ 20 հունվար, 2009 թ.). անչափահասի կալանավորման դեպքում պետությունը չէր դիտարկել կալանքի այլընտրանքների հնարավորությունը կամ կալանքի՝ հնարավոր միջոցներից վերջինը լինելու հանգամանքը: Պետությունը նաև հաշվի չէր առել կալանավորման տևողությունը: ՄԻԵԴ–ը կալանքի տևողությունը որպես այդպիսին համարեց չափազանց երկար և ՄԻԵԿ–ի 5–րդ հոդվածի 3–րդ մասը խախտող:

Իռլանդիան (Ireland–***ն***) ***ընդդ***. ***Միացյալ Թագավորության*** (վճիռ՝ 18 հունվար, 1998 թ.). անմարդկային և նվաստացուցիչ վերաբերմունքի արգելքը գոյություն ունի՝ անկախ տուժողի վարքից: Նվաստացուցիչ վերաբերմունքն այն վերաբերմունքն է, որը կարող է ընկճել (կոտրել) տուժողի ֆիզիկական կամ բարոյական դիմադրությունը: Հարցաքննության հնարքները կիրառվել էին համակցությամբ, դիտավորությամբ և անընդմեջ մի քանի ժամ տևողությամբ՝ պատճառելով առնվազն ծանր ֆիզիկական և հոգեկան տառապանք և սուր հոգեկան խաթարում, ուստի առաջացրել էին ՄԻԵԿ–ի 3–րդ հոդվածի խախտում:

Քեենանն (Keenan–***ն***) ***ընդդ***. ***Միացյալ Թագավորության*** (վճիռ՝ 3 ապրիլ, 2001 թ.). անձանց կյանքը պաշտպանելու՝ պետության պոզիտիվ պարտավորությունը մեծանում է, երբ անձը հատկապես խոցելի է: ՄԻԵԴ–ն ընդգծել է, որ կալանավորված անձինք խոցելի վիճակում են, և որ իշխանությունները պարտավոր են պաշտպանել նրանց: Ինչ վերաբերում է ՄԻԵԿ–ի 3–րդ հոդվածին, ապա այդ հոդվածի կապակցությամբ ծանրության գնահատականը կախված է գործի բոլոր հանգամանքներից՝ ներառյալ վերաբերմունքի տևողությունից, դրա ֆիզի-

կական և/կամ հոգեբանական ազդեցությունից, իսկ որոշ դեպքերում էլ՝ տուժողի սեռից, տարիքից և առողջական վիճակից: Այսպես՝ հոգեկան խանգարում ունեցող անձանց դեպքում գնահատման մեջ պետք է հաշվի առնել նրանց խոցելիությունը, իսկ որոշ դեպքերում նաև՝ իրենց վրա որոշակի վերաբերմունքի ազդեցության մասին հասկանալի բողոք կամ ընդհանրապես բողոք ներկայացնելու նրանց անկարողությունը:

Կյուտինն (Kiyutin–***ն***) ***ընդդ***. ***Ռուսաստանի*** (վճիռ՝ 10 մարտ, 2011 թ.). եթե հիմնարար իրավունքների սահմանափակումը հասարակությունում կիրառվում է հատկապես խոցելի այնպիսի խմբի նկատմամբ, որն անցյալում զգալի խտրականության է ենթարկվել, ապա պետության հայեցողության միջակայքն էականորեն ավելի նեղ է, և այն պետք է շատ ծանրակշիռ պատճառներ ունենա տվյալ սահմանափակումները կիրառելու համար: ՄԻԵԴ–ը համարեց, որ ՄԻԱՎ վարակակիր մարդիկ խոցելի խումբ են, ում նկատմամբ անցյալում եղել է կանխակալ վերաբերմունք և խարանում, և որ ՄԻԱՎ ունենալու կարգավիճակի հիմքով այս խմբի նկատմամբ տարբերակված վերաբերմունք կիրառող միջոցառումներ ընտրելու հարցում պետությանը վերապահվող հայեցողության միջակայքն ավելի նեղ պետք է լինի:

Կոստովսկին (Kostovski–***ն***) ***ընդդ***. ***Նիդերլանդների*** (վճիռ՝ 20 նոյեմբեր, 1989 թ.). ՄԻԵԿ–ը չի բացառում քրեական վարույթի ընթացքում այնպիսի աղբյուրների վրա հիմնվելը, ինչպիսիք անանուն վկաներն են: Այնուհանդերձ, գործը քննող դատարանի կողմից նրանց տված ցուցմունքների հետագա օգտագործումը՝ որպես բավարար հիմնավորում մեղադրական դատավճիռ կայացնելու համար, այլ խնդիր է: Այն առաջացրել էր պաշտպանության իրավունքի սահմանափակումներ, որոնք անհամադրելի էին ՄԻԵԿ–ի 6–րդ հոդվածում զետեղված երաշխիքներին:

Կուդլան (Kudla–***ն***) ***ընդդ***. ***Լեհաստանի*** (վճիռ՝ 29 հոկտեմբեր, 2000 թ.). ՄԻԵԴ–ն ի գիտություն ընդունեց, որ գանգատաբերի հոգեբանական վիճակն արդեն իսկ նրան ավելի խոցելի էր դարձնում միջին կալանավորվածի համեմատ, և որ նրա կալանավորումը կարող էր որոշ չափով խորացրած լինել նրա տառապանքի, վախի և լարվածության զգացողությունները: Այնուամենայնիվ, իրեն ներկայացված ապա-

ցույցների հիման վրա, ամբողջության մեջ գնահատելով վերաբերելի փաստերը, Դատարանը հաստատված չի համարել, որ գանգատաբերի նկատմամբ տեղի է ունեցել այնպիսի դաժան վերաբերմունք, որը հասել է ՄԻԵԿ–ի 3–րդ հոդվածի տիրույթում հայտնվելու համար պահանջվող ծանրության աստիճանին (մասնավորապես, նա կանոնավոր կերպով ենթարկվել էր բժշկական զննության, ինքնասպանության փորձից հետո ենթարկվել էր լրացուցիչ զննությունների, և չի կարելի ասել, թե իշխանությունները պատասխանատու էին ինքնասպանության երկրորդ փորձի համար):

Լ. Կ. Բ.–ն (L. C. B–***ն***) ***ընդդ. Միացյալ Թագավորության*** (վճիռ՝ 9 հունիս, 1998 թ.). ՄԻԵԿ–ի 2–րդ հոդվածը պետության համար ոչ միայն պարտավորություն է սահմանում՝ ձեռնպահ մնալու կյանքից դիտավորյալ և անօրինական կերպով զրկելուց, այլև պոզիտիվ պարտավորություն է սահմանում՝ համապատասխան քայլեր ձեռնարկելով երաշխավորելու իր իրավազորության ներքո գտնվող անձանց կյանքը, ուստի այդ կապակցությամբ անելու այն ամենը, ինչն իրենից կարող է պահանջվել անձանց կյանքին սպառնացող ռիսկի առաջացումը կանխելու համար:

Մ. Կ.–ն (M.C.–***ն***) ***ընդդ. Բուլղարիայի*** (վճիռ՝ 4 դեկտեմբեր, 2003 թ.). դաժան վերաբերմունքը կանխելու կամ դրա նկատմամբ երաշխիքներ ընձեռելու պարտավորությունից բխում է քննելու պոզիտիվ պարտավորությունը, որը չի կարող սահմանափակվել բացառապես պետության ներկայացուցիչների գործողությունները քննելով (ՄԻԵԿ–ի 3–րդ հոդված):

Մ. Ս.–ն (M. S.–***ն***) ***ընդդ. Միացյալ Թագավորության*** (վճիռ՝ 3 մայիս, 2012 թ.). անգամ այն դեպքում, երբ հոգեկան հիվանդություն ունեցող անձը կալանավորվել է իրավաչափ պատճառով, և իշխանությունները մտադիր չեն դաժան վերաբերմունքի ենթարկել նրան, նրանց գործողությունները կարող են խախտել ՄԻԵԿ–ի 3–րդ հոդվածը, քանի որ հոգեկան խանգարում ունեցող կալանավորը հատկապես խոցելի է, և անհրաժեշտ է նրա նկատմամբ ապահովել համարժեք բժշկական օգնություն՝ ներառյալ հոգեբուժական բուժում:

Մակ–Գլինչեյն (McGlinchey–***ն***) ***ընդդ. Միացյալ Թագավորության***

(վճիռ՝ 29 ապրիլ, 2003 թ.). ՄԻԵԿ–ի 3–րդ հոդվածի համաձայն՝ պետությունը պարտավոր է ապահովել, որ անձը կալանավորվի նրա մարդկային արժանապատվությանը չնվաստացնող պայմաններում, որպեսզի միջոցի կատարման ձևը և մեթոդը նրան չպատճառեն կալանքին բնորոշ տառապանքի անխուսափելի մակարդակից ավելի մեծ ծանրության տառապանք կամ դժվարություն, և որպեսզի ազատազրկման գործնական պահանջները հաշվի առնելով՝ համարժեքորեն պաշտպանվեն նրա առողջությունը և բարօրությունը՝ ներառյալ, ի թիվս այլ միջոցների, նրան համապատասխան բուժօգնության ցուցաբերմամբ, այդ թվում՝ հերոինային կախվածությունը հաղթահարելու համար:

Մակ–Քեյն (McKay–***ն***) ***ընդդ***. ***Միացյալ Թագավորության*** (վճիռ՝ 3 հոկտեմբեր, 2003 թ.). ձերբակալված անձի առաջին անգամ ներկայանալու նկատմամբ դատական հսկողությունն առաջին հերթին պետք է լինի անհապաղ, վերանայումը՝ ինքնաբերական, ընդ որում՝ չի կարող պայմանավորված լինել ազատազրկված անձի դիմումի առկայությամբ, և պետք է ապահովի իրավակիրառողից և կողմերից անկախության պահանջվող երաշխիքները, ընդ որում՝ նա պետք է ունենա անձին լսելուց հետո նրան ազատ արձակելու մասին որոշում կայացնելու իրավունք և ձերբակալման և կալանավորման օրինականությունը և հիմնավորվածությունը վերանայելու իրավասություն:

Մենեշևան (Menesheva–***ն***) ***ընդդ***. ***Ռուսաստանի*** (վճիռ՝ 9 մարտ, 2006 թ.). գանգատաբերին պատճառված «ցավի կամ տառապանքի» ծանրությունը գնահատվում է՝ հաշվի առնելով գործի բոլոր հանգամանքները, ինչպիսիք են, մասնավորապես, վերաբերմունքի տևողությունը, դրա ֆիզիկական կամ հոգեկան հետևանքները, իսկ որոշ դեպքերում՝ տուժողի սեռը, տարիքը և առողջական վիճակը: Դեպքերի ժամանակ գանգատաբերն ընդամենը 19 տարեկան էր, և որպես իգական սեռի ներկայացուցիչ՝ առճակատվելով արական սեռի մի քանի ոստիկանների հետ, հատկապես խոցելի էր: Ավելին՝ դաժան վերաբերմունքը տևել էր մի քանի ժամ, որի ընթացքում նրան երկու անգամ ծեծի ու ֆիզիկական և բարոյական դաժան բռնության այլ ձևերի էին ենթարկել: Ուստի վերաբերմունքը ՄԻԵԿ–ի 3–րդ հոդվածի իմաստով առաջացրել էր խոշտանգում:

Նարթն (Nart–***ն***) ***ընդդ***. ***Թուրքիայի*** (վճիռ՝ 6 մայիս, 2008 թ.). ՄԻԵԿ–ի 5–րդ հոդվածի 3–րդ մասի համաձայն՝ անչափահասների նկատմամբ մինչդատական կալանքը պետք է կիրառել միայն որպես հնարավոր միջոցներից վերջինը: Այն պետք է հնարավորինս կարճատև լինի, և եթե կալանավորումը խիստ անհրաժեշտ է, անչափահասները պետք է պահվեն մեծահասակներից անջատ:

Օքքալին (Okkali–***ն***) ***ընդդ***. ***Թուրքիայի*** (վճիռ՝ 16 հոկտեմբեր, 2006 թ.). անձանց դաժան վերաբերմունքից պաշտպանելու պարտավորությունը (ՄԻԵԿ–ի 3–րդ հոդված) կատարելու համար անհրաժեշտ են ողջամիտ և արդյունավետ միջոցներ: Մասնավորապես, իշխանությունները պետք է որոշեն անձի խոցելիությունը: Այս պարագայում իշխանությունները որևէ կերպ հաշվի չէին առել և լրացուցիչ պաշտպանություն չէին ընձեռել անչափահասին, իսկ քրեական իրավունքի համակարգի տվյալ գործով կիրառությունը բավականաչափ տարհամոզիչ չէր եղել, որպեսզի արդյունավետորեն կանխվեին անչափահասի նկատմամբ անօրինական գործողությունները: Ավելին, վիճարկվող քրեական վարույթի ելքը գանգատաբերին չէր ընձեռել ՄԻԵԿ–ի 3–րդ հոդվածի խախտման հիմքով իրավունքի պաշտպանության պատշաճ միջոց ստանալու հնարավորությունը:

Օփուզն (Opuz–***ն***) ***ընդդ***. ***Թուրքիայի*** (վճիռ՝ 9 հունիս, 2009 թ.). առանձնակի զգուշավորություն է պետք դրսևորել, որպեսզի ընտանեկան բռնությունից տուժողների մեղադրանքը պատշաճ կերպով քննության առնվի, և որպեսզի քայլեր ձեռնարկվեն նրանց հետագա սպառնալիքներից պաշտպանելու ուղղությամբ:

Պանովիցն (Panovits–***ն***) ***ընդդ***. ***Կիպրոսի*** (վճիռ՝ 11 դեկտեմբեր, 2008 թ.). ոստիկանության կողմից հարցաքննվելուց առաջ փաստաբանի հետ խորհրդակցելու իրավունքի մասին գանգատաբերին բավարար տեղեկություններ չտրամադրելը՝ հատկապես հաշվի առնելով այն փաստը, որ նա այդ ժամանակ անչափահաս էր և հարցաքննության ընթացքում չէր ստանում օրինական ներկայացուցչի օգնությունը, առաջացրել էր ՄԻԵԿ–ի 6–րդ հոդվածի 3–րդ մասի (գ) կետի՝ ՄԻԵԿ–ի 6–րդ հոդվածի 1–ին մասի հետ համատեղ խախտում:

Պլոնկան (Płonka–***ն***) ***ընդդ***. ***Լեհաստանի*** (վճիռ՝ 31 մարտ, 2009 թ.). հաշվի առնելով գանգատաբերի առանձնահատուկ խոցելիությունը՝ պայմանավորված նրա մոտ ալկոհոլամոլության առկայությամբ, արժանահավատ չէր կարող համարվել նախապես տպագրված հայտարարության ձևը, որը ստորագրելով՝ գանգատաբերը հաստատում էր, որ իրեն ծանոթացրել են լռելու իրավունքի կամ իրավաբանական օգնություն ստանալու իրավունքի մասին: Հարցաքննության ժամանակ պետք էր հաշվի առնել գանգատաբերի վիճակը, մասնավորապես ՄԻԵԿ–ի 6–րդ հոդվածի համաձայն՝ նրան իր դատավարական իրավունքների մասին տեղեկացնելիս:

Փրեթին (Pretty–***ն***) ***ընդդ***. ***Միացյալ Թագավորության*** (վճիռ՝ 29 ապրիլ, 2002 թ.). պետությունները պարտավոր են ձեռնարկել միջոցներ, որոնց արդյունքում կապահովեն իրենց իրավազորության ներքո գտնվող անձանց՝ խոշտանգման և անմարդկային կամ նվաստացուցիչ վերաբերմունքի կամ պատժի չենթարկվելու իրավունքը (ՄԻԵԿ–ի 3–րդ հոդված)՝ ներառյալ մասնավոր անձանց կողմից: Այնուհանդերձ, ՄԻԵԿ–ի 3–րդ հոդվածից չի բխում պոզիտիվ պարտավորություն, որի շրջանակում պատասխանող պետությունը պարտավոր կլիներ խոստանալ, որ քրեական հետապնդում չի իրականացնի գանգատաբերի ամուսնու նկատմամբ, եթե վերջինս գանգատաբերին օգներ ինքնասպանություն գործել, կամ օրինական հնարավորություն ընձեռել օգնությամբ ինքնասպանության որևէ այլ ձևի համար:

Փրայսն (Price–***ն***) ***ընդդ***. ***Միացյալ Թագավորության*** (վճիռ՝ 10 հուլիս, 2001 թ.). թեպետ չկային գանգատաբերին նվաստացնելու կամ ստորացնելու հասցեական դիտավորությունը հաստատող ապացույցներ, ՄԻԵԴ–ը համարեց, որ ծանր հաշմանդամություն ունեցող անձին վտանգի աստիճան ցուրտ պայմաններում կալանավորելու պարագայում, երբ ծագում էր վերքերի առաջացման հնարավորություն, երբ նրա մահճակալը չափազանց կոշտ էր կամ անհասանելի, և երբ նա չէր կարող զուգարան գնալ կամ մաքուր մնալ առանց մեծագույն դժվարություն հաղթահարելու, ՄԻԵԿ–ի 3–րդ հոդվածին հակասող նվաստացուցիչ վերաբերմունք էր:

Ռ. Ռ.–ն (R. R.–***ն***) ***և այլք ընդդ. Հունգարիայի*** (վճիռ՝ 4 դեկտեմբեր, 2012 թ.). վկաների պաշտպանության պաշտոնական ծրագրից ընտանիքին՝ ներառյալ երկու անչափահասներին դուրս թողնելն այն հիմքով, որ բանտում գտնվող հայրը կապ էր պահպանել հանցավոր խմբերի հետ, համարվեց ՄԻԵԿ–ի 2–րդ՝ կյանքի իրավունքին վերաբերող հոդվածի խախտում:

Ռելոլդն (Renolde–***ն***) ***ընդդ. Ֆրանսիայի*** (վճիռ՝ 16 հոկտեմբեր, 2008 թ.). բոլոր բանտարկյալներն ունեն մարդու արժանապատվությանը համատեղելի կալանավորման պայմանների իրավունք, որպեսզի նշանակված միջոցների ի կատար ածման ձևը և մեթոդը նրանց չպատճառեն կալանքին բնորոշ տառապանքի անխուսափելի մակարդակից ավելի մեծ ծանրության տառապանք կամ դժվարություն: Բանտարկյալների առողջությունից զատ՝ անհրաժեշտ է նաև համարժեքորեն ապահովել նրանց բարօրությունը՝ հաշվի առնելով ազատազրկման գործնական պահանջները: Բանտարկյալները, ում մասին հայտնի է, որ նրանք ունեն հոգեկան ծանր խանգարում և ունեն ինքնասպանության ռիսկ, նրանց պայմաններին համապատասխան հատուկ միջոցների կարիք ունեն, որոնցով կապահովվի մարդավայել վերաբերմունքի պահանջների բավարարումը: 45 օր ժամկետով պատժախցում պահելը համատեղելի չէ վերաբերմունքի այն չափանիշներին, որոնք պահանջվում են հոգեկան հիվանդություն ունեցող անձի նկատմամբ, և առաջացնում են անմարդկային և նվաստացուցիչ վերաբերմունք և պատիժ:

Ռենոլդն (Renolde–***ն***) ***ընդդ. Ֆրանսիայի*** (վճիռ՝ 16 հոկտեմբեր, 2008 թ.). ՄԻԵԿ–ի 2–րդ հոդվածը պետության համար ոչ միայն պարտավորություն է սահմանում՝ ձեռնպահ մնալու կյանքից դիտավորյալ և անօրինական կերպով զրկելուց, այլև համապատասխան քայլեր ձեռնարկելով՝ երաշխավորելու իր իրավազորության ներքո գտնվող անձանց կյանքը: Հստակ սահմանված որոշ հանգամանքներում ՄԻԵԿ–ի 2–րդ հոդվածից կարող է բխել նաև պահանջ, որ իշխանությունները, պոզիտիվ պարտավորության շրջանակում կանխարգելիչ հրատապ միջոցներ ձեռնարկելով, պաշտպանեն անձին մեկ այլ անձից, իսկ որոշ հանգամանքներում՝ հենց իրենից: Հատուկ պաշտպանության անհրա-

ժեշտություն է առաջացնում հոգեկան խանգարում ունեցող անձանց խոցելիությունը: Դա էլ ավելի կիրառելի է, երբ հոգեկան ծանր խանգարում ունեցող բանտարկյալը տևական ժամկետով տեղավորվում է մենախցում կամ պատժախցում, ինչպես սույն գործի դեպքում էր եղել, որն անխուսափելիորեն կազդի նրա հոգեկան վիճակի վրա, ընդ որում՝ հաշվի առնելով, որ դրանից կարճ ժամանակ առաջ նա կատարել էր ինքնասպանության փորձ:

Ռուպան (Rupa–***ն***) ***ընդդ***. ***Ռումինիայի*** (վճիռ՝ 16 դեկտեմբեր, 2008 թ.). որևէ ջանք չէր գործադրվել անձին բժշկական զննության ենթարկելու ուղղությամբ, թեպետ նա ունեցել էր հոգեկան խանգարում, և որևէ հատուկ միջոցներ չէին ձեռնարկվել վարքի խանգարումներ ունեցող անձի ձերբակալությանը բնորոշ ռիսկերից խուսափելու ուղղությամբ: Դատարանը նշեց նաև, որ ոստիկանությունում՝ միայն մետաղե նստարաններով կահավորված պահման սենյակում, գանգատաբերին կալանավորելն ակնհայտորեն նպատակահարմար չէր գանգատաբերի առողջական խնդիրներն ունեցող անձի կալանավորման համար: Դատարանը նշեց նաև, որ իշխանությունները պարտավոր էին հնարավորինս շուտ ապահովել հոգեբույժի կողմից նրա զննությունը, որպեսզի պարզվեր, թե արդյոք նրա հոգեբանական վիճակը համատեղելի է կալանավորման հետ, և թե ինչ թերապևտիկ միջոցներ է անհրաժեշտ իրականացնել: Ուստի տեղի էր ունեցել ՄԻԵԿ–ի 3–րդ հոդվածի խախտում:

Տ. Ն.–ն (S. N.–***ն***) ***ընդդ***. ***Շվեդիայի*** (վճիռ՝ 2 հուլիս, 2002 թ.). այդ վարույթում (անչափահասի նկատմամբ սեռական հանցագործություններին վերաբերող քրեական վարույթում) մեղադրյալի արդար դատաքննության իրավունքի երաշխավորման հարցը որոշելիս պետք է հաշվի առնել ենթադրյալ տուժողի անձնական և ընտանեկան կյանքի հարգման իրավունքը:

Սալդուզն (Salduz–***ն***) ***ընդդ***. ***Թուրքիայի*** (Մեծ պալատի վճիռ՝ 27 նոյեմբեր, 2008 թ.). արդար դատաքննության իրավունքի գործնական և արդյունավետ կիրառությունն ապահովելու համար կասկածյալները, հատկապես եթե նրանք խոցելի վիճակում են, պետք է առաջին իսկ հարցաքննության պահից ունենան փաստաբանի հետ հանդիպելու

հնարավորություն, «բացառությամբ, երբ յուրաքանչյուր գործի կոնկրետ հանգամանքների լույսի ներքո հիմնավորվում է, որ այդ իրավունքը սահմանափակելու համար գոյություն ունեն ծանրակշիռ պատճառներ»:

Սալմանն (Salman–***ն***) ***ընդդ***. ***Թուրքիայի*** (վճիռ՝ 27 հունիս, 2000 թ.). դաժան վերաբերմունքի կոնկրետ ձևի՝ խոշտանգում համարվելու փաստը որոշելիս պետք է հաշվի առնել ՄԻԵԿ–ի 3–րդ հոդվածում ներառված՝ խոշտանգման և անմարդկային կամ նվաստացուցիչ վերաբերմունքի միջև տարբերակումը: Խոշտանգումը ներառում է ծանր ցավ կամ տառապանք, նպատակի տարր և ցավը կամ տառապանքը դիտավորությամբ պատճառելը: Սույն գործով, հաշվի առնելով դաժան վերաբերմունքի բնույթը և աստիճանը (ֆալաքա և հարված կրծքավանդակին) և ապացույցների հիման վրա հնարավոր բավականին լուրջ մտահանգումն առ այն, որ դա տեղի է ունեցել հարցաքննության ընթացքում, ՄԻԵԴ–ը եզրակացրեց, որ այն պարունակել է շատ ծանր և դաժան տառապանք, որը կարող է բնութագրվել որպես խոշտանգում:

Սաուդն (Saoud–***ն***) ***ընդդ***. ***Ֆրանսիայի*** (վճիռ՝ 9 հոկտեմբեր, 2007 թ.). հոգեկան հիվանդություն ունեցող անձը մահացել էր ձերբակալվելու ընթացքում: Նրան 30 րոպե գետնին պահելու համար գործադրվել էր ծայրահեղ ուժ, որի հետևանքով նա խեղդամահ էր եղել: Պոզիտիվ պարտավորությունը ներառում է անհապաղ բուժօգնություն տրամադրելն այն դեպքում, երբ մահացու ելքից խուսափելու համար դա է պահանջում անձի առողջական վիճակը:

Սոյկան (Soykan–***ն***) ***ընդդ***. ***Թուրքիայի*** (վճիռ՝ 21 ապրիլ, 2009 թ.). կալանավորման ընթացքում կասկածյալները, հատկապես անչափահասները, ՄԻԵԿ–ի 6–րդ հոդվածի 3–րդ մասի (գ) կետի համաձայն, ունեն փաստաբանի հետ տեսակցելու իրավունք:

Ստեֆանուն (Stefanou–***ն***) ***ընդդ***. ***Հունաստանի*** (վճիռ՝ 22 ապրիլ, 2010 թ.). ՄԻԵԴ–ը համարեց, որ ֆիզիկական վնասն ուղեկցվել էր վախի, անհանգստության և նվաստացման զգացողություններով, որոնք պետք է որ գանգատաբերին պատճառեին այն աստիճանի ծանր տառապանք, որ ոստիկանության գործողությունները հնարավոր կլիներ համարել անմարդկային և նվաստացուցիչ: Ուստի ոստիկանության

գործողություններն առաջացրել էին ՄԻԵԿ–ի 3–րդ հոդվածի խախտում:

Տ.–ն (Т.–***ն***) ***ընդդ. Միացյալ Թագավորության*** (վճիռ՝ 16 դեկտեմբեր, 1999 թ.). հույժ կարևոր է, որպեսզի հանցագործության մեջ մեղադրվող երեխայի հետ առնչվելիս լիովին հաշվի առնվեն նրա տարիքը, հասունության աստիճանը և մտավոր և հուզական կարողությունները, և որպեսզի որոշակի քայլեր ձեռնարկվեն՝ ՄԻԵԿ–ի 6–րդ հոդվածի համաձայն ապահովելու նրա կողմից վարույթի ընկալումը և վարույթին նրա մասնակցությունը:

Տիմերգալիևն (Timergaliyev–***ն***) ***ընդդ. Ռուսաստանի*** (վճիռ՝ 14 հոկտեմբեր, 2008 թ.). գանգատաբերը ՄԻԵԿ–ի 6–րդ հոդվածի ներքո բողոքում էր, որ իրեն չի տրամադրվել լսողական սարք, որ պետության նշանակած փաստաբանն անարդյունավետ էր եղել, և որ ինքն իրավաբանական օգնություն չի ունեցել վերաքննիչ դատավարության ժամանակ: ՄԻԵԴ–ը համարեց, որ «հաշվի առնելով, որ գանգատաբերի լսողության խանգարումը սահմանափակել էր վարույթին արդյունավետ մասնակցելու նրա կարողությունը, արդարադատության շահերը պահանջում էին, որպեսզի արդար դատաքննություն ստանալու համար գանգատաբերը վերաքննիչ դատարանի վարույթում օգտված լիներ իր շահերը ներկայացնող իրավաբան ունենալու հնարավորությունից»: Ուստի տեղի է ունեցել ՄԻԵԿ–ի 6–րդ հոդվածի 1–ին մասի՝ ՄԻԵԿ–ի 6–րդ հոդվածի 3–րդ մասի (գ) կետի հետ համատեղ խախտում:

Տոդորովն (Todorov–***ն***) ***ընդդ. Ուկրաինայի*** (վճիռ՝ 12 հունվար, 2012 թ.). ՄԻԵԿ–ի 3–րդ հոդվածի համաձայն՝ պետական իշխանությունները պետք է անեն այն ամենը, ինչը ողջամտորեն կարելի է ակնկալել նրանցից՝ մինչդատական կալանքի ընթացքում կալանավորվածի առողջական վիճակի և տեսողության վատթարացումը կանխելու ուղղությամբ:

Տոդորովն (Todorov–***ն***) ***ընդդ. Ուկրաինայի*** (վճիռ՝ 12 հունվար, 2012 թ.). թեպետ գանգատաբերի մինչդատական կալանքի պատճառներն իրավաչափ էին, որոշակի ժամանակ անցնելուց հետո իշխանությունները պարտավոր էին առավել մանրամասն և թարմ պատճառներով հիմնավորել նրան ազատությունից զրկելը: Ավելին՝ հաշվի առնելով կալանքի տևողությունը և գանգատաբերի առողջական վիճակի վատ-

թարացումը՝ նրա կալանքի երկարացումը հիմնավորելու համար անհրաժեշտ էին բացառիկության աստիճան ծանրակշիռ պատճառներ: Դատարանը չէր կարող ընդունել, որ գործի ընդհանուր բարդությունը և գանգատաբերին ներկայացված մեղադրանքի ծանրությունը կարող էին «բավարար» պատճառներ համարվել նրան ավելի քան հինգ տարի արգելանքի տակ պահելու համար, ուստի տեղի էր ունեցել ՄԻԵԿ–ի 5–րդ հոդվածի 3–րդ մասի խախտում:

Վադելլն (Vaudelle–***ն***) ***ընդդ***. ***Ֆրանսիայի*** (վճիռ՝ 30 հունվար, 2001 թ.). պետություններին հայեցողության լայն միջակայք է վերապահված այն միջոցների ընտրության հարցում, որոնցով նրանք պետք է ապահովեն իրենց իրավական համակարգերի համապատասխանությունը ՄԻԵԿ–ի 6–րդ հոդվածի 1–ին մասի պահանջներին: Հաշվի առնելով ներկայացված ծանր մեղադրանքը, որոնց կապակցությամբ հարցեր էին առաջ գալիս՝ կապված գանգատաբերի հոգեկան առողջության հետ: Քրեական դատարանն, արդարությունից ելնելով, պարտավոր էր լրացուցիչ քայլեր ձեռնարկել նախքան գործի դատական քննությունը՝ ապահովելու համար ՄԻԵԿ–ի 6–րդ հոդվածով երաշխավորված իրավունքների արդյունավետ հասանելիությունը գանգատաբերի համար:

Վինսենթն (Vincent–***ն***) ***ընդդ***. ***Ֆրանսիայի*** (վճիռ՝ 24 հոկտեմբեր, 2006 թ.). համարժեք բուժօգնության բացակայությունը, իսկ ընդհանուր առմամբ նաև՝ հիվանդ անձին ոչ համարժեք պայմաններում պահելը, սկզբունքորեն կարող են ՄԻԵԿ–ի 3–րդ հոդվածի ներքո հավասարազոր լինել դաժան վերաբերմունքի:

Վեներսկին (Wenerski–***ն***) ***ընդդ***. ***Լեհաստանի*** (վճիռ՝ 20 հունվար, 2009 թ.). պետությունները պարտավոր են անձանց նկատմամբ վերաբերմունքի մեջ հաշվի առնել նրանց խոցելիությունը: Պետությունները հատուկ պարտավորություն ունեն՝ նրանց ընձեռելու համարժեք և անհրաժեշտ բուժօգնություն, հատկապես, երբ հաստատվել է, որ նման բուժօգնությունը հրատապորեն անհրաժեշտ է: Անգամ եթե չկան գանգատաբերին նվաստացնելու կամ ստորացնելու դիտավորության մասին վկայող փաստեր, հաշմանդամ անձին այնպիսի հաստատությունում կալանավորելը, որում նա չի կարող տեղաշարժվել և դուրս գալ իր խցից, ՄԻԵԿ–ի

3–րդ հոդվածի իմաստով համարվում է «նվաստացուցիչ վերաբերմունք»:

Իքս–ն (X–***ն***) ***ընդդ. Թուրքիայի*** (վճիռ՝ 9 հոկտեմբեր, 2012 թ.). սույն գործը վերաբերում էր նույնասեռական բանտարկյալի, ով այլ բանտարկյալների կողմից ահաբեկման և ճնշումների գործողությունների մասին բողոքելուց հետո ավելի քան 8 ամիս ընդհանուր տևողությամբ պահվել էր մենախցում: Դատարանը գտավ, որ կալանքի այդ պայմանները գանգատաբերին պատճառել էին հոգեկան և ֆիզիկական տառապանք, ինչպես նաև՝ իր արժանապատվությունից զրկված լինելու զգացողություն՝ այդ կերպ ՄԻԵԿ–ի 3–րդ հոդվածի (անմարդկային կամ նվաստացուցիչ վերաբերմունքի արգելքի) խախտմամբ առաջացնելով «անմարդկային կամ նվաստացուցիչ վերաբերմունք»: Դատարանը նաև վճռեց, որ գանգատաբերին մենախցում պահելու հիմնական պատճառը եղել էր ոչ թե նրան պաշտպանելը, այլև նրա սեռական կողմնորոշումը: Այդպես Դատարանը եզրակացրեց, որ տեղի էր ունեցել ՄԻԵԿ–ի 14–րդ հոդվածը (խտրականության արգելքը) խախտող խտրական վերաբերմունք:

Զարզիկին (Zarzycki–***ն***) ***ընդդ. Լեհաստանի*** (վճիռ՝ 12 մարտ, 2013 թ.). կալանավորվածի առողջական վիճակին կալանքի երկարացման համապատասխանությունը որոշելիս պետք է հաշվի առնել հետևյալ գործոնները. (ա) բանտարկյալի վիճակը, (բ) ցուցաբերվող խնամքի որակը, և (գ) թե արդյոք գանգատաբերը պետք է շարունակի մնալ կալանավորված՝ հաշվի առնելով նրա առողջական վիճակը: Սույն գործի շրջանակում, ֆիզիկական ծանր հաշմանդամություն ունեցող անձանց՝ նրանց առողջական վիճակին չհամապատասխանող պայմաններում կալանավորելը կամ բնական կարիքները հոգալու, լողանալու և հագնվելու կամ հանվելու հարցում նրանց խցակիցների օգնությունից կախվածության մեջ թողնելը առաջացրել էին նվաստացուցիչ վերաբերմունք:

Զոնթուլն (Zontul–***ն***) ***ընդդ. Հունաստանի*** (վճիռ՝ 17 հունվար, 2012 թ.). Զոնթուլը բռնաբարվել էր մահակով, և կարծիք կար, որ նա թիրախավորվել է իր սեռական կողմնորոշման պատճառով: ՄԻԵԴ–ը վերահաստատեց, որ պետության ներկայացուցչի կողմից կալանավորվածի բռնաբարությունը պետք է համարել դաժան վերաբերմունքի հատկապես ծանր և նողկալի դրսևորում՝ հաշվի առնելով, թե որքան

հեշտորեն կարող է հանցագործը շահագործել տուժողի խոցելի և փխրուն վիճակը: ՄԻԵԴ–ը հիշեցնում է նաև, որ բռնաբարությունը տուժողի մեջ թողնում է հոգեբանական խոր վերքեր, որոնք նույն կերպ չեն ամոքվում, ինչ ֆիզիկական և հոգեկան բռնության այլ ձևերի հետևանքները: Այդ վերաբերմունքը որպես այդպիսին, ՄԻԵԿ–ի 3–րդ հոդվածի համաձայն, եղել էր խոշտանգում:

Տպագրվել է «ԶԱՆԳԱԿ–97» ՍՊԸ–ի տպարանում
ՀՀ, 0051, Երևան, Կոմիտասի պող. 49/2, հեռ.՝ (+374 10) 23 25 28
էլ. փոստ՝ info@zangak.am, էլ. կայքեր՝ www.zangak.am, www.book.am
Ֆեյսբուքյան կայքէջ՝ www.facebook.com/zangak